



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՖԱՐՅԱՆ
ԱՇՈՏ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ՏԻՐԱՆ ԼՈՔՄԱԳՅՈԶՅԱՆ

ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ԳԻՐՔ Ա

Յոթերորդ լրամշակված հրատարակություն

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 811.512.161(075.8)
ԳՄԴ 81.2(5Թու)g73
Ս 300

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԵԼ Է
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ՈՐՊԵՍ ԴԱՍԱԳԻՐՔ ԲՈՒՀԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

Հեղինակները դասագրքի յոթերորդ հրատարակությունը նվիրում են Հայ առաքելական սուրբ Եկեղեցու Գուգարաց թեմի անմոռաց առաջնորդի՝ **գերաշնորհ տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի հիշատակին:**

Խմբագիրներ՝

բ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյան

Արժեքավոր դիտողությունների ու խորհուրդների համար հեղինակները շնորհակալություն են հայտնում դասագրքի գրախոսներին՝ **ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, պրոֆեսոր Ռուբեն Մաֆարյանին, պրոֆեսոր Ներսես Մկրտչյանին, պրոֆեսոր Արսեն Ավագյանին, դոցենտ Լուսինե Սահակյանին, պ.գ.թ., դոցենտ Գեղամ Բաղայանին:**

Ս 300

Մաֆարյան Ալեքսանդր

Թուրքերենի դասագիրք/ Ա. Մաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոքմագյոզյան; ԵՊՀ; Խմբ.՝ Ռ. Մելքոնյան, Ա. Սարգսյան.- Յոթերորդ լրամշակված հրատարակություն. - Եր.: ԵՊՀ հրատարակչություն, 2021.
Գիրք Ա.- 326 էջ:

Դասագիրքը նախատեսված է Հայաստանի բուհերի տարբեր ֆակուլտետներում թուրքերենի դասավանդման համար: Դասագրքում ընդգրկված 15 դասերում, որոնցից յուրաքանչյուրում լուսաբանվում են թուրքերենի հնչյունաբանության, քերականության, բառագիտության հարցերը, ներկայացվում են համապատասխան բնագրեր, առածներ ու ասացվածքներ: Ներառված են տարաբնույթ տեքստեր և վարժություններ: Դասագիրքն ընդգրկում է նաև թուրքերեն-հայերեն լեզվաբանական գիտաբառերի, ուսումնական, հապավումների բառարաններ, աշխարհագրական անունների ցանկ:

ՀՏԴ 811.512.161(075.8)
ԳՄԴ 81.2(5Թու)g73

ISBN 978-99941-0-684-4

© ԵՊՀ հրատ., 2021
© ՍԱՖԱՐՅԱՆ Ա., 2021
© ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Ա., 2021
© ԼՈՔՄԱԳՅՈՋՅԱՆ Տ., 2021

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

(Թուրքերենի դասագրքի յոթերորդ հրատարակության առթիվ)

Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում թե՛ խորհրդային, թե՛ հատկապես անկախության տարիներին հիրավի մեծ աշխատանք է տարվել արևելյան տարբեր լեզուների, Արևելքի երկրների պատմության ու մշակույթի հիմնահարցերը լուսաբանող հայերեն դասագրքերի, ուսումնական ու մեթոդական ձեռնարկների ստեղծման ուղղությամբ: Նորանկախ Հայաստանում արևելագիտության ոլորտում դասագրքաստեղծ գործընթացը մեկնարկեց թուրքերենի՝ հայ իրականության մեջ առաջին բուհական սույն դասագրքի լույսընծայմամբ: Դասագրքի համահեղինակներն են ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի բազմամյա վարիչ, պրոֆեսոր Ալեքսանդր Սաֆարյանը, նույն ամբիոնի վաստակաշատ դոցենտ Աշոտ Սողոմոնյանը և ճանաչված պոլսահայ լրագրող Տիրան Լոքմագոյանը: Հետագայում դասագիրքը լրամշակվել ու բազմիցս վերահրատարակվել է հայաստանյան առաջատար հրատարակչությունների կողմից՝ դառնալով մեր թուրքագետ, ինչպես նաև միջազգայնագետ ու պատմաբան ուսանողների սեղանի գիրքը: Ներկայացվող դասագրքի մասին ավելի քան երկու տասնյակ դրական գրախոսություններ են հրատարակվել Հայաստանի ու Թուրքիայի ամենատարբեր պարբերականներում, երախտագիտությամբ ենք հիշում, որ գրքի ստեղծումն առաջիններից մեկը ողջունեց համահեղինակների վաղեմի բարեկամը՝ երջանկահիշատակ Հրանտ Դինքը՝ համապատասխան հողված հրատարակելով «Ակոսում»: Գրախոսները հետևողականորեն շեշտել են, որ դասագիրքը շարադրելիս հաշվի են առնվել հայ ուսանողներին թուրքերենի դասավանդման առանձնահատկությունները:

Մեր թյուրքագետների և օսմանագետների կողմից հրատարակվել են նաև «Ադրբեջաներենի դասագիրքը» (Լիլիթ Մովսիսյան), «Թուրքիայի Հանրապետության պատմություն» դասագիրքը (Ռուբեն Սաֆրաստյան, Ռուբեն Մելքոնյան, Վահրամ Տեր-Սաթնոսյան, Արթուր Դումանյան, Հակոբ Չաքրյան, Վարուժան Գեղամյան, Անուշ Հովհաննիսյան), «Թուրքական գրականության պատմություն (XX դարի 20-ական թթ. - XXI դարի սկիզբ)» (Ռուբեն Մելքոնյան), «Օսմաներենի դասագիրքը» (Անի Սարգսյան Ալեքսանդր Սաֆարյան, Լուսինե Սահակյան): ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում հաջողությամբ փորձարկվել ու տարիներ շարունակ գործածվում են նաև մեր ականավոր արևելագետների՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի «Արաբական երկրների պատմություն, հատոր II, Օսմանյան տիրապետության շրջան, 1516-1918 թթ.» գիրքը, պրոֆեսոր Վահան Բայբուրդյանի «Օսմանյան կայսրության պատմությունը», ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Ռուբեն Սաֆրաստյանի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանի և այլոց հեղինակած ուսումնամեթոդական ձեռնարկները: Անսքող հպարտությամբ կարող ենք արձանագրել, որ մեր արևելագետների քրտնաջան աշխա-

տանքի արդյունքում ընդմիջտ անցյալում է այն ամոթալի իրողությունը, որ հայ ուսանողներին մատուցվում էր «Լենին-Աթաթուրք» դաշինքով կամ մարտնչող աթեիզմով պարտադրված, մեր ազգային ու կրոնական արժանապատվությունն ակնհայտորեն ոտնահարող դրույթներ պարունակող գրականություն: Միաժամանակ աներկբա է, որ մեր առաջատար մասնագետներն էլ ավելի մեծ նվիրումով պիտի շարունակեն ջանքեր գործադրել միջազգային չափորոշիչներով մրցունակ հայերեն ուսումնամեթոդական գրականության ստեղծման ուղղությամբ (մասնավորապես հաշվի առնելով նաև հեռավար կրթության արդի հրամայականները):

Օգտվելով առիթից՝ նորանոր ստեղծագործական նվաճումներ եմ մաղթում սիրելի համալսարանական գործընկերներին և արևելագիտության ոլորտ ոտք դնող ուսանողներին:

**ՌՈՒԲԵՆ
ՄԵԼՔՈՆՅԱՆ**

**ԵՊՀ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ,
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ**

«Թուրքերենի դասագրքի» վեցերորդ հրատարակության առթիվ

Նորանկախ Հայաստանում զգալի դասագրքաստեղծ աշխատանք է կատարվել և կատարվում: ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի բազմամյա արդյունավետ համագործակցության արդյունքում հրատարակվել են բազմաթիվ դասագրքեր և ուսումնամեթոդական ձեռնարկներ, հատկանշական է, որ առաջին անգամ հայերեն հրատարակվել են թուրքերենի, ադրբեջաներենի և Թուրքիայի պատմության բուհական դասագրքերը:

Ակնհայտ է, որ «Թուրքերենի դասագրքի» առաջին հատորի սույն՝ լրամշակված վեցերորդ հրատարակությունը ամեննին էլ վերջինը չի լինելու, միաժամանակ կցանկանայի հորդորել համահեղինակներին արագացնել բակալավրիատի ավարտական կուրսի ու մագիստրատուրայի ուսանողների համար բացառիկ կարևորություն ներկայացնող դասագրքի երկրորդ և երրորդ հատորների ստեղծման աշխատանքը:

Հաջողություն եմ մաղթում համալսարանական իմ սիրելի գործընկերներին և թուրքագետ-ուսանողներին:

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ, ՊՐՈՖԵՍՈՐ

«Թուրքերենի դասագրքի» հինգերորդ հրատարակության առթիվ

ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ալեքսանդր Սաֆարյանի, նույն ամբիոնի դոցենտ Աշոտ Սողոմոնյանի և պոլսահայ մտավորական Տիրան Լոքմազյոզյանի հեղինակած թուրքերենի բուհական դասագիրքը նմանօրինակ առաջին գիրքն է հայ իրականության մեջ և ներկայումս օգտագործվում է հայաստանյան ու սփյուռքահայ բոլոր այն ուսումնական հաստատություններում, որտեղ դասավանդվում է թուրքերենը: Շուրջ մեկ տասնամյակի ընթացքում վերոհիշյալ դասագրքի հինգ անգամ լույսընծայումը տարբեր հրատարակչությունների կողմից, ինչպես նաև ավելի քան երկու տասնյակ դրական գրախոսությունների հրապարակումը Հայաստանում ու արտերկրում, թուրքերենին անդրադարձող մեր լեզվաբանների աշխատություններում համապատասխան հղումների քանակը, անշուշտ, խոսում են ներկայացվող գրքի բացառիկ հաջողության մասին:

Ողջունելի է, որ հեղինակային խումբը հետևողականորեն շարունակել է լրամշակել դասագիրքը, հարստացնել նրանում ընդգրկված տարաբնույթ բառարանները և աշխարհագրական անունների ցանկը:

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնում շարունակվում են աշխատանքները նաև «Թուրքերենի դասագրքի» երկրորդ և երրորդ հատորների ստեղծման ուղղությամբ:

Հաջողություն եմ մաղթում թուրքագետ-դասախոսներին և արևելագիտության պատասխանատու ոլորտում առաջին քայլերն անող մեր սիրելի ուսանողներին:

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՄԱՆԿԱՎԱՐԺ, ՊՐՈՖԵՍՈՐ

ԹՈՒՐԷՐԵՆԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Տպագիր	Չեռագիր	Տպագիր	Չեռագիր	Տպագիր	Չեռագիր
A a	<i>A a</i>	I i	<i>I i</i>	R r	<i>R r</i>
B b	<i>B b</i>	İ i	<i>İ i</i>	S s	<i>S s</i>
C c	<i>C c</i>	J j	<i>J j</i>	Ş ş	<i>Ş ş</i>
Ç ç	<i>Ç ç</i>	K k	<i>K k</i>	T t	<i>T t</i>
D d	<i>D d</i>	L l	<i>L l</i>	U u	<i>U u</i>
E e	<i>E e</i>	M m	<i>M m</i>	Ü ü	<i>Ü ü</i>
F f	<i>F f</i>	N n	<i>N n</i>	V v	<i>V v</i>
G g	<i>G g</i>	O o	<i>O o</i>	Y y	<i>Y y</i>
Ğ ğ	<i>Ğ ğ</i>	Ö ö	<i>Ö ö</i>	Z z	<i>Z z</i>
H h	<i>H h</i>	P p	<i>P p</i>		

Ձայնավորների մասին

Թուրքերենն ունի ութ ձայնավոր՝ **a, ı, o, u, e, i, ö, ü**:

a, o, e, ö - ձայնավորները (ըստ բերանի բացվածքի աստիճանի) լայն են, իսկ **ı, u, i, ü** - ձայնավորները՝ նեղ:

Թուրքերենին բնորոշ է ձայնավորների ներդաշնակությունը:

Բաղաձայնների մասին

Թուրքերենում բաղաձայնները 21-ն են: Բաղաձայնները լինում են ձայնեղ (**b, c, d, g, ğ, j, l, m, n, r, v, y, z /13/**) և խուլ (**ç, f, h, k, p, s, ş, t /8/**): Խուլ բաղաձայնները հիշելու համար նախընտրելի է իմանալ հետևյալ բառերը՝ *şah* (շահ), *kafes* (վանդակ), *peçete* (անձեռոցիկ): - **ç, k, p, t** - բաղաձայնները հնչյունափոխվում են համապատասխանաբար - **c, ğ, b, d** - բաղաձայնների (**ç > c, k > ğ, p > b, t > d**), եթե բառին կցվում է ձայնավոր հնչյունով սկսվող ածանց, իսկ **-h, f, s, ş** - խուլ բաղաձայնները չեն հնչյունափոխվում: Եթե խուլ բաղաձայնով վերջացող բառին կցվում է ձայնեղ բաղաձայնով սկսվող ածանց, ապա խուլ բաղաձայնի ազդեցությամբ այդ ձայնեղ բաղաձայնը նույնպես խլանում է (բաղաձայնների առնմանություն):

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ - BİRİNCİ DERS

§ 1 Ցուցական դերանուններ - Gösterme Adılları (Gösterme Zamiri)

Ցուցական դերանուններ են.

Bu - այս, սա şu - այդ, դա o - այն, նա:

Իբրև որոշիչ՝ ցուցական դերանունը դրվում է որոշյալից առաջ:

- Օր. bu adam - այս մարդը
 şu kız - այդ աղջիկը
 o kalem - այն մատիտը
 o bahçe - այն այգին
 şu masa - այդ սեղանը

Իբրև ենթակա՝ ցուցական դերանունը դրվում է գոյական անունով արտահայտված ստորոգյալից առաջ:

§ 2 Պարզ համառոտ նախադասություն (եզ. թիվ, 3-րդ դեմք)

Թուրքերենում պարզ համառոտ նախադասության մեջ նախ դրվում է ենթական, ապա՝ ստորոգյալը: Ներկա ժամանակով դրված ստորոգյալով պարզ նախադասությունը կազմվում է ստորոգման - dir - ածանցի միջոցով, որը կցվում է անվանը: Ստորոգման ածանցը շեշտ չի կրում: Համաձայն ձայնավորների ներդաշնակության կանոնի, կախված ստորոգյալի անվանական բաղադրիչի վերջին վանկի ձայնավորից՝ ածանցի ձայնավորը կարող է ունենալ հնչյունական չորս տարբերակ՝ dir, dır, dür, dür:

Ստորոգման ածանցի ձայնավորի կախվածությունը անվան վերջին վանկի ձայնավորից:

Անվան վերջին վանկի ձայնավորը	Ստորոգման ածանցի ձայնավորը	3-րդ դեմքի ստորոգման ածանցը
a , ı	ı	dır
e , i	i	dir
o , u	u	dür
ö , ü	ü	dür

- Օր. ա) Անուններ, որոնց վերջին վանկի ձայնավորը « a » կամ « ı » է:

Bu masadır. - Սա սեղան է:

Bu kapıdır. - Սա դուռ է:

- բ) Անուններ, որոնց վերջին վանկի ձայնավորը « e » կամ « i » է:

Şu penceredir. - Դա պատուհան է:

Bu şehirdir. - Սա քաղաք է:

զ) Անուններ, որոնց վերջին վանկի ձայնավորը « o » կամ « u » է:

Şu yoldur. - Դա ճանապարհ է:

O kutudur. - Այն տուփ է:

դ) Անուններ, որոնց վերջին վանկի ձայնավորը « ö » կամ « ü » է:

Bu gözdür. - Սա աչք է:

O üzümdür. - Այն խաղող է:

§ 3 Ստորոգման ածանցների առաջին բաղաձայնի խլացումը (d - t հնչյունափոխություն)

Եթե - dir, dir, dur, dür - ածանցները կցվում են այնպիսի բառերի, որոնք վերջանում են խուլ բաղաձայններով (ç, f, h, k, p, s, ş, t), ածանցի « d » հնչյունը խլանալով փոխվում է « t »-ի:

Օր. Bu kitaptır. - Սա գիրք է:
Şu mektuptur. - Դա նամակ է:
O çocuktur. - Նա երեխա է:

§ 4 Հարցական դերանուններ (Ne? - Kim?)

Թուրքերենի հարցական դերանուններից են - ne? - ի՞նչ և kim? - ո՞վ բառերը: Եթե - ne? - և - kim? - բառերը կատարում են հարցական նախադասության ստորոգյալի շարահյուսական դեր, ապա նրանք ստանում են ստորոգման ածանց:

Օր. Bu nedir? - Սա ի՞նչ է:
Bu kimdir? - Սա ո՞վ է:

§ 5 Ներկա ժամանակով դրված ստորոգյալով պարզ նախադասության ժխտական և հարցական ձևերը

Ներկա ժամանակով դրված ստորոգյալով պարզ անվանական նախադասության ժխտականը կազմվում է «değil» բառի միջոցով: «değil»-ը դրվում է այն բառից հետո, որին վերագրվում է, սակայն միասին չի գրվում, չի արտաբերվում և չի ենթարկվում ձայնավորների ներդաշնակության կանոնին: Շեշտն ընկնում է «değil» բառի վերջին վանկի ձայնավորի վրա: Ստորոգման ածանցը կցվում է «değil» բառին և ունի հնչյունական միայն մեկ ձև՝ dir:

Օր. Bu oda değildir. - Սա սենյակ չէ:
Şu duvar değildir. - Դա պատ չէ:
Bu pencere değildir. - Սա պատուհան չէ:
Şu palto değildir. - Դա վերարկու չէ:
O kutu değildir. - Այն տուփ չէ:

Ստորոգման ածանցը կարող է դուրս ընկնել:

Օր. Bu masa değil(dir). - Սա սեղան չէ:

Այնպիսի նախադասություններում, ինչպես՝ Bu kız deşil, ođlandı. - Սա աղջիկ չէ, տղա է, - «dir» ստորոգման ածանցը կցվում է վերջին ստորոգյալին:

Պարզ նախադասության հարցական ձևը կազմվում է «mı» հարցական մասնիկի միջոցով: Հարցական մասնիկը շեշտ չի կրում: Ենթարկվելով ձայնավորների ներդաշնակության կանոնին՝ հարցական մասնիկը կարող է ունենալ հնչյունական չորս տարբերակ՝ mı, mi, mu, mü: Մասնիկը չի գրվում այն բառի հետ միասին, որին վերագրվում է, սակայն արտաբերվում է միասին: Ստորոգման «dir» ածանցը կցվում է հարցական մասնիկին:

Հարցական - mı - մասնիկի փոփոխությունը բառի վերջին վանկի ձայնավորի ազդեցությամբ.

Բառի վերջին վանկի ձայնավորը	Հարցական մասնիկի ձայնավորը	Հարցական մասնիկը
a , ı	ı	mı
e , i	i	mi
o , u	u	mu
ö , ü	ü	mü

Օր. ա) Անուններ, որոնց վերջին վանկի ձայնավորը « a » կամ « ı » է:

Bu oda mıdır? - Սա սենյա՞կ է:

O kapı mıdır? - Այն դու՞ռ է:

բ) Անուններ, որոնց վերջին վանկի ձայնավորը « e » կամ « i » է:

Şu defter midir? - Ղա տե՞տր է:

O Ermeni midir? - Նա հա՞յ է:

գ) Անուններ, որոնց վերջին վանկի ձայնավորը « o » կամ « u » է:

Şu top mudur? - Ղա գնդա՞կ է:

O Rus mudur? - Նա ռու՞ս է:

դ) Անուններ, որոնց վերջին վանկի ձայնավորը « ö » կամ « ü » է:

Bu çöp müdür? - Սա ա՞ղբ է:

O Türk müdür? - Նա թու՞րք է:

Եթե ստորոգյալն արտահայտվում է հարցական դերանվամբ, ապա «mı» հարցական մասնիկը չի կիրառվում:

Օր. Ahmet kimdir? - Ահմեդն ո՞վ է:

Bu nedir? - Սա ի՞նչ է:

Հարցական ձևի կիրառության դեպքում 3-րդ դեմքի եզակի թվի ստորոգման վերջածանցը կարող է դուրս մնալ:

Օր. Bu çiçek mi(dir)? - Սա ծաղի՞կ է:

Բառարան - Sözlük

adam (insan) - մարդ	kim? - ո՞վ
amele (işçi) - բանվոր	kitap (-bi) - գիրք
az - քիչ	kol - թև
bahçe - այգի	kötü (fena) - վատ
beyaz (ak) - սպիտակ	köy - գյուղ
bina - շենք	köylü - գյուղացի
bu - սա, այս	kutu - տուփ
burun - քիթ	küçük (-ğü) - փոքր
büyük - մեծ	masa - սեղան
çiçek (-ği) - ծաղիկ	mektep (-bi) - դպրոց
çirkin - տգեղ	mektup (-bu) - նամակ
çocuk (-ğu) - երեխա	merhaba - բարև (ծեզ)
çok (çoğu) - շատ	ne? - ի՞նչ
çöp (çöprü) - աղբ	o - նա, այն
defter - տետր	oda - սենյակ
duvar - պատ	oğlan (oğul) - տղա
Ermeni - հայ	okul - դպրոց
ev - տուն	paltó - վերարկու
evet - այո	pencere - պատուհան
gemi - նավ	Rus - ռուս
göl - լիճ	sandalye - աթոռ
göz - աչք	sarı - դեղին
günaydın - բարի լույս	şu - դա, այդ
güzel - գեղեցիկ	tavan - առաստաղ
hasta - հիվանդ	tebeşir - կավիճ
hayır - ոչ	tren - գնացք
hokka - թանաքաման	Türk (-kü) - թուրք
iyi - լավ	tütün - ծխախոտ (թուրուն)
kadın - կին	uzun - երկար
kalem - մատիտ, գրիչ	ütü - արդուկ
kapı - դուռ	üzüm - խաղող
kardeş - եղբայր	yoI - ճանապարհ
kısa - կարճ	yoIcu - ճանապարհորդ
kız - աղջիկ	yük (-kü) - բեռ
kızkardeş - քույր (կրտսեր)	

Վարժություններ - Alıştırılmalar

1. Կարդալ և թարգմանել հայերեն:

Bu masadır. Şu sandalyedir. O kapıdır. Bu nedir? Bu mekteptir. O nedir? O defterdir. Bu kitap mıdır? Evet, bu kitaptır. Bu nedir? Bu duvardır. O hokka mıdır? Hayır, o hokka değildir. Bu ev büyük müdür? Hayır, bu ev küçüktür. O kimdir? O Arsen'dir. Bu Orhan mıdır? Hayır, bu Orhan değildir, bu Selim'dir. Şu adam kimdir? Şu adam Ermeni'dir. O Türk müdür? Hayır, o Rus'tur. Şu tren midir? Hayır, şu tren değildir, gemidir. Ahmet amele midir? Evet, o ameledir. Bu çocuk kız mıdır? Hayır, bu çocuk oğlandır. O küçük

çocuk kimdir? O küçük çocuk Aslan'dır. Bu mektup mudur? Evet, bu mektuptur. O kadın güzel midir? Hayır, o kadın güzel değildir. Bu büyük bina okul mudur? Evet, bu büyük bina okuldur. O kız hasta mı? Hayır, o kız hasta değil. Armen işçi değil(dir).

2. Լրացնել բաց թողնված ստորոգման ածանցները և թարգմանել:

- Şu göl... . _____
O okul... . _____
Ahmet amele... . _____
Bina büyük... . _____
Çocuk küçük... . _____
Bu ne... ? _____
O kim... ? _____
Şu duvar... . _____
Duvar sarı... . _____
Yol kısa... . _____
Şu kitap... . _____
O defter çok iyi... . _____
Şu hokka beyaz... . _____
Bu kız Ermeni'... . _____
O adam Rus'... . _____
O hasta... . _____

3. Նշված նախադասությունները դարձնել ժխտական և հարցական:

- Bu odadır. _____
Şu adam Ermeni'dir. _____
O Türk'tür. _____
Bu çocuk kızdır. _____
Aram ameledir. _____
Bu mektuptur. _____
O adam hastadır. _____
O kadın güzeldir. _____
Bu Arsen'dir. _____
Şu trendir. _____
Bu büyük bina okuldur. _____
Bu ev büyüktür. _____
O kız küçüktür. _____

4. Հետևյալ նախադասությունները թարգմանել թուրքերեն:

Սա սեղան է: Դա պատ է: Նա աղջիկ է: Այս երեխան գեղեցիկ է: Այն գի՞րք է: Ո՛չ, այն գիրք չէ, տետր է: Պատը դեղին է: Այն այգին մեծ է: Սա նա՞վ է: Ո՛չ, սա նավ չէ, գնացք է: Նա ո՞վ է: Նա Արմենն է: Այդ տունը մե՞ծ է: Ո՛չ, այդ տունը մեծ չէ, փոքր է: Այն մարդը բանվոր չէ: Այդ աղջիկը հիվանդ է: Այս տղան Ահմեդն է: Գյունալը թուրք է: Իվանը ռուս է: Արամը հայ է: Սա նամակ չէ:

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ - İKİNCİ DERS

§ 6 Անձնական դերանուններ - Kişi Adıları

ben - ես

biz - մենք

sen - դու

siz - դուք

o - նա

onlar - նրանք

§ 7 Ներգոյական (տեղի) հոլով - Kalma Durumu

Ներգոյական հոլովը կազմվում է - da, de - և - ta, te - (խուլ բաղաձայնով վերջացող գոյականներից հետո) ածանցների միջոցով: Ներգոյական հոլովը պատասխանում է - որտե՞ղ, ո՞ւմ մոտ, ինչո՞ւմ և ե՞րբ հարցերին: Շեշտն ընկնում է հոլովական ածանցի վրա:

Օր. oda - սենյակ
ev - տուն
sokak - փողոց
mektep - դպրոց
kim? - ո՞վ
saat - ժամ

odada - սենյակում
evde - տանը
sokakta - փողոցում
mektepte - դպրոցում
kimde? - ու՞մ մոտ
saatte - ժամին (սակայն՝
saat beşte - ժամը հինգին)

ben - ես
sen - դու
o - նա
biz - մենք
siz - դուք
onlar - նրանք

bende - ինձ մոտ
sende - քեզ մոտ
onda - նրա մոտ
bizde - մեզ մոտ
sizde - ձեզ մոտ
onlarda - նրանց մոտ

§ 8 Հոգնակի թիվ - Çoğul

Հոգնակի թիվը կազմվում է - lar, ler - շեշտակիր ածանցների միջոցով: Ձայնավորների ներդաշնակության կանոնի համաձայն, կախված բառի վերջին վանկի ձայնավորից՝ հոգնակերտ ածանցի ձայնավորը կարող է փոփոխվել:

Var - և - yok-ի հետ կարող է չկիրառվել ստորոգման ածանց, հատկապես բանավոր խոսքում:

- Օր. Odada kim var? - Սենյակում ո՞վ կա:
 Bu nehirde çok balık var. - Այս գետում շատ ձուկ կա:
 Bu mağazada gömlek yok, çorap var.
 Այս խանութում վերնաշապիկ չկա, գուլպա կա:

Ստորոգյալի հարցական ձևը կազմվում է - mi - հարցական մասնիկի օգնությամբ, որը տվյալ դեպքում ունի հնչյունական մեկ տարբերակ՝ mi (...var mi?):

- Օր. Evde ekmek var mı(dır)? - Տանը հաց կա՞:
 Sokakta taksi var mı(dır)? - Փողոցում տաքսի կա՞:
 Odada kimse var mı(dır)? - Սենյակում ինչ-որ մեկը կա՞:

Հարցական մասնիկը - yok-ի հետ կազմում է հարցական-ժխտական ձևը: Տվյալ դեպքում հարցական մասնիկն ունի հնչյունական մեկ տարբերակ՝ mu (... yok mu?):

- Օր. Sende para yok mu(dur)? - Քեզ մոտ փող չկա՞:
 Sokakta taksi yok mu(dur)? - Փողոցում տաքսի չկա՞:
 Bu köyde doktor yok mu(dur)? - Այս գյուղում բժիշկ չկա՞:

§ 10 Ստացական դերանուններ - İyelik Adıları

Ստացական դերանուններ կազմվում են անձնական դերանուններից և ցույց են տալիս պատկանելիություն:

- | | |
|----------------|-----------------|
| Օր. benim - իմ | bizim - մեր |
| senin - քո | sizin - ձեր |
| onun - նրա | onların - նրանց |

§ 11 Պատկանելիության ածանցներ - İyelik Eki

Պատկանելիությունն արտահայտվում է դերանունների և պատկանելիության հատուկ ածանցների միջոցով: Ածանցները գրվում և արտաբերվում են անվան հետ, ենթարկվում են ձայնավորների ներդաշնակության կանոնին և կրում են շեշտը:

Ձայնավոր հնչյունով վերջացող հիմքերից հետո պատկանելիության ածանցները հետևյալն են.

Դեմք	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
Առաջին	- m	- mız (miz, muz, müz)
Երկրորդ	- n	- nız (niz, nuz, nüz)
Երրորդ	- sı (si, su, sü)	- ları, leri

- | | |
|-------------------------------------|--|
| Օր. (Benim) babam - Իմ հայրը, հայրս | (Bizim) babamız - Մեր հայրը |
| (Senin) baban - Քո հայրը, հայրդ | (Sizin) babanız - Ձեր հայրը |
| (Onun) babası - Նրա հայրը | (Onların) babası - Նրանց հայրը
(babaları) (հայրերը) |

(Benim) annem - Իմ մայրը, մայրս
 (Senin) annen - Քո մայրը, մայրդ
 (Onun) annesi - Նրա մայրը

(Bizim) annemiz - Մեր մայրը
 (Sizin) anneniz - Ձեր մայրը
 (Onların) annesi - Նրանց մայրը
 (anneleri) (մայրերը)

(Benim) komşum - Իմ հարևանը, հարևանս
 (Senin) komşun - Քո հարևանը, հարևանդ
 (Onun) komşusu - Նրա հարևանը

(Bizim) komşumuz - Մեր հարևանը
 (Sizin) komşunuz - Ձեր հարևանը
 (Onların) komşusu - Նրանց հարևանը
 (komşuları) (հարևանները)

(Benim) ütüm - Իմ արդուկը, արդուկս
 (Senin) ütün - Քո արդուկը, արդուկդ
 (Onun) ütüsü - Նրա արդուկը

(Bizim) ütümüz - Մեր արդուկը
 (Sizin) ütünüz - Ձեր արդուկը
 (Onların) ütüsü - Նրանց արդուկը
 (ütüleri) (արդուկները)

Բաղաձայնով վերջացող հիմքերից հետո պատկանելիության ածանցները հետևյալն են.

Դեմք	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
Առաջին	- im (im, um, üm)	- imiz (imiz, umuz, ümüz)
Երկրորդ	- in (in, un, ün)	- iniz (iniz, unuz, ünüz)
Երրորդ	- ı (ı, u, ü)	- ları, leri

Օր. (Benim) atım - Իմ ձին, ձիս
 (Senin) atın - Քո ձին, ձիդ
 (Onun) atı - Նրա ձին

(Bizim) atımız - Մեր ձին
 (Sizin) atınız - Ձեր ձին
 (Onların) atı - Նրանց ձին
 (atları) (ձիերը)

(Benim) defterim - Իմ տետրը, տետրս
 (Senin) defterin - Քո տետրը, տետրդ
 (Onun) defteri - Նրա տետրը

(Bizim) defterimiz - Մեր տետրը
 (Sizin) defteriniz - Ձեր տետրը
 (Onların) defteri - Նրանց տետրը
 (defterleri) (տետրերը)

(Benim) topum - Իմ գնդակը, գնդակս
 (Senin) topun - Քո գնդակը, գնդակդ
 (Onun) topu - Նրա գնդակը

(Bizim) topumuz - Մեր գնդակը
 (Sizin) topunuz - Ձեր գնդակը
 (Onların) topu - Նրանց գնդակը
 (topları) (գնդակները)

(Benim) köyüm - Իմ գյուղը, գյուղս
 (Senin) köyün - Քո գյուղը, գյուղդ
 (Onun) köyü - Նրա գյուղը

(Bizim) köyümüz - Մեր գյուղը
 (Sizin) köyünüz - Ձեր գյուղը
 (Onların) köyü - Նրանց գյուղը
 (köyleri) (գյուղերը)

Քանի որ պատկանելիության ածանցները տարբերակվում են ըստ դեմքերի, ապա դերանունները կարող են բաց թողնվել (խոսակցական լեզվում առավելապես բաց են թողնվում): Խոսակցական լեզվում երբեմն հատկապես կարող է չստանալ պատկանելիության ածանց: Հոգնակի ձևի կիրառության դեպքում բառին նախ կցվում է հոգնակերտ, ապա պատկանելիության ածանցը:

Օր. Kardeşim - Իմ եղբայրը, եղբայրս
 Kardeşin - Քո եղբայրը, եղբայրդ
 Kardeşi - Նրա եղբայրը

Kardeşimiz - Մեր եղբայրը
 Kardeşiniz - Ձեր եղբայրը
 Kardeşleri - Նրանց եղբայրը
 (եղբայրները)

Bizim köy - Մեր գյուղը
Sizin ev - Ձեր տունը

Kitaplarım - Իմ գրքերը
Kardeşleriniz - Ձեր եղբայրները

§ 12 - Bir - բառի կիրառությունը

Թուրքերենում - bir - բառն ունի երեք իմաստ.

ա) Bir - 1 (որպես քանակական թվական)
bir masa - մեկ սեղան

բ) Bir - մեկ, մի (որպես անորոշության ցուցիչ, ինչպես անգլերենում a - an անորոշ հոդը)

bir masa - մի սեղան, ինչ-որ սեղան

O evde çok güzel bir kız var.

Այն տանը շատ գեղեցիկ (ինչ-որ, մի) աղջիկ կա:

գ) Bir - որակի կամ հատկանիշի ընդգծման (ուժեղացման) իմաստ, (եթե որվում է ածականի և գոյականի միջև):

güzel bir gömlek - շատ գեղեցիկ վերնաշապիկ

Mağazada güzel bir gömlek var.

Խանութում շատ գեղեցիկ վերնաշապիկ կա:

Բառարան - Sözlük

ad (isim) - անուն

ahbap (-bi) - ընկեր, ծանոթ

Alman - գերմանացի

Almanya - Գերմանիա

altı - վեց

ana, anne - մայր

araba - 1. կառք, սայլ 2. ավտոմեքենա

arkadaş - ընկեր

asker (er) - զինվոր

at - ձի

baba - հայր

balık (-ği) - ձուկ

başka (diğer) - ուրիշ, այլ

beş - հինգ

bir - մեկ

biraz - մի քիչ

burada (burası) - այստեղ

çanta - պայուսակ

çorap (-bi) - գուլպա

da (de) - էլ, նաև, որ, թող

daha - դեռ, ավելի, էլ

dar - նեղ

ders - դաս

dershane - դասարան

dıram - դրամ (հայկական արժույթ)

dişi - էգ

doktor - բժիշկ

dokuz - ինը

dost (-tu) - ընկեր, բարեկամ

dört (-dü) - չորս

efendi (bey, beyefendi) - պարոն

ekmek (-ği) - հաց

el - 1. ձեռք 2. օտար

elma - խնձոր

erkek (-ği) - 1. տղամարդ, այր 2. արու, ործ

Ermenistan - Հայաստան

fakir - աղքատ

garaj - ավտոտնակ

gazete - թերթ

geniş - լայն

gömlek (-ği) - վերնաշապիկ

hanım (bayan) - տիկին

harita - քարտեզ

iki - երկու

kaç - քանի

kamyon - բեռնատար

keçi - կատու

kırmızı - կարմիր

kimse - ոչ ոք (ինչ-որ մեկը, որևէ մեկը)
 kişi - անձ, անհատ, հոգի (üç kişi -
 երեք հոգի, երեք մարդ)
 komşu - հարևան
 koridor - միջանցք
 kum - ավազ
 kurşunkalem - մատիտ
 lira - լիրա (թուրքական արժույթ)
 mağaza - խանութ
 mavi - կապույտ
 memur - պաշտոնյա, ծառայող
 nasıl - ինչպես
 nehir (-hri) - գետ
 nerede - որտե՞ղ
 on - տասը
 otomobil - ավտոմեքենա
 öbür - մյուս
 öğrenci - աշակերտ
 öğretmen - ուսուցիչ
 para - փող
 park (-kı) - պարտեզ, զբոսայգի
 pek - չափազանց
 pembe - վարդագույն
 portre - դիմանկար
 radyo - ռադիո
 raf - դարակ
 renk (-gi) - գույն
 Rusya - Ռուսաստան

saat - 1. ժամ 2. ժամացույց
 sağ - 1. աջ 2. ողջ, կենդանի
 salon - սրահ
 sekiz - ութ
 sıfır - զրո
 siyah (kara) - սև
 sofa - բազմոց
 sokak (-ğı) - փողոց
 sol - ձախ
 soyadı (-nı) - ազգանուն
 subay - սպա
 şimdi - այժմ
 tahta - տախտակ, փայտ
 taksi - տաքսի
 talebe - ուսանող
 top (-pu) - գնդակ
 Türkiye - Թուրքիա
 üç - երեք
 var - կա
 ve - և
 ya (yahut) - կամ
 yazı tahtası - գրատախտակ
 yedi - յոթ
 yeşil - կանաչ
 yirmi - քսան
 yok (-ğu, -ku) - չկա
 yoldaş - ընկեր (ճանապարհի)
 zengin - հարուստ

Վարժություններ - Alıştırılmalar

1. Կարդալ և թարգմանել հայերեն:

Bu nedir? Bu binadır. O nedir? O koridordur. Koridor nasıldır? Koridor çok uzundur. O oda nedir? O oda dershanedir. O kitap iyi mi(dir)? Evet, bu çok iyi bir kitap(tır). Duvarı ne var? Duvarı harita var. Başka ne var? Bir de portre var. Ne var? Kırmızı kalem var. Bu defter ne renktedir? Bu defter sarıdır, o defter de mavidir. Şu duvarda karatahta var mı? Evet, duvarda bir karatahta var. Tablo duvarda mıdır? Evet, tablo duvardadır. Defterin ne renktedir? Defterim siyahtır. O kalem kırmızı mıdır? Hayır, o kalem mavidir. Kitabınız ne renktedir? Kitabım beyazdır. Adın nedir? Adım Eshan(dır). Adınız nedir? Adım Armen. Merhaba Ahmet Bey! Merhaba Selin Hanım! Beyefendi, o bey bir ahabamız mıdır? Evet efendim, o bey bir dostumdur. İsmi nedir? Efendim? Adı ne? Adı Erdal'dır. Dostunuz subay mı? Hayır, Erdal Bey memurdur. Şu bayan kimdir? Şu bayan Berna Hanımdır. O zengin midir? Hayır, o zengin değildir. Para kimdedir? Para bendedir. Bende elli bin lira ve on dıram var. Dershanemizde iki siyah masa ve on sarı sandalye var. Masanızda ne var? Masamda bir kitap var. Masasında hokka var mı? Hayır, masasında hokka yok. Defteriniz nerededir? Defterim masamdadır. Kaleminiz onda mı? Hayır, kalemim elimdedir. Şu iki kırmızı elma masalarında mı? Evet, o iki kırmızı elma masalarındadır. Elinde çanta mı var? Evet, elinde çanta var. Armen dershanemizde değil(dir).

* * *

- Kiminiz var?
- Anam var, babam var, bir kızım var. Ya sizin ananız babanız sağ mıdırlar? Sizin kiminiz var?
- Kimsem yok, efendim.
- Sağımızda bir subay var, Tamer Beyin oğlu mu?
- Hayır, Tamer Beyin oğlu Almanya'da.
- Anası Alman mı?
- Hayır, Türk'tür.
- Peki şu asker kim?
- Sabiha Hanımın oğlu.
- Bayan Sabiha'nın oğlu mu var?
- Evet, iki oğlu ve bir kızı var. Büyük oğlu budur.
- Öbür oğlu nerede?
- Burada, Türkiye'de...
- Nasıl bir adam?
- İyi değil. Biraz ... kötü bir oğlan.
- Ya o adam?
- O iyi bir adamdır.
- Allahısmarladık Beyim.
- Güle güle, efendim. Güle güle.

2. Պատասխանել հետևյալ հարցերին:

- Bu nedir? _____
- Bu odada kim var? _____
- Karatahta nerededir? _____
- O duvarda harita var mı? _____
- Bu erkek kimdir? _____
- Elimde ne var? _____
- Ergün nerededir? _____
- Orhan Bey memur mu? _____
- O iyi kadın orada mıdır? _____
- Kitabım sende midir? _____
- Bu subay babanız mıdır? _____
- Elinde ne var? _____
- Dostun koridorda mıdır? _____
- Aram Ermenistan'da mı? _____
- Arsen kardeşin mi? _____

3. Ելնելով իմաստից՝ ամբողջացնել հետևյալ նախադասությունները:

- | | |
|----------------------|-------------------------|
| Kitabım masa... . | Paramız sen... . |
| Bu derslane dar... . | Binamızda üç salon... . |
| Odada beş adam... . | Anneniz o bina... . |

Armen oda... değil(dir).

O bayanda bin diram... .

Bende kalem... .

Sende para... .

Bu erkek amele... .

Bu iki subay evimiz... .

4. Նախադասությունները դարձնել հարցական:

Şu duvarda portre yoktur. _____

Masada bir defter var. _____

Bu hanım annemdir. _____

O kadında para yok. _____

Kalem raftadır. _____

Mavi defter ondadır. _____

Bu salonda radyo vardır. _____

Onda, on lira var. _____

Bu kadın çok güzeldir. _____

Bende kalem yok. _____

Kalem kırmızıdır. _____

Dershanemizde yazı tahtası vardır. _____

Mavi defter sendedir. _____

5. Թարգմանել թուրքերեն:

Այս պատին ի՞նչ կա: Այս պատին նկար և քարտեզ կա: Որտե՞ղ է այն գիրքը: Այն սեղանի վրա տետր կա: Քեզ մոտ փող կա՞: Այո՛, ինձ մոտ կա տասը դրամ: Կատուն որտե՞ղ է: Կատուն բազմոցին է: Այս մարդը բանվոր է: Դասարանում տասը սեղան կա: Սրահում ո՞վ կա: Սրահում կան զինվորներ: Այդ գիրքը լա՞վն է: Այո՛, այդ գիրքը շատ լավն է: Ու՞մ մոտ դրամ կա: Քեզ մոտ դրամ կա: Դասարանում ուրիշ ի՞նչ կա: Դասարանում կա նաև մեկ քարտեզ: Ռադիոն որտե՞ղ է: Ռադիոն այն փոքր սենյակում է: Որտե՞ղ է իմ գիրքը: Քո գիրքն ինձ մոտ է: Մեր լսարանում ովքե՞ր կան: Մեր լսարանում տղաներ և աղջիկներ կան: Մեր սենյակում կա ութ աթոռ: Իմ մատիտը քեզ մո՞տ է: Այո՛, քո մատիտն ինձ մոտ է: Քո ձեռքին ի՞նչ կա: Իմ ձեռքին կա երկու գիրք: Այս գիրքը լա՞վն է: Այո՛, այս գիրքը շատ լավն է: Որտե՞ղ է ձեր հայրը: Իմ հայրը քո սենյակում է: Նրա սենյակում աթոռ չկա: Անին ձեր լսարանում չէ: Այժմ Անահիտը Թուրքիայում չէ: Հայաստանում է:

Կայուն բառակապակցություններ

1. Güle güle - ցտեսություն, բարով գնաք, ամենայն բարիք (բարեմաղթանք՝ գնացողին)
2. Allahısmarladık - բարով մնաք, ամենայն բարիք (բարեմաղթանք՝ մնացողին)
3. Kiminiz var? - Դուք ո՞վ (ի՞նչ հարազատներ) ունեք:

ԵՐՐՈՐԴ ԴԱՍ - ÜÇÜNCÜ DERS

§13 Անվանական ստորոգյալի կազմությունը - Şahıs Ekleri

Անվանական ստորոգյալի ներկա ժամանակաձևը կազմվում է շեշտ չկրող ստորոգման ածանցների միջոցով: Ստորոգման ածանցի ձայնավոր հնչյունն այս դեպքում ևս ունի հնչյունական չորս տարբերակ կախված այն բառի վերջին վանկի ձայնավորից, որին ածանցը կցվում է:

Դեմք	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
Առաջին	- im (im, um, üm)	- ız (iz, uz, üz)
Երկրորդ	- sın (sin, sun, sün)	- sınız (siniz, sunuz, sünüz)
Երրորդ	- dir (dir, dur, dür)	- dırlar (dirler, durlar, dürler)

Օր.

(Ben) bakanım. - (Ես) նախարար եմ: (Biz) bakanız. - (Մենք) նախարար ենք:
 (Sen) bakansın. - (Դու) նախարար ես: (Siz) bakansınız. - (Դուք) նախարար եք:
 (O) bakandır. - (Նա) նախարար է: (Onlar) bakandır(lar). - (Նրանք) նախարար են:

(Ben) askerim. - (Ես) զինվոր եմ: (Biz) askeriz. - (Մենք) զինվոր ենք:
 (Sen) askersin. - (Դու) զինվոր ես: (Siz) askersiniz. - (Դուք) զինվոր եք:
 (O) askerdir. - (Նա) զինվոր է: (Onlar) askerdir(ler). - (Նրանք) զինվոր են:

(Ben) memurum. - (Ես) պաշտոնյա եմ: (Biz) memuruz. - (Մենք) պաշտոնյա ենք:
 (Sen) memursun. - (Դու) պաշտոնյա ես: (Siz) memursunuz. - (Դուք) պաշտոնյա եք:
 (O) memurdur. - (Նա) պաշտոնյա է: (Onlar) memurdur(lar). - (Նրանք) պաշտոնյա են:

(Ben) müdürüm. - (Ես) տնօրեն եմ: (Biz) müdürüz. - (Մենք) տնօրեն ենք:
 (Sen) müdürsün. - (Դու) տնօրեն ես: (Siz) müdürsünüz. - (Դուք) տնօրեն եք:
 (O) müdürdür. - (Նա) տնօրեն է: (Onlar) müdürdür(ler). - (Նրանք) տնօրեն են:

Եթե առաջին դեմքի եզակի և հոգնակի թվերի ստորոգման ածանցները կցվում են այնպիսի բառերի, որոնք վերջանում են ձայնավոր հնչյունով, ապա բառի և ածանցի միջև ի հայտ է գալիս - y - հնչյունը:

Օր.

(Ben) hastayım. - (Ես) հիվանդ եմ: (Biz) hastayız. - (Մենք) հիվանդ ենք:
 (Ben) ameleylim. - (Ես) բանվոր եմ: (Biz) ameleyiz. - (Մենք) բանվոր ենք:
 (Ben) köylüyüm. - (Ես) գյուղացի եմ: (Biz) köylüyük. - (Մենք) գյուղացի ենք:

Անձնական դերանունը կարող է բաց թողնվել, քանի որ ստորոգման ածանցները տարբերակվում են ըստ դեմքերի:

Օր.

Hastayım. - (Ես) հիվանդ եմ: Hastayız. - (Մենք) հիվանդ ենք:
 Hastasın. - (Դու) հիվանդ ես: Hastasınız. - (Դուք) հիվանդ եք:
 Hastadır. - (Նա) հիվանդ է: Hastadırlar. - (Նրանք) հիվանդ են:

Անվանական ստորոգյալը հոգնակի թվի առաջին և երկրորդ դեմքերում չի ստանում հոգնակերտ ածանց, քանի որ հոգնակին արտահայտվում է ստորոգման ածանցի միջոցով:

Օր. (Biz) öğrenciyiz. - (Մենք) ուսանող ենք:
(Siz) askersiniz. - (Դուք) զինվոր եք:

Երկրորդ դեմքի հոգնակի թվի կիրառությունը մեկ անձի նկատմամբ արտահայտում է նաև քաղաքավարական վերաբերմունք, հարգանք:

Օր. (Siz) subaysınız. - (Դուք) սպա եք:
(Siz) sporcusunuz. - (Դուք) մարզիկ եք:

§14 Անվանական ստորոգյալի ժխտական, հարցական, հարցական - ժխտական ձևերը (տե՛ս նաև § 5)

Ներկա ժամանակով դրված անվանական ստորոգյալի ժխտական ձևում ստորոգման ածանցը կցվում է -değil- բառին և համաձայն ձայնավորների ներդաշնակության կանոնի՝ կարող է ունենալ հնչյունական միայն մեկ տարբերակ՝ -i- ձայնավորով (im, sin, dir, iz, siniz, dir[ler]):

Օր. (Ben) hasta değilim. - (Ես) հիվանդ չեմ:
(Sen) doktor değilsin. - (Դու) բժիշկ չես:
(O) müdür değildir. - (Նա) տնօրեն չէ:

(Biz) öğrenci değiliz. - (Մենք) աշակերտ չենք:
(Siz) komutan değilsiniz. - (Դուք) հրամանատար չեք:
(Onlar) memur değildir(ler).- (Նրանք) պաշտոնյա չեն:

Հարցական ձևի կազմության դեպքում ստորոգման ածանցը կցվում է հարցական մասնիկին, որը գրվում է ստորոգյալից առանձին, սակայն արտաբերվում է միասին: Հարցական մասնիկի և ստորոգման ածանցի ձայնավոր հնչյունները ենթարկվում են ձայնավորների ներդաշնակության կանոնին: Առաջին դեմքի եզակի և հոգնակի թվերում - mı, mi, mu, mü - հարցական մասնիկի և ստորոգման ածանցի միջև առաջանում է - y - հնչյունը:

Օր. (Ben) komutan mıyım? - (Ես) հրամանատար ֞ր եմ:
(Sen) komutan mısın? - (Դու) հրամանատար ֞ր ես:
(O) komutan mıdır? - (Նա) հրամանատար ֞ր է:

(Biz) öğrenci miyiz? - (Մենք) աշակե՞րտ ենք:
(Siz) öğrenci misiniz? - (Դուք) աշակե՞րտ եք:
(Onlar) öğrenci midir(ler)? - (Նրանք) աշակե՞րտ են:
(öğrenciler mi?) (աշակերտնե՞ր են):

(Ben) memur muyum? - (Ես) պաշտոնյա՞ եմ:
(Sen) memur musun? - (Դու) պաշտոնյա՞ ես:
(O) memur mudur? - (Նա) պաշտոնյա՞ է:

(Biz) şoför müyüz? - (Մենք) վարո՞րդ ենք:
(Siz) şoför müsünüz? - (Դուք) վարո՞րդ եք:
(Onlar) şoför müdür(ler)? - (Նրանք) վարո՞րդ են:
(şoförler mi?) (վարորդնե՞ր են):

Ինչպես արդեն նշվել է, երրորդ դեմքի եզակի թվի ստորոգման ածանցը կարող է բաց թողնվել:

Օր. Ahmet hasta mı? - Ահմեդը հիվանդ է:
Masa temiz mi(dir)? - Սեղանը մաքուր է:

Հարցական - ժխտական ձևը կազմվում է - değil - բառի , - mi - հարցական մասնիկի և ստորոգման ածանցների միջոցով: - mi - հարցական մասնիկը և ստորոգման ածանցները գրվում են միասին, սակայն - değil - բառից առանձին:

Օր. (Ben) amele değil miyim? - (Ես) բանվոր չե՞մ:
(Sen) amele değil misin? - (Դու) բանվոր չե՞ս:
(O) amele değil mi? - (Նա) բանվոր չե՞:

(Biz) memur değil miyiz? - (Մենք) ծառայող չե՞նք:
(Siz) memur değil misiniz? - (Դուք) ծառայող չե՞ք:
(Onlar) memur değil midir(ler)? - (Նրանք) ծառայող չե՞ն:

§15 Ածական անուն - Önad (Sıfat)

Ածական անունը իբրև որոշիչ դրվում է գոյական անուն - որոշյալից առաջ՝ միշտ մնալով անփոփոխ:

Օր. Büyük bahçe - մեծ այգի
Küçük çocuk - փոքրիկ երեխա
Genç kadın - երիտասարդ կին
Geniş yol - լայն ճանապարհ
Yeşil tarla - կանաչ դաշտ:

Ածականով արտահայտված որոշիչը չի համաձայնում որոշյալի հետ թվով, այսինքն չի ստանում հոգնակերտ ածանց:

Օր. Güzel bahçe - գեղեցիկ այգի
Küçük oda - փոքր սենյակ
güzel bahçeler - գեղեցիկ այգիներ
küçük odalar - փոքր սենյակներ

Ածական անուն - որոշիչը որոշյալի հետ չի համաձայնում նաև հոլովով:

Օր. Güzel park - գեղեցիկ պարտեզ
Yüksek bina - բարձր շենք
güzel parkta - գեղեցիկ պարտեզում
yüksek binada - բարձր շենքում

§16 Ներգոյական հոլովով դրված գոյականով կազմված անվանական ստորոգյալը

Գոյական անունը, ստանալով ներգոյական հոլովի և ստորոգման ածանցներ, կատարելով անվանական ստորոգյալի շարահյուսական դեր, ցույց է տալիս այն տեղը, որտեղ գտնվում է նախադասության ենթական (անձը կամ առարկան):

Օր. (Ben) evdeyim. - (Ես) տանն եմ: (Biz) evdeyiz. - (Մենք) տանն ենք:
(Sen) evdesin. - (Դու) տանն ես: (Siz) evdesiniz. - (Դուք) տանն եք:
(O) evde(dir). - (Նա) տանն է: (Onlar) evde(dir[ler]). - (Նրանք) տանն են:

Բառարան - Sözlük

açık (-ği) - բաց	kapalı - փակ
alçak (-ğı) - ցածր	karanlık (-ğı) - մութ, մթություն
almış - վաթսուն	kırk - քառասուն
ambar - պահեստ	kitaplık (-ğı) - 1. գրապահարան, գրադարակ 2. գրադարան
aslan - առյուծ	komutan - հրամանատար
aydın - մտավորական	kurs - դասընթաց, կուրս
bakan - նախարար	kütüphane - գրադարան
bin - հազար	lokanta (yemekhane) - ճաշարան, ռեստորան
bugün - այսօր	mahalle - թաղամաս
bulvar - ծառուղի	müdür - տնօրեն
bütün - բոլոր, ամբողջ	numara - համար
cam - ապակի	oldukça - բավական(աչափ), բավականին
daire - 1. շրջանակ 2. բնակարան, հարկաբաժին 3. վարչություն, հիմնարկ, գրասենյակ 4. շրջան	orada (orasi) - այնտեղ
doksan - իննսուն	ortaokul - միջնակարգ դպրոց
döşeme - հատակ	otuz - երեսուն
dün - երեկ	öbürgün - վաղը չէ, մյուս օրը
elli - հիսուն	renkli - գունավոր
enstitü - ինստիտուտ	seksen - ութսուն
enteresan - հետաքրքիր	sınıf - 1. դասարան 2. դասակարգ
eski - հին	sinema - կինոթատրոն
fakat - սակայն, բայց	sivil - քաղաքացիական
fakülte - ֆակուլտետ	sporcu - մարզիկ
gazete - թերթ	şoför - վարորդ
genç (-ci) - երիտասարդ	şurada (şurası) - այդտեղ
grup (-bu) - խումբ	tablo - նկար, ցուցատախտակ
hangi - ո՞ր	tarla - դաշտ
hoca - 1. ուսուցիչ, դասախոս (öğretmen, muallim) 2. խոջա, մոլլա	temiz - մաքուր
ihtiyar - ծեր	tiyatro - թատրոն
ilkokul - նախակրթարան	yeni - նոր
ince - բարակ, նուրբ	yemiş - յոթանասուն
işte - ահա, ահավասիկ	yoksa - 1. միգուցե, արդյոք 2. թե չէ, եթե ոչ, եթե չկա այլապես, հակառակ դեպքում
kâğıt (-dı) - թուղթ	yüksek (-ğı) - բարձր
kalin - հաստ	yüksekokul - բարձրագույն դպրոց
	yüz - հարյուր

Վարժություններ - Alıştırmalar

1. Վարդալ և թարգմանել հայերեն:

Burada bina var mı? Evet, bizim mahallemizde çok bina var. Burası bir sınıf mıdır? Hayır, burası sınıf değil, salondur. Ya orası nedir? Orası bir dershanedir. Burada lokanta var mı? Hayır, lokantamız burada

değil, o eski binadadır. Şu adamlar öğretmen midirler? Hayır, öğretmen değil, memurdurlar. Ya bunlar? Bunlar öğrencidirler. Öğretmenlerimiz dershanelerdir. Burası okul mu, enstitü mü? Burası okuldur. Siz kimsiniz? Biz öğrenciyiz. Siz subay mısınız? Hayır, değiliz. Biz neredeyiz? Bizim fakültemizdeyiz. Binanız oldukça büyük. Evet, küçük değildir. Bu oda dershaneinizdir, değil mi? Hayır, bu oda dershaneimiz değildir. Dershaneiniz dar mı geniş mi? Dershaneimiz biraz dardır. Dershaneimizde bir pencere vardır. Pencere şu an açıktır. Duvar mavi mi? Hayır, açık yeşildir. Cam ince mi, yoksa kalın mı? İnce değildir. Döşeme ne renktedir? Döşeme sarıdır. Ya tavan? Tavan beyazdır. Çantanız var mı? Evet, çantam var. Çantanız nerede? Çantam elimdedir. Hangi elinizde? Sol elimde. Çantanızda neler var? Çantamda kitap(lar), defter(ler) ve kâğıtlar var. Ya sizin çantanız nerede? Bugün bende çanta yok, çantam evdedir. Şu defter sizin midir? Hayır, bir arkadaşımındır. Soyadı nedir? Soyadı Aramyan'dır. Masasında neler var? Masasında birkaç kalem var. Tebeşir nerede? İşte burada.

2. Δշտել հարցական մասնիկները և պատկանելիության կամ ստորոգման ածանցները:

Radyo (mı), enstitü (- ımız), kötü (- dır), okul (ı), dost (- dır), kitaplık (mı), yüksek (- dır), büyük (- dır), anne (- ı), lokanta (- ımız), ahbap (- ım), eski (- dır), bütün (mı), fakülte (- ı), tablo (-ı).

3. Հետևյալ բառակապակցությունները թարգմանել թուրքերեն:

Մեր դասարանը, մեր դասարանը, մեր դասարանում: Նրա ինստիտուտը, նրա ինստիտուտում, նրա ինստիտուտում: Մեծեր, մեծերի մոտ: Իմ ֆակուլտետը, քո ֆակուլտետում, նրա ֆակուլտետում: Նրա դպրոցը, ձեր դպրոցում, նրանց դպրոցում: Մեր ուսուցիչը, մեր ուսուցչի մոտ, մեր ուսուցիչների մոտ:

4. Վերլուծել և թարգմանել հետևյալ նախադասությունները:

Onlar köylüdürler. Bu oğlanlar öğrencidirler. Bu gazeteler pek enteresandır. Subaylar buradadırlar. Kızlar okulda mıdırlar? O üç öğrenci öbür odadadır. Aslanlar pek güzeldir. Ambarda insanlar vardır. Öğrenciler salonumuzda mıdırlar? Evet, salonumuzda öğrencilerimiz vardır.

5. Համաձայնեցնել ստորոգյալը ենթակայի հետ և թարգմանել:

O talebeler büyük salonumuzda... . _____

Bütün bu arabalar pek yeni... . _____

Kedilerimiz odanda... . _____

İki ahbap sinemada... . _____

Kalemler masanda mı... ? _____

Memurlar dairelerinde mi... ? _____

Elmalar ellerimde... . _____

Askerler bu odalarımızda mı... ? _____

Hayır, bu odalarda asker(ler) yok... . _____

6. Վերլուծել և թարգմանել հայերեն:

O bay amele değildir. Enstitümüz büyük değildir. Talebeler odamızda değildirler. Bu odalar karanlık değil, aydınlıktır. O erkekler asker değil sivildirlere. Efendim, burası lokanta değil, kütüphanedir. Ben değil, o askerdir. Masada defter değil, kitap var.

7. Ժխտել հետևյալ նախադասությունները:

Şu bina yüksektir. _____

Dostlarım buradadırlar. _____

Baban asker midir? _____

Diran dershanemizdedir. _____

Bu kadınlar pek güzeldirler. _____

Şu kitaplar pek eskidir. _____

Hüseyin Bey yemekhanededir. _____

8. Հասկանալով նախադասության իմաստը՝ բաց թողած տեղերում ավելացնել yok(tur) կամ değil(dir) բառերը:

Babam köylü

Ahbabınız dershanemizde

Tablo bizde

Yazı tahtası temiz

Büyük odada oğlunuz

Şu karanlık koridorda kimse

Burası lokanta

Burada dostumuz

Hokka sağ elimde

Sol elinde gazete

9. Ավելացնել համապատասխան ածանց:

Ben subay..... .

Siz bizde değil mi..... ?

Sen lokantada..... .

Biz erkek..... .

Sen oğlum değil mi..... ?

Ben odada..... .

Sen oğlan..... .

Ben memur değil mi..... ?

Sen odamızda..... .

Siz küçük..... .

Siz öğretmen değil mi..... ?

Sen anam..... .

Ben muallim..... .

Siz fakültede mi..... ?

Ben dostunuz..... .

Biz subay..... .

Siz öğrenci mi..... ?

Siz arkadaşımız..... .

Siz nerede..... ?

Sen küçük mü..... ?

Biz köylü mü..... ?

Biz dershanede..... .

Ben hasta mı..... ?

Ben hocanız değil..... .

Siz salonumuzda değil..... .

Biz dostunuz değil..... .

Sen kardeşim değil..... .

Ben amele değil..... .

10. Նախադասությունները թարգմանել թուրքերեն:

Նրանք ուղքե՞ր են: Նրանք ուսուցիչ են: Այս աղջիկներն ուսուցիչ են: Ձեր ընկերներն իմ սենյակում են: Մեր գրադարանում հետաքրքիր գրքեր կան: Այս նկարները շատ գեղեցիկ են: Ձեր գրքերն այստեղ են: Այս գինվորներն ուսանող են: Ո՛չ, նրանք ուսանող չեն: Ձեր հայրը այստեղ չէ: Նա ճաշարանում է: Ո՛չ, նա ճաշարանում չէ. գրադարանում է: Իմ ընկերները գրադարանում չեն: Ձեր որդիները դպրոցում չեն: Որտե՞ղ է ձեր գիրքը: Իմ գիրքն աթոռին է: Քո տետրերը նրա սեղանին են: Ի՞նչ կա ձեր սեղանին: Մեր դասարանում կա մեկ ուսուցիչ և վեց ուսանող: Նրանց մոտ ո՞վ կա: Այնտեղ ոչ ոք չկա: Ձեր ընկերները ճաշարանում են: Քո տետրերը նրա մոտ չեն: Նրա ծնողները մեզ մոտ են: Այն լավ երեխան նրա որդին է: Այս գեղեցիկ պայուսակն իմն է: Ի՞նչ կա այնտեղ: Այնտեղ կա մի փոքրիկ և նեղ սենյակ: Այս գիրքը քո՞նն է: Այո՛, այս գեղեցիկ և հետաքրքիր գիրքն իմն է: Քո ծախս ձեռքում ի՞նչ կա: Իմ ծախս ձեռքում շատ

դրամ կա: Ձեր ուսանողներն այստեղ չեն: Նրանք որտե՞ղ են: Նրանք այժմ ֆակուլտետում են: Ի՞նչ կա ձեր աջ ձեռքում: Իմ աջ ձեռքում մի մեծ խնձոր կա: Մեր տնօրենը կինոթատրոնում չէ, այստեղ է:

Կայուն բառակապակցություններ

1. Değil mi? - Չէ՞: Այդպես չէ՞:
2. Ne var? - Ի՞նչ կա: Ի՞նչ է պատահել:
3. Ne var ne yok? - Ի՞նչ կա, չկա: Ի՞նչ նորություն կա:
4. (Yeni) Bir şey yok. - Նորություն չկա: - Նոր բան չկա:
5. Nenin (neyiniz) var? - Ի՞նչ կա ձեզ մոտ: Ի՞նչ ունեք:
6. Bir şeyim yok. - Ինձ մոտ ոչինչ չկա: Ոչինչ չունեմ:
7. Nasılsınız? - Ինչպե՞ս եք:
8. Teşekkür ederim, iyiyim. - Շնորհակալություն, լավ եմ:
9. Bir de... - մեկ էլ, բացի այդ... , նաև

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍ - DÖRDÜNCÜ DERS

§ 17 Հրամայական եղանակ - Emir Kipi

Հրամայական եղանակի երկրորդ դեմքի եզակի թիվն արտահայտվում է բայահիմքի միջոցով.

Օր.	git - գնա՛	yaz - գրի՛ր
	oku - կարդա՛	konus - խոսի՛ր

Եզակի թվի երրորդ դեմքում բայահիմքին կցվում են - sın, sin, sun, sün - ածանցները:

Օր.	gitsin - թող գնա՛	yazsın - թող գրի՛
	okusun - թող կարդա՛	konusun - թող խոսի՛

Հրամայական եղանակի երկրորդ դեմքի հոգնակի թիվը կազմվում է բայահիմքին կցվող - ınız, iniz, unuz, ünüz - ածանցների միջոցով: Եթե բայահիմքը վերջանում է ձայնավոր հնչյունով, ապա նրա և վերոհիշյալ ածանցների միջև առաջանում է - y - հնչյունը (yınız, yiniz, yunuz, yünüz): Խոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության մեջ հրամայական եղանակի երկրորդ դեմքի հոգնակի թվի ածանցը հաճախ կիրառվում է - ın, in, un, ün - (այսինքն՝ կրճատ) ձևով:

Օր.	yazın(ız) - գրե՛ք	günlün(üz) - ծիծաղե՛ք
	gidin(iz) - գնացե՛ք	başlayın(ız) - սկսե՛ք

Հրամայական եղանակի երրորդ դեմքի հոգնակի թիվը կազմվում է բայահիմքին կցվող - sınlar, sinler, sunlar, sünler - ածանցների միջոցով:

Օր.	yazsınlar – թո՛ղ գրեն	gülsünler – թո՛ղ ծիծաղեն
	gitsinler – թո՛ղ գնան	başlasınlar – թո՛ղ սկսեն

Հրամայական եղանակի ժխտականը կազմվում է բայահիմքին - ma, me - ժխտման ածանցի կցմամբ: Շեշտն ընկնում է ժխտման ածանցին նախորդող վանկի վրա:

Օր.	ya'zma - մի գրիր g'i'tme - մի գնա bulmasın – թո՛ղ չգտնի gü'lmesin – թո՛ղ չծիծաղի	ya'zmayın(ız) - մի՛ գրեք g'i'tmeyin(iz) - մի՛ գնացեք bulmasınlar – թո՛ղ չգտնեն gü'lmesinler – թո՛ղ չծիծաղեն
-----	---	--

§18 Բայի անորոշ ձևը - Eylemlik / Mastar

Թուրքերենում բայի անորոշ ձևը (անգլերենում Infinitive) կազմվում է բայահիմքին - mak, mek - ածանցի կցմամբ: Բայահիմքը արտահայտում է հրամայական խոնարհման երկրորդ դեմքի եզակի թիվը (տե՛ս §17):

Օր.	al - վերցրու gel - արի	almak - վերցնել gelmek - գալ	oku - կարդա bekle - սպասիր	okumak - կարդա beklemek - սպասել
-----	---------------------------	---------------------------------	-------------------------------	-------------------------------------

Բայի անորոշ ձևի ժխտականը կազմվում է - ma, me - ժխտման ածանցների միջոցով: Ժխտական խոնարհման դեպքում շեշտն ընկնում է բայահիմքի վերջին, այսինքն՝ ժխտման ածանցին նախորդող վանկի ձայնավորի վրա:

Օր.	almak - վերցնել okumak - կարդալ	a'lmamak - չվերցնել oku'mamak - չկարդալ	gelmek - գալ konuşmak - խոսել	ge'lmemek - չգալ konuş'mamak - չխոսել
-----	------------------------------------	--	----------------------------------	--

§ 19 Ներկա շարունակական ժամանակաձև - Şimdiki Zaman Kipi

Սահմանական եղանակի ներկա շարունակական ժամանակաձևը (համապատասխանում է հայերենի ներկա անկատարին, անգլերենի Present Continuous-ին) կազմվում է - yor - ածանցի միջոցով, որը կցվում է ձայնավոր հնչյունով վերջացող բայահիմքերին, ինչպես նաև - ıyor, ıyor, uyor, üyor - ածանցների միջոցով, որոնք կցվում են բաղաձայն հնչյունով վերջացող բայահիմքերին: - yor - ածանցի - o - հնչյունը չի ենթարկվում ձայնավորների ներդաշնակության կանոնին: Շեշտն ընկնում է - yor - ածանցին նախորդող վանկի ձայնավորի վրա:

Այս ժամանակաձևում ստորոգման ածանցները կարող են ունենալ հնչյունական միայն մեկ տարբերակ՝ - u - ձայնավորով.

Դեմք	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
Առաջին	- um	- uz
Երկրորդ	- sun	- sunuz
Երրորդ	-	- lar

Ներկա շարունակական ժամանակաձևը արտահայտում է գործողություն, որը կատարվում է որոշակի ժամանակահատվածում՝ խոսելու պահին:

Օր.	(Ben) kalı'yorum. - (Ես) մնում եմ: (Sen) kalı'yorsun. - (Դու) մնում ես: (O) kalı'yor. - (Նա) մնում է:	(Biz) kalı'yoruz. - (Մենք) մնում ենք: (Siz) kalı'yorsunuz. - (Դուք) մնում եք: (Onlar) kalı'yorlar. - (Նրանք) մնում են:
	(Ben) gezi'yorum. - (Ես) զբոսնում եմ: (Sen) gezi'yorsun. - (Դու) զբոսնում ես: (O) gezi'yor. - (Նա) զբոսնում է:	(Biz) gezi'yoruz. - (Մենք) զբոսնում ենք: (Siz) gezi'yorsunuz. - (Դուք) զբոսնում եք: (Onlar) gezi'yorlar. - (Նրանք) զբոսնում են:
	(Ben) duru'yorum. - (Ես) կանգնում եմ: (Sen) duru'yorsun. - (Դու) կանգնում ես:	(Biz) duru'yoruz. - (Մենք) կանգնում ենք: (Siz) duru'yorsunuz. - (Դուք) կանգնում եք:

(O) duru'yor. - (Նա) կանգնում է: (Onlar) duru'yorlar. - (Նրանք) կանգնում են:

(Ben) gülü'yorum. - (Ես) ծիծաղում եմ: (Biz) gülü'yoruz. - (Մենք) ծիծաղում ենք:
(Sen) gülü'yorsun. - (Դու) ծիծաղում ես: (Siz) gülü'yorsunuz. - (Դուք) ծիծաղում եք:
(O) gülü'yor. - (Նա) ծիծաղում է: (Onlar) gülü'yorlar. - (Նրանք) ծիծաղում են:

Çocuklar şimdi bahçede oynuyorlar. - Երեխաներն այժմ խաղում են այգում:
Bugün Selin evde kalıyor. - Այսօր Սելինը մնում է տանը:

Ներկա շարունակական ժամանակաձևի ժխտականը կազմվում է ժխտման և ստորոգման ածանցների կցման միջոցով: Ժխտման - ma, me - ածանցների - a, e - լայն ձայնավորները - yor - ածանցից առաջ կարող են հնչյունափոխվել համապատասխանաբար - i, i - կամ - u, ü - ձայնավորների: Շեշտն ընկնում է ժխտման ածանցին նախորդող վանկի վրա, իսկ հոգնակի թվի երրորդ դեմքում՝ նաև - lar - հոգնակերտ ածանցի վրա:

Օր.

(Ben) a'lmıyorum. - (Ես) չեմ վերցնում: (Biz) a'lmıyoruz. - (Մենք) չենք վերցնում:
(Sen) a'lmıyorsun. - (Դու) չես վերցնում: (Siz) a'lmıyorsunuz. - (Դուք) չեք վերցնում:
(O) a'lmıyor. - (Նա) չի վերցնում: (Onlar) a'lmıyorlar. - (Նրանք) չեն վերցնում:

(Ben) oku'muyorum. - (Ես) չեմ կարդում: (Biz) oku'muyoruz. - (Մենք) չենք կարդում:
(Sen) oku'muyorsun. - (Դու) չես կարդում: (Siz) oku'muyorsunuz. - (Դուք) չեք կարդում:
(O) oku'muyor. - (Նա) չի կարդում: (Onlar) oku'muyorlar. - (Նրանք) չեն կարդում:

(Ben) gör'müyorum. - (Ես) չեմ տեսնում: (Biz) gör'müyoruz. - (Մենք) չենք տեսնում:
(Sen) gör'müyorsun. - (Դու) չես տեսնում: (Siz) gör'müyorsunuz. - (Դուք) չեք տեսնում:
(O) gör'müyor. - (Նա) չի տեսնում: (Onlar) gör'müyorlar. - (Նրանք) չեն տեսնում:

(Ben) bekle'miyorum. - (Ես) չեմ սպասում: (Biz) bekle'miyoruz. - (Մենք) չենք սպասում:
(Sen) bekle'mıyorsun. - (Դու) չես սպասում: (Siz) bekle'mıyorsunuz. - (Դուք) չեք սպասում:
(O) bekle'miyor. - (Նա) չի սպասում: (Onlar) bekle'miyorlar. - (Նրանք) չեն սպասում:

Ներկա շարունակական ժամանակաձևի հարցականը կազմվում է - mu, mı - հարցական մասնիկների միջոցով: Առաջին դեմքի եզակի և հոգնակի թվերում հարցական մասնիկի և ստորոգման ածանցի միջև դրվում է - y - հնչյունը:

Օր.

(Ben) kalıyor muyum? - (Ես) մնու՞մ եմ: (Biz) kalıyor muyuz? - (Մենք) մնու՞մ ենք:
(Sen) kalıyor musun? - (Դու) մնու՞մ ես: (Siz) kalıyor musunuz? - (Դուք) մնու՞մ եք:
(O) kalıyor mu? - (Նա) մնու՞մ է: (Onlar) kalıyorlar mı? - (Նրանք) մնու՞մ են:

(Ben) geliyor muyum? - (Ես) գալի՞ս եմ: (Biz) geliyor muyuz? - (Մենք) գալի՞ս ենք:
(Sen) geliyor musun? - (Դու) գալի՞ս ես: (Siz) geliyor musunuz? - (Դուք) գալի՞ս եք:
(O) geliyor mu? - (Նա) գալի՞ս է: (Onlar) geliyorlar mı? - (Նրանք) գալի՞ս են:

Ներկա շարունակական ժամանակաձևի հարցական ժխտական ձևը կազմվում է բայահիմքի, ժխտման ածանցի, - yor - ածանցի, - mu, mı - հարցական մասնիկների և ստորոգման ածանցների միջոցով: Շեշտն ընկնում է ժխտման ածանցին նախորդող վանկի վրա, իսկ երրորդ դեմքի հոգնակի թվում նաև - lar - հոգնակերտ ածանցի վրա:

Օր.

(Ben) çalışmıyor muyum? - (Ես) չե՞մ աշխատում:
(Sen) çalışmıyor musun? - (Դու) չե՞ս աշխատում:
(O) çalışmıyor mu? - (Նա) չի՞ աշխատում:

- (Biz) çalışmıyor muyuz? - (Մենք) չե՞նք աշխատում:
 (Siz) çalışmıyor musunuz? - (Դուք) չե՞ք աշխատում:
 (Onlar) çalışmıyorlar mı? - (Նրանք) չե՞ն աշխատում:

Անձնական դերանունների կիրառումը նախադասության մեջ պարտադիր չէ, քանի որ ստորոգման ածանցները տարբերակված են ըստ դեմքերի (եզ. թվի երրորդ դեմքում ստորոգման ածանցը բացակայում է):

- Օր. Kalıyorum. - (Ես) մնում եմ: Kalıyoruz. - (Մենք) մնում ենք:
 Kalıyorsun. - (Դու) մնում ես: Kalıyorsunuz. - (Դուք) մնում եք:
 Kalıyor. - (Նա) մնում է: Kalıyorlar. - (Նրանք) մնում են:

§ 20 Տրական հոլով - Yönelme Durumu

Տրական հոլովը կազմվում է - a, e - ածանցների միջոցով, եթե գոյականը վերջանում է բաղաձայն հնչյունով և - ya, ye - ածանցների միջոցով, եթե գոյականը վերջանում է ձայնավոր հնչյունով: Տրական հոլովը պատասխանում է՝ ո՞ւմ, ինչի՞ն, ո՞ւր, դեպի ո՞ւր, ինչի՞ համար (kime? niye? nereye?) հարցերին: Շեշտը դրվում է հոլովական ածանցի վրա:

- Օր. Orhan doktora gidiyor. - Օրհանը գնում է բժշկի:
 Öğrenci kitaba bakıyor. - Աշակերտը նայում է գրքին:
 Çocuk size bakıyor. - Երեխան ձեզ է նայում:
 Kadın pencereye yaklaşıyor. - Կինը մոտենում է պատուհանին:

§ 21 Բացառական հոլով - Çıkma Durumu

Բացառական հոլովը կազմվում է - dan, den - ածանցների միջոցով, եթե գոյականը վերջանում է ձայնավորով կամ ձայնեղ բաղաձայնով և - tan, ten - ածանցների միջոցով, եթե գոյականը վերջանում է խուլ բաղաձայն հնչյունով: Այն պատասխանում է ումի՞ց, ինչի՞ց, որտեղի՞ց, ինչո՞ւ, ի՞նչ պատճառով (kimden? neden? nereden?) հարցերին: Շեշտը դրվում է հոլովական ածանցի վրա:

- Օր. Bülent nereden geliyor? - Բյուլենթը որտեղի՞ց է գալիս:
 Bülent İstanbul'dan dönüyor. - Բյուլենթը վերադառնում է Ստամբուլից:
 Ben okuldan geliyorum. - Ես գալիս եմ դպրոցից:
 Aram, sinemadan eve gidiyor. - Արամը կինոթատրոնից տուն է գնում:
 Siz evden ne zaman çıkıyorsunuz? - Դուք տնից ե՞րբ եք դուրս գալիս:

§ 22 Դասական թվականներ - Sıra Sayı Sıfatları

8. Gözardı etmek - աչքաթող անել, անուշադրության մատնել
9. Aydınlığa kavuşmak - լուսաբանվել, պարզ դառնալ, պարզվել
10. Tuhafına gitmek - տարօրինակ, զարմանալի թվալ

ՅՈՒՅԵՐՈՐԴ ԴԱՍ - YEDİNCİ DERS

§ 36 Գոյական անունների հոլովման աղյուսակներ

ա) Գոյական անուններ, որոնք վերջանում են բաղաձայն հնչյունով.

Ուղղական	Սեռական	Հայցական	Տրական	Ներգոյական	Բացառական
bağ	bağın	bağı	bağa	bağda	bağdan
çadır	çadırın	çadırı	çadıra	çadırdada	çadırdan
ev	evin	evi	eve	evde	evden
dil	dilin	dili	dile	dilde	dilden
kol	kolun	kolu	kola	kolda	koldan
kum	kunun	kumu	kuma	kumda	kumdan
göl	gölün	gölü	göle	gölde	gölden
üzüm	üzümün	üzümü	üzüme	üzümde	üzümden

Եթե գոյական անունը վերջանում է խուլ բաղաձայն հնչյունով, ապա ներգոյական և բացառական հոլովի ածանցները համապատասխանաբար ստանում են - ta, te - և - tan, ten - ձևերը (çocukta, çocuktan, mektepte, mektepten):

բ) Գոյական անուններ, որոնք վերջանում են ձայնավոր հնչյունով.

Ուղղական	Սեռական	Հայցական	Տրական	Ներգոյական	Բացառական
masa	masanın	masayı	masaya	masada	masadan
halı	halının	halıyı	halıya	halıda	halıdan
tepe	tepenin	tepeyi	tepeye	tepede	tepeden
gemi	geminin	gemiği	gemiye	gemide	gemiden
depo	deponun	depoğu	depoya	depoda	depodan
kuzu	kuzunun	kuzuyu	kuzuya	kuzuda	kuzudan
köprü	köprünün	köprüyü	köprüye	köprüde	köprüden
ütü	ütünün	ütüyü	ütüye	ütüde	ütüden

§ 37 Անձնական և ցուցական դերանունների հոլովման աղյուսակներ

Անձնական դերանունների հոլովման աղյուսակ

Ուղղ.	ben	sen	o	biz	siz	onlar
Հայց.	beni	seni	onu	bizi	sizi	onları
Տր.	bana	sana	ona	bize	size	onlara
Ներգոյ.	bende	sende	onda	bizde	sizde	onlarda
Բացառ.	benden	senden	ondan	bizden	sizden	onlardan

Ինչպես երևում է, ben և sen դերանունները տրական հոլովում ունենում են bana, sana ձևերը: Երրորդ դեմքի անձնական դերանվան և հոլովական ածանցի միջև բոլոր թեք հոլովներում դրվում է - n - բաղաձայն հնչյունը: Ըստ էության, անձնական դերանունների սեռական հոլովածի դերը թուրքերենում կատարում են ստացական դերանունները՝ ցույց տալով պատկանելիություն (տե՛ս §10 - 11):

Ցուցական դերանունների հոլովման աղյուսակ

Ուղղական	bu	şu	o
Սեռական	bunun	şunun	onun
Հայցական	bunu	şunu	onu
Տրական	buna	şuna	ona
Ներգոյական	bunda	şunda	onda
Բացառական	bundan	şundan	ondan

Բոլոր թեք հոլովներում ցուցական դերանունների և հոլովական ածանցների միջև դրվում է - n- բաղաձայն հնչյունը:

Յ38 Պատկանելիության ածանց ունեցող գոյականների հոլովման աղյուսակներ

Առաջին և երկրորդ դեմքերի պատկանելիության ածանց ստացած գոյականները հոլովվում են այնպես, ինչպես բաղաձայն հնչյունով վերջացող գոյական անունները: Երրորդ դեմքում պատկանելիության ածանց ստացած գոյական անունների հոլովման ժամանակ պատկանելիության ածանցի և հոլովական ածանցի միջև դրվում է - n - բաղաձայն հնչյունը: Գոյական անվանը նախ կցվում է պատկանելիության, այնուհետև՝ հոլովական ածանցը:

ա) Գոյական անուններ, որոնք վերջանում են ձայնավոր հնչյունով.

Ուղղական	annem	annen	annesi
Սեռական	annemin	annenin	annesinin
Հայցական	annemi	anneni	annesini
Տրական	anneme	annene	annesine
Ներգոյական	annemde	annende	annesinde
Բացառական	annemden	annenden	annesinden

Ուղղական	annemiz	anneniz	anneleri
Սեռական	annemizin	annenizin	annelerinin
Հայցական	annemizi	annenizi	annelerini
Տրական	annemize	annenize	annelerine
Ներգոյական	annemizde	annenizde	annelerinde
Բացառական	annemizden	annenizden	annelerinden

բ) Գոյական անուններ, որոնք վերջանում են բաղաձայն հնչյունով.

Ուղղական	yolum	yolun	yolu
Սեռական	yolumun	yolunun	yolunun
Հայցական	yolumu	yolunu	yolunu
Տրական	yoluma	yoluna	yoluna
Ներգոյական	yolumda	yolunda	yolunda
Բացառական	yolumdan	yolundan	yolundan

Ուղղական	yolumuz	yolunuz	yolları
Սեռական	yolumuzun	yolunuzun	yollarının
Հայցական	yolumuzu	yolunuzu	yollarını
Տրական	yolumuza	yolunuza	yollarına
Ներգոյական	yolumuzda	yolunuzda	yollarında
Բացառական	yolumuzdan	yolunuzdan	yollarından

գ) Հոգնակի թվով գոյականների հոլովումը.

Ուղղական	komsularım	komsuların	komsuları
Սեռական	komsularımın	komsularının	komsularının
Հայցական	komsularımı	komsularını	komsularını
Տրական	komsularıma	komsularına	komsularına
Ներգոյական	komsularımda	komsularında	komsularında
Բացառական	komsularımdan	komsularından	komsularından

Çocuğun elleri buz gibi soğuktur. - Երեխայի ձեռքերը սառույցի նման սառն են:

Անձնական և ցուցական դերանունները kadar և gibi հետադրություններից առաջ ստանում են սեռական հոլովի ածանց:

Օր. Fahri, senin kadar yorgun değildir. - Ֆահիրին քո չափ հոգնած չէ:
Nevzat, onun gibi yaramazdır. - Նևզաթը նրա պես չարաճճի է:

Գերադրական աստիճանն արտահայտվում է en մասնիկի միջոցով, որը դրվում է ածականից առաջ:

Օր. en iyi - ամենալավ
en kısa - ամենակարճ
en büyük - ամենամեծ
en çetin - ամենադժվար

Erivan, memleketimizin en büyük şehridir. - Երևանը մեր երկրի ամենամեծ քաղաքն է:

§ 40 kadar, dek (değın), gibi հետադրությունների կիրառությունը

kadar հետադրությունը և տրական հոլովով դրված գոյականը ցույց են տալիս տարածքային կամ ժամանակային վերջնակետ:

Օր. İstasyona kadar beraber gittik. - Մինչև կայարան միասին գնացինք:
Dün biz akşama kadar çalıştık. - Երեկ մենք աշխատեցինք մինչև երեկո:
Bugün saat altıya kadar serbestim. - Այսօր մինչև ժամը վեցն ազատ եմ:
Çocuklar, ormana kadar arabayla gittiler.
Երեխաները մինչև անտառ ավտոմեքենայով գնացին:

dek, değın հետադրությունները kadar հետադրության հոմանիշն են: Այս հետադրությունները ցույց են տալիս տարածության և ժամանակի վերջնակետ:

Օր. Şimdiye dek - մինչև այժմ
Bugüne dek - մինչև այսօր
Yarına dek - մինչև վաղը

Okula dek (kadar) yaya gitti. - Մինչև դպրոց գնաց ոտքով:
Saat dokuzda değın (kadar) çalıştım. - Ես աշխատեցի մինչև ժամը ինը:

gibi հետադրությունը արտահայտում է նմանություն.

Օր. Elin buz gibi soğuktur. - Քո ձեռքը սառույցի նման սառն է:
Okulumuzun laboratuvarı küçük bir fabrika gibidir.
Մեր դպրոցի լաբորատորիան փոքրիկ գործարանի նման է:
Erlerimiz düşmanla aslan gibi çarpıştılar.
Մեր զինվորները առյուծի նման մարտնչեցին թշնամու դեմ:

§ 41 Ժամանակի որոշումն ըստ ժամերի և րոպեների

Ժամանակը թուրքերենում արտահայտվում է այնպիսի նախադասության օգնությամբ, որի ենթական է saat (ժամ, ժամը) բառը, իսկ ստորոգյալը՝ այն քանակական թվականը, որը ցույց է տալիս անցած ժամերի թիվը: Թվական անվանը միանում է ստորոգման ածանցը:

- Օր. Şimdi saat sekizdir. - Այժմ ժամը ութն է:
Saat on birdir. - Ժամը տասնմեկն է:
Saat on idi (ondu). - Ժամը տասն էր:

Լրիվ ժամից հետո անցած կես ժամը արտահայտվում է buçuk բառի օգնությամբ:

- Օր. Saat beş buçuktur. - Ժամը հինգն անց կես է:
Saat on buçuktur. - Ժամը տասն անց կես է:
Saat yarımdır. - Ժամը տասներկուսն անց կես է:

Եթե րոպե ցույց տվող սլաքը չի հատել 30 րոպե ցույց տվող նիշը, ապա ժամը դրվում է հայցական հոլովով, իսկ ստորոգյալն արտահայտվում է geçmek (անցնել) բայի միջոցով: Խոսակցական լեզվում սովորաբար saat (ժամ) և dakika (րոպե) բառերը կարող են բաց թողնվել:

- Օր. Biri yedi geçiyor. - Մեկն անց է յոթ րոպե:
İkiyi çeyrek geçiyor. - Երկուսն անց է տասնհինգ րոպե (քառորդ):
Saat sekizi yirmi beş dakika geçiyor. - Ժամը ութն անց է քսանհինգ րոպե:
Saat beşi çeyrek geçiyor. - Ժամը հինգն անց է տասնհինգ րոպե (քառորդ):

Եթե րոպե ցույց տվող սլաքն անցել է 30 րոպեի նիշը, ապա նախադասությունը կազմվում է հետևյալ կերպ. այն թիվը (անուղղակի խնդիրը), որին մոտենում է սլաքը, դրվում է տրական հոլովով, իսկ ստորոգյալն արտահայտվում է var բառով: Խոսակցական լեզվում saat և dakika բառերը կարող են բաց թողնվել:

- Օր. Yediye on var. - Յոթից տաս է պակաս:
Saat on ikiye on dakika var. - Ժամը տասներկուսից տաս է պակաս:
Saat beşe on yedi dakika var. - Ժամը հինգից տասնյոթ րոպե է պակաս:

Geçmek, kalmak բայերի հիմքերից կազմվում են gece, kala ձևերը:

- Օր. Babam dokuzu çeyrek gece evden çıkıyor.
Հայրս ինն անց տասնհինգ (քառորդ) տնից դուրս է գալիս:
Süleyman, beşe on (dakika) kala telefon etti.
Սուլեյմանը հինգից տասը (րոպե) պակաս զանգահարեց:

Բառարան - Sözlük

abla - ավագ քույր	gürültü - աղմուկ
ağa - 1. պարոն	hala - հորաքույր
2. հարուստ սեփականատեր գյուղացի	hareket etmek - շարժվել, մեկնել
ağabey (abi) - ավագ եղբայր	indirim - զեղչ
akraba - ազգական(ներ), հարազատ(ներ)	işlek - աշխույժ, կենսալի
akraba diller - ազգակից լեզուներ	kabak (-ğ) - դդում
akrabalık (-ğı) - ազգակցություն	kadar (dek, değin) - 1. մինչև 2. չափ, նման, պես (o kadar - այն աստիճան, այնքան)
amca - հորեղբայր	karı - կին (կնիկ) [գռիկ.]
amcaoğlu (amcazade) - հորեղբոր որդի	kasaba - գյուղաքաղաք
apartman - 1. բնակարան	Kiev - Կիև
2. բազմաբնակարան շենք	kilometre - կիլոմետր
ara (arasi) - միջև	koca - I 1. մեծ 2. տարեց, ծեր
aramak - փնտրել	koca - II ամուսին (տղամարդը)
aydınlık (-ğı) - լուսավորություն	kocaman - մեծ, հսկայական
bağ - այգի (խաղողի)	koyun - ոչխար
başarı - հաջողություն	kuvvet - ուժ
beğenmek - հավանել	kuzu - գառ
bez - կտոր, բյազ, լաթ	laboratuvar - լաբորատորիա
birakmak - թողնել	memleket (-ti) - երկիր
bile - նույնիսկ	merak etmek - հետաքրքրվել
bilgi - տեղեկություն	nişanlı - նշանած
birader (kardeş) - եղբայր	not (-tu) - 1. գրառում 2. գնահատական
buz - սառույց	opera - օպերա
cetvel - 1. աղյուսակ 2. քանոն	ölmek - մահանալ
çadır - վրան	öz - 1. սեփական 2. հարազատ
çetin - 1. խրթին, դժվարին, բարդ	refika - կին, ամուսին
2. կոշտ, պինդ կարծր	saç (-cı) - մազ
çeyrek (-ğı) - քառորդ	sakınca - խոչընդոտ, արգելք
çiftçi - հողագործ	serbest - ազատ
çilingir - փականագործ	sevmek - սիրել
davet etmek - հրավիրել	silgi - ջնջոց
dayı - մորեղբայր, քեռի	silmek - ջնջել
dayıoğlu (dayızade) - մորեղբորորդի, քեռու որդի	suç (-cu) - մեղք
delikanlı - երիտասարդ	teyze - մորաքույր
doğmak - ծնվել	tifo - տիֆ (հիվանդություն)
düşman - թշնամի	tuhaf - տարօրինակ, անսովոր
eğitim (terbiye) - 1. կրթություն, ուսուցում	usta - վարպետ
2. դաստիարակություն	ünlü - 1. հայտնի 2. ծայնավոր
en - ամենա ~	yalan - սուտ
enişte - փեսա (քրոջ ամուսինը)	yalancı - ստախոս
gelin - 1. հարս 2. հարսնացու	yalnız - միայն
getirmek - բերել	yaramaz - անպիտան, չարածձի
görev - պարտականություն	Yunanistan - Հունաստան

Վարժություններ - Աلیստրմալ

1. Վարդալ և թարգմանել հայերեն:

Bizim Kaan usta, tecrübeli bir demircidir. Kaan usta ve eşi Gül Hanım, Şişli'nin gürültülü bir sokağında, üç odalı bir apartman dairesinde oturuyorlar. Daireleri eski ve küçük bir apartmanın ikinci katındadır. Onların beş çocuğundan biri maalesef tifodan öldü ve yalnız dördü kaldı. İki erkek iki kız. Oğullarının adları Şükrü ve Ergün'dür, kızlarının ise Şule ve Ayşe. En büyükleri Şükrü, en küçükleri ise Ayşe'dir. Kaan usta orta yaşlardadır, bu yıl 54 yaşına girdi. Eşi Gül Hanım ise kocasından daha gençtir. Şule, Ergün'den büyüktür, onun ablasıdır. Ergün, büyük ağabeyi Şükrü'den 8 yaş küçüktür. Ağabeyi Şükrü 24 yaşındadır ve üç yıl önce komşusunun kızı ile evlendi. Annesi Gül Hanım gelininden çok memnun, çünkü gelini çok terbiyeli, çalışkan ve ciddi bir kızdır. Şükrü de babası gibi demircilik mesleğini seçti. Şule, 18 yaşında, kahverengi gözlü, siyah saçlı ve orta boylu bir kızdır. En küçükleri olan Ayşe ise 6 yaşındadır ve daha okula gitmiyor. Şule ona evde ders veriyor fakat, Ayşe tembellik yapıyor ve ablasını dikkatle dinlemiyor. Şimdilik onun bu tembelliğine göz yumuyorlar, çünkü o daha çocuk.

* * *

Barış Bey işine her sabah 8'de gidiyor. O, bir okulda öğretmendir. Barış Bey, öğle yemeğini okulda yiyor. Evine saat 18'de geliyor. Evde hiç bir şey yapmıyor. Çünkü çok yorgundur. Yalnız gazete okuyor, radyo dinliyor. Barış Bey, cumartesi ve pazar günleri okula gitmiyor. Çünkü okul kapalıdır. Cumartesi ve pazar günleri evde oturuyor, kitap okuyor, resim yapıyor.

2. Պատասխանել հարցերին:

Beni kim aradı? - Sizi Cengiz Bey aradı.

Bana kim not bıraktı? Bende suç var mı? Benden ne istiyorsunuz? Benim arabam nerede? Sizce bu nasıl?

Hangisini istiyorsunuz? - Şunu istiyorum.

Hangisine bakıyorsunuz? Hangisinde kalem var? Hangisinden alıyorsunuz? Hangisinin kapısı açık?

Hangisinde sakınca yok? Hangilerini alıyorsunuz? Hangilerini almıyorsunuz? Hangilerinden istiyorsunuz?

Hangilerini beğendiniz? Hangilerinin çocuğu var? Hangileri daha güzel? Neleri okudun? Nelere baktın?

Hangilerinden aldın? Nelerin biçimi güzel? Kimi arıyorsunuz? Kime bakıyorsunuz? Kimde kalıyorsunuz?

Kimden geliyorsunuz? Kimin evinde oturuyorsunuz? Kimlere para verdin? Kimlerde kalem var? Kimlerin

babası memur? Kimleri davet ettin?

3. Տեղադրել ըստ անհրաժեշտության (daha, gibi, kadar, en):

O cetvel ... kısıdır. İstanbul, İzmir'den ... büyüktür. Recep arkadaşları arasında ... görgülü. Ermenice, Türkçe'den ... güçtür. Bu iş ... az güç değildir. Şehrinizin ... güzel caddesi bu mu? Evet, caddelerin ... güzeli budur. Erivan, Ermenistan'ın şehirlerinin ... büyüğüdür. O Ahmet'ten ... tembel. Sen ablan ... görgülü değilsin. Neden benim ... yapmıyorsunuz? Geç vakte ... çalıştım. Ta nehre ... yaya gittik. Sokağımız bu cadde ... işlek değildir. Sen de şu oğlan ... yalan söylüyorsun. Ahbabın ... meraklı ol. Müdürümüz şu profesör ... ünlü bir bilim adamı değildir. Saat altıya ... okulda kaldı. Oğlumun boyu sizin ... değil, şu delikanlı kadardır. Geçen ay tiyatro, müze, sinema ... yerlere gitmedim. Yol uzun değil, bir kilometre

4. Վերլուծել և թարգմանել հետևյալ նախադասությունները:

O, yazıyı sizin kadar iyi çevirdi. Bu kız babası kadar çalışkandır. Odam şu oda kadar büyük değildir. Siz ahbabınız kadar iyi çalışmıyorsunuz. Odası ambar kadar karanlıktı. 33 numaralı tramvayla Yedikule'ye dek gitti. Neden bizim gibi yazmıyorsunuz? Koridorda on kadar delikanlı duruyor. Kardeşi altı sene kadar okula devam etti. Sen de kardeşin gibi hiç bir zaman yalan söyleme. Ta geceye kadar konuştuk. Moskova, Erivan, Kiev gibi büyük kentleri haritada bulmak güç değil. Siz çok çalışkansınız, fakat biz de sizin gibiyiz. O zamana kadar kitap filan okumadım. Şimdiye dek iş tecrübesi yoktu. Saat kaçtı? Saat beşi on üç dakika geçiyor. Saat kaç? Dokuza yirmi altı dakika var. Saat kaçta işini bitirdin? Altıya beş dakika kala bitirdim.

Saat kaçtır? Sekize on var. Yediyi yedi dakika geçiyor. Opera saat kaçta bitti? Opera on bire beş kala bitti. On biri on dakika geçe bitti. Opera saat on buçukta bitti.

5. Ինչպե՞ս է ժամանակն արտահայտվում թուրքերենում:

10.20	_____
12.15	_____
09.30	_____
12.00	_____
05.30	_____
00.04	_____
01.20	_____
07.30	_____
08.50	_____
14.30	_____
15.20	_____
16.30	_____
18.45	_____
19.50	_____
20.10	_____
21.30	_____
22.15	_____
24.00	_____

6. Նախադասությունները դարձնել ժխտական:

Boş yer var. Evliyim. İstanbul'a gidiyorum. İzmir'de oturuyorum. Trende rötâr var. Armavir'de oturuyoruz. İzmir'e gidiyoruz. Yemek yiyorlar. Liseye gidiyor. Evden geliyor. Sen bekâr mısın? O nişanlı. Siz öğretmensiniz. Sen İstanbul'lu musun? Onlar çocuk mudurlar? Moskova yakın. Oda güzel. Sigara var. Tren istasyonda.

7. Պատասխանել հետևյալ հարցերին:

Kaç yılında doğdunuz? O zaman babanız kaç yaşındaydı? Ağabeyiniz (ablanız) kaç yaşındaydı? Babanız necidir? O zaman neciydi? Bir teyze (hala, dayı, amca) oğlunuz var mı? Nerede okuyor (çalışıyor)? Ne olmak istiyor? Ayşe teyze Emine'yi niçin gözü gibi seviyor? Orhan kimin gibi çiftçi olmak istiyor? Babaanneniz mi çevirmendi, anneanneniz mi?

8. Ամբողջացնել նախադասությունները:

Eskişehir kenti İstanbul ... büyük Saat on ikiyi bekledim, fakat mağaza kapalı Çevirmen dün yerinde yok Şimdi ne ... ? Ben o yıllarda öğrenci Peki, ağabeyiniz ... ? Kaya amcası ... çiftçi olmak Arsen, babası ... tecrübeli bir demirci ... istiyor. Aram, Arsen ... dikkatli

9. Թարգմանել թուրքերեն:

Իմ եղբայրը Ձեզ նման երիտասարդ է: Դուք այս նախադասությունը նրա նման լավ չթարգմանեցիք: Նա այս երիտասարդի նման լավ է սովորում: Մինչև ժամը ութը ես գիրք կարդացի: Ինչո՞ւ Դուք նրա նման չեք անում: Ես գնացի մինչև փողոցի վերջը: Նրանք սովորեցին մինչև չորրորդ դասարան: Նա Ձեզ նման ջանասեր չէ: Գորիսի, Արտաշատի ու Ստեփանավանի նման փոքր քաղաքներում կան թատրոններ: Նա քեզ նման երիտասարդ չէ: Նրա հասակն իմ չափ է: Ո՞ւր էիր մինչև այսօր: Միասին գնացինք մինչև Գյումրի:

* * *

Վարպետ Հակոբը ծնվել է 1945 թվականին: Նա հայտնի փականագործ է: Ունի երեք երեխա: Տասը տարի առաջ նա ուներ չորս երեխա, սակայն նրանցից մեկը հիվանդության պատճառով մահացավ: Վարպետ Հակոբը և նրա ընտանիքը ապրում են մի աղմկոտ փողոցում գտնվող փոքրիկ տան մեջ: Նրանց հետ ապրում է նաև տատիկը՝ վարպետ Հակոբի մայրը՝ Հասմիկը: Նա արդեն 70 տարեկան է: Տատիկը հաճախակի մեկնում է մյուս հարազատների մոտ, հիմնականում՝ իր եղբոր մոտ: Հակոբի մորեղբայրը բավական հարուստ է: Նա գյուղի ամենամեծ հողատերն է: Մորեղբայրը Հակոբին առաջարկում է գյուղում ապրել, սակայն Հակոբը գյուղում ապրել չի ցանկանում. նա սիրում է քաղաքի աշխույժ կյանքը: Վարպետ Հակոբի կինը՝ Կարինեն, ամբողջ օրը զբաղվում է տնային գործերով և երեխաների դաստիարակությամբ: Տղան՝ Արմենը, արդեն մեծ է: Ցանկանում է աշխատել և ամուսնանալ: Նա սիրում է իրենց հարևանի դստերը՝ Արմինեին: Վարպետ Հակոբը ցանկանում է որդուն սովորեցնել իր մասնագիտությունը, սակայն Արմենը հոր մասնագիտությունը չի սիրում:

10. Փորձենք զրուցել:

Ստամբուլ - Անկարա զնացքը:

- İstanbul - Ankara arası kaç kilometredir?
- 598 kilometre.
- İstanbul - Ankara arası kaç saat?
- Yedi saat.
- Ankara'dan İstanbul'a ilk tren saat kaçta hareket ediyor?
- Sabahleyin saat 8.15'te.
- İstanbul - Ankara treninde rötör var mı?
- Hayır, yok.
- Tren biletlerinde öğrenciler için indirim var mı?
- Evet, % 50 (yüzde elli) indirim var.
- Başka kimlere indirim var?
- Çocuklara, askerlere de % 50 indirim var.
- Gidiş - dönüş biletlerinde de indirim var mı?
- Evet, % 10 indirim var.
- Verdiğiniz bilgiler için çok teşekkür ederiz.
- Bir şey değil, görevimiz.

Atasözleri

Herkes evinde ağadır.
Avcı avında, yolcu yolunda gerek.
Komşu komşunun külüne muhtaçtır.
Hasta ol benim için, öleyim senin için.
Kızım sana söylüyorum, gelinim sen dinle.
Anasına bak kızını al, kenarına bak bezini al.

Կայուն բառակապակցություններ

1. Ne acıdır - ցավալի է
2. O necidir? - Ի՞նչ մասնագիտություն ունի նա:
3. Çok defa - հաճախ, շատ անգամ

ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ - SEKİZİNCİ DERS

§ 42 Ապառնի ժամանակ - Gelecek Zaman

Թուրքերենում բայի սահմանական եղանակի ապառնի ժամանակը կազմվում է ապառնի դերբային ստորոգման ածանցների կցմամբ: Ապառնի դերբայը կազմվում է բայահիմքի և *acak, ecek* ածանցների միջոցով: Եթե բայահիմքը վերջանում է ձայնավոր հնչյունով, ապա բայահիմքի և դերբայի ածանցի միջև ի հայտ է գալիս *- y -* հնչյունը (*yacak, yecek*): Այս դեպքում բայահիմքի *- a - և - e -* լայն ձայնավորները համապատասխանաբար կարող են հնչյունափոխվել *- ı - և - i -* նեղ ձայնավորների:

Օր.	<i>kalmak - մնալ</i> <i>durmak - կանգնել</i> <i>gelmek - գալ</i> <i>başlamak - սկսել</i> <i>beklemek - սպասել</i> <i>gülmek - ծիծաղել</i>	<i>kalacak - մնալու</i> <i>duracak - կանգնելու</i> <i>gelecek - գալու</i> <i>başlayacak կամ başlayacak - սկսելու</i> <i>bekleyecek կամ bekliyecek - սպասելու</i> <i>gülecek - ծիծաղելու</i>
-----	--	--

Ապառնի դերբայի ժխտական ձևը կազմվում է բայահիմքի, *- ma, me -* ժխտման ածանցի, *- y -* հնչյունի և *acak, ecek* դերբայական ածանցի միջոցով: Այս դեպքում էլ *- ma, me -* ժխտման ածանցի *- a, e -* լայն ձայնավորները կարող են հնչյունափոխվել համապատասխանաբար *- ı, i -* նեղ ձայնավորների (*mı, mi*):

Օր.	<i>çalışmak - աշխատել</i> <i>gezmek - զբոսնել</i>	<i>çalışmayacak կամ çalışmıyacak</i> <i>gezmeyecek կամ gezmiyecek</i>
-----	--	--

Ստորոգման ածանցները, որոնք միանում են ապառնի ժամանակի դերբային, ունենում են հնչյունական երկու տարբերակ.

Դեմք	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
Առաջին	- im, im	- ız, ız
Երկրորդ	- sin, sin	- sınız, sizin
Երրորդ	- tir, tir	- tırlar, tırlar

Խոնարհման ժամանակ եզակի և հոգնակի թվի առաջին դեմքում ածանցի *- k -* խուլ բաղաձայնը, հայտնվելով երկու ձայնավորների միջև, հնչյունափոխվում է *- ğ -* ի: Ստորոգման ածանցները շեշտ չեն կրում: Հոգնակի թվի երրորդ դեմքում շեշտը դրվում է թե՛ դերբայի և թե՛ *- lar, ler -* հոգնակերտ ածանցի վրա: Խոսակցական լեզվում երրորդ դեմքի եզակի թվի ստորոգման ածանցը կարող է չկիրառվել:

Ապառնի ժամանակը ցույց է տալիս գործողություն, որը տեղի է ունենալու խոսակցության պահից հետո՝ ապագայում: Այս ժամանակաձևը կարող է արտահայտել հրաման, կարգադրություն: *olmak* բայի կիրառության դեպքում ապառնի ժամանակը կարող է արտահայտել ենթադրություն:

Օր.	<i>(Ben) kalacağım. - (Ես) մնալու եմ:</i> <i>(Sen) kalacaksın. - (Դու) մնալու ես:</i> <i>(O) kalacak (tır). - (Նա) մնալու է:</i>	<i>(Biz) kalacağız. - (Մենք) մնալու ենք:</i> <i>(Siz) kalacaksınız. - (Դուք) մնալու եք:</i> <i>(Onlar) kalacak(lar)(tırlar). - (Նրանք) մնալու են:</i>
	<i>(Ben) geleceğim. - (Ես) գալու եմ:</i> <i>(Sen) yazacaksın. - (Դու) գրելու ես:</i>	<i>(Biz) bekleyeceğiz. - (Մենք) սպասելու ենք:</i> <i>(Siz) güleceksiniz. - (Դուք) ծիծաղելու եք:</i>

(O) başlayacak. - (Նա) սկսելու է: (Onlar) okuyacak(lar). - (Նրանք) կարդալու են:

Buraya bir kadın geliyor, annen olacak. - Այստեղ մի կին է գալիս. կարծես մայրդ է:
Arkadaşım işlerini çok çabuk bitirecek ve köye gidecek, çünkü annesi hastadır. -
Ընկերս շատ շտապ ավարտելու է իր գործերը և մեկնելու է գյուղ,
որովհետև մայրը հիվանդ է:

Ապառնի ժամանակի ժխտական ձևը կազմվում է ապառնի դերբայի ժխտական ձևին ստորոգման ածանցների կցման միջոցով: Շեշտը դրվում է ժխտման ածանցին նախորդող վանկի վրա: Ժխտման վերջածանցի - a և e - լայն ձայնավորները կարող են հնչյունափոխվել համապատասխանաբար - i և i - նեղ ձայնավորների:

Օր. (Ben) a'lmayacağım (a'lmıyacağım). - (Ես) չեմ վերցնելու:
(Sen) a'lmayacaksın (a'lmıyacaksın). - (Դու) չես վերցնելու:
(O) a'lmayacak (a'lmıyacak). - (Նա) չի վերցնելու:

(Biz) bekle'meyeceğiz (bekle'miyeceğiz). - (Մենք) չենք սպասելու:
(Siz) bekle'meyeceksiniz (bekle'miyeceksiniz). - (Դուք) չեք սպասելու:
(Onlar) bekle'meyecek(ler) (bekle'miyecekler). - (Նրանք) չեն սպասելու:

Հարցական ձևը կազմվում է ապառնի դերբայի, հարցական - mı, mi - մասնիկների և ստորոգման ածանցների միջոցով: Շեշտն ընկնում է դերբայի վերջին վանկի վրա:

Օր. (Ben) okuyacak mıyım? - (Ես) կարդալո՞ւ եմ:
(Sen) gelecek misin? - (Դու) գալո՞ւ ես:
(O) çıkacak mı? - (Նա) դուրս գալո՞ւ է:

(Biz) okuyacak mıyız? - (Մենք) կարդալո՞ւ ենք:
(Siz) gelecek misiniz? - (Դուք) գալո՞ւ եք:
(Onlar) çıkacak(lar) mı? - (Նրանք) դուրս գալո՞ւ են:

Հարցական - ժխտական ձևը կազմվում է ապառնի դերբայի ժխտական ձևի, - mı, mi - հարցական մասնիկների և նրանց կցվող ստորոգման ածանցների միջոցով:

Օր. (Ben) çıkmayacak mıyım? - (Ես) դուրս չե՞մ գալու:
(Sen) çıkmayacak mısın? - (Դու) դուրս չե՞ս գալու:
(O) çıkmayacak mı? - (Նա) դուրս չի՞ գալու:

(Biz) çıkmayacak mıyız? - (Մենք) դուրս չե՞նք գալու:
(Siz) çıkmayacak mısınız? - (Դուք) դուրս չե՞ք գալու:
(Onlar) çıkmayacak(lar) mı? - (Նրանք) դուրս չե՞ն գալու:

acak (ecek) ածանցով կազմվող ապառնի ժամանակի դերբայը որպես որոշիչ նախորդում է գոյական անուն որոշյալին: Այն ցույց է տալիս հատկանիշ, որի ի հայտ գալը դիտվում է որպես անհրաժեշտություն, պարտավորություն, անխուսափելի իրավիճակ:

Օր. Şu an gidecek yerim yok. - Այս պահին գնալու տեղ չունեմ:
Gelecek ay Ermenistan'a gideceğiz. - Գալիք ամիս Հայաստան ենք գնալու:
Yeni kitapları okuyacak adam yok. - Նոր գրքերը կարդացող (կարդալու համար) մարդ չկա:

§ 44 *dik* - ով բայանունը

Dik (*tik*) - մասնիկը, որը, ենթարկվելով ձայնավորների ներդաշնակության կանոնին և բաղաձայնների առնմանությանը, ունի հնչյունական ութ տարբերակ (*dik, dik, duk, dük, - tik, tik, tuk, tük*), կցվելով բայահիմքին, կազմում է բայանուն, որը պահպանում է ժամանակային իմաստը: Դրվելով բացառական հոլովով և *sonra* հետադրության հետ՝ *dik* - ով բայանունը, պահպանելով բայի բոլոր հատկանիշները, դառնում է ժամանակի պարագա:

Օր. *Kardeşim sinemaya gittikten sonra (ben) kitap okumaya oturdum.*
Այն բանից հետո, երբ եղբայրս գնաց կինո (եղբորս՝ կինո գնալուց հետո), ես նստեցի գիրք կարդալու:
Okul müdürü geldikten sonra toplantı başladı.
Այն բանից հետո, երբ դպրոցի տնօրենը եկավ, ժողովն սկսվեց:

Բացառական հոլովի և *sonra* հետադրության միջև կարող է դրվել արտահայտություն, որը մատնացույց է անում ժամանակահատվածը և առանձնացնում է առաջին գործողությունը երկրորդից:

Օր. *Toplantı, okul müdürü geldikten beş dakika sonra başladı.*
Ժողովը սկսվեց դպրոցի տնօրենի գալուց հինգ րոպե հետո:

§ 45 Մակբայներ - *Belirteç / Zarf*

Իբրև առանձին խոսքի մաս՝ մակբայը թուրքերենում լայն տարածում չի ստացել: Մեծ չէ նաև այլ լեզուներից փոխառյալ մակբայների թիվը: Թուրքերենում մակբայների ձևաբանական հատկանիշները խիստ տարբեր են և ցրված: Ներկայումս մի շարք ածանցների միջոցով կազմվում են որոշ ժամանակի մակբայներ:

Օր. *kış* - ձմեռ *kışın* - ձմռանը
yaz - ամառ *yazın* - ամռանը
güz - աշուն *güzün* - աշնանը

Akşam, sabah, gece գոյական անունները, ստանալով հոգնակերտ ածանց և երրորդ դեմքի եզակի թվի պատկանելիության ածանցներ, կազմում են մակբայական ձևեր:

Օր. *akşamları* - երեկոները
sabahları - առավոտները
geceleeri - գիշերները

Անունները, ստանալով հոլովական ածանցներ և նախադասության մեջ կատարելով պարագայի շարահյուսական դեր, կարող են անցնել մակբայների խումբը կամ գտնվել նման անցման գործընթացում:

Օր. *çok* - փոքան (վաղուց)
bir - *birden* (միանգամից)
yakın - *yakınlarda* (մոտակայքում)
yeni - *yeniden* (նորից, կրկին, վերստին, էլի)
eski - *eskiden* (հնուց [ի վեր], վաղուց, նախկինում)

ca, ce (ça, çe) ածանցները, կցվելով անունների, կարող են կազմել մակբայներ:

- Օր. kahraman - kahramanca - (հերոսաբար)
hain - haince - (նենգորեն, դավաճանաբար)
kardeş - kardeşçe - (եղբայրաբար)

Մակբայը՝ որպես նախադասության պարագայական անդամ, բնութագրում է գործողությունը կամ վիճակը տարածական, ժամանակային, քանակական ու որակական հարաբերություններում: Մակբայը՝ իբրև պարագա դրվում է նախադասության սկզբում կամ անմիջապես բայից առաջ:

- Օր. Şimdi dershanede kimse yoktur. - Այժմ դասարանում ոչ ոք չկա:
Çocuklar çoktan döndüler. - Երեխաները վաղուց են վերադարձել:
Aşağıda sizi bir adam bekliyor. - Ներքևում ձեզ մի մարդ է սպասում:
Biz yarın kütüphaneye gideceğiz. - Մենք վաղը գնալու ենք գրադարան:
Burada beş, altı çocuk oynuyor. - Այստեղ հինգ - վեց երեխա է խաղում:
Hasan fikrini açıkça anlattı. - Հասանն իր միտքը հստակ (բացեփբաց) բացատրեց:
Dün biz çok çalıştık ve çok yorulduk. - Երեկ մենք շատ աշխատեցինք և շատ հոգնեցինք:
Hamza, yemeğini çok lezzetli pişirdi. - Համզան իր կերակուրը շատ համեղ պատրաստեց:

Ածական անունները բայից առաջ կատարում են պարագայի շարահյուսական դեր՝ որակական առումով բնութագրելով գործողությունը (կիրառվում են մակբայաբար):

- Օր. Kerime, güzel konuşuyor. - Քերիմեն լավ է խոսում:
Tramvay hızlı gidiyor. - Տրամվայն արագ է ընթանում:

§ 46 Նպատակի պարագա

Նպատակի պարագան շատ հաճախ (հատկապես խոսակցական լեզվում) արտահայտվում է - mak, mek - ով գործողության անվան (ինֆինիտիվի) տրական հոլովաձևով: Տվյալ դեպքում գործողության անվան - k - խուլ բաղաձայնը, հայտնվելով երկու ձայնավորների միջև, հնչյունափոխվում է - ğ - ի: Շեշտն ընկնում է հոլովական ածանցի վրա:

Օր.

Semih, ekmek almağa gitti. - Սեմիհը գնաց՝ հաց գնելու:

Talebeler konferansı dinlemeğe geldiler. - Ուսանողները եկան՝ զիտաժողովը (զեկուցումը) լսելու:

Նպատակի պարագան թուրքերենում արտահայտվում է նաև գործողության անվան և için հետադրության միջոցով:

Օր.

Ahmet, annesini görmek için mağazaya gitti. - Ահմեդը մորը տեսնելու համար գնաց խանութ:

Ben buraya boş durmak için gelmedim. - Ես այստեղ պարապ կանգնելու համար չեմ եկել:

§ 47 Բառակազմական վերջածանցներ

Sız, siz, suz, süz մասնիկները, կցվելով գոյական անուններին, կազմում են ժխտական իմաստ արտահայտող ածականներ:

Օր.

iş - գործ	işsiz - անգործ, գործազուրկ
cam - ապակի	camsız - առանց ապակի
camsız pencere - առանց ապակու պատուհան	

Çi (ci, cu, cü) մասնիկները, կցվելով գոյական անվանը, ցույց են տալիս գործող անձ, որը տիրապետում է ինչ-որ մասնագիտության կամ օժտված է որոշակի հատկանիշներով: Խուլ բաղաձայնով վերջացող գոյականից հետո - ci - մասնիկի - c - հնչյունը փոխվում է - ç - ի (çi):

- ci - մասնիկը, կցվելով որոշ գոյականների, կազմում է նաև ածականներ:

demir - երկաթ	demirci - դարբին
yalan - սուտ	yalancı - ստախոս
kayıt - նավակ, մակույկ	kayıtçı - նավակավար, մակույկավար
bilet - տոմս	biletçi - տոմսավաճառ
tarak - սանր	tarakçı - սանր պատրաստող (վաճառող)
dolap - պահարան	dolapçı - պահարան պատրաստող (վաճառող)

Ծանոթագրություն. Այսպիսի ծագում ունեն Դեմիրձյան, Դոլափյան, Արաբաջյան, Բարդաքչյան, Թարախչյան, Ղազանչյան, Չիբուխչյան, Բոյաջյան, Սեմերջյան, Էքմեքչյան, Չորեքչյան և հայկական այլ ազգանուններ:

- ki, kü - մասնիկները կազմում են ածականներ՝ արտահայտելով ժամանակային իմաստ:

sabah - առավոտ	sabahki - առավոտվա
dün - երեկ	dünkü - երեկվա
sonra - հետո	sonraki - հետագայի

- intı (inti) - մասնիկները կազմում են բայածանցյալ գոյականներ:

Gezinti - զբոսանք	Çıkıntı - ելուստ
-------------------	------------------

§ 48 Ki - ստորադասական շաղկապը - Bağlaç

Խոսակցական թուրքերենում - ki - շաղկապը կիրառվում է շատ հաճախ: Այդ շաղկապի միջոցով զխտավոր նախադասությանը կապակցվում է ստորադասական նախադասությունը: - ki - շաղկապը համապատասխանում է հայերենի - որ - շաղկապին:

Օր.

Ben biliyorum ki onun kardeşi hastadır. - Ես գիտեմ, որ նրա եղբայրը հիվանդ է:
Ne yapalım ki benim başka arkadaşım yok. - Ի՞նչ անենք, որ ես ուրիշ ընկեր չունեմ:
O henüz bir şey demedi ki itiraz edelim. - Նա դեռ ոչինչ չի ասել, որ մենք առարկենք:
Ahababınız çocuk değil ki basit şeyleri anlamasın. -
Ձեր բարեկամը երեխա չէ, որ հասարակ բաները չհասկանա:

§ 49 Բառերի շարադասությունը նախադասության մեջ

Թուրքերեն նախադասության մեջ սովորաբար ենթական դրվում է սկզբում, իսկ ստորոգյալը՝ վերջում: Խնդիրը դրվում է ստորոգյալից առաջ: Բացառական հոլովով դրված խնդիրը նախորդում է տրական հոլովով դրված խնդրին: Ուղիղ խնդիրը հաջորդում է անուղղակի խնդրին: Ժամանակի պարագան և տեղի պարագան դրվում են նախադասության սկզբում՝ ենթակայից առաջ կամ անմիջապես նրանից հետո: Բառերի սովորական կայուն շարադասությունը խախտվում է, եթե տրամաբանական շեշտը, ընկնելով նախադասության որևէ անդամի վրա, անհրաժեշտություն է առաջացնում այն դնելու ստորոգյալից առաջ: Գոյականական անդամի լրացումները նախորդում են գոյականին: Ենթակայի լրացումները դրվում են ենթակայից առաջ, խնդրի լրացումները՝ խնդրից առաջ: Bir թվական անունն ածական անուն որոշյալից առաջ կարող է լինել քանակի ցուցիչ կամ անորոշության ցուցիչ:

Օր. Bir küçük çocuk buraya geliyor. - Մի փոքրիկ երեխա այստեղ է գալիս:

Մակբայները և ածականները՝ որպես նախադասության պարագայական անդամներ, դրվում են ստորոգյալից առաջ:

Օր. Bu sabah geç uyandım. - Այս առավոտ ուշ արթնացա:
Kardeşim Ermenice'yi güzel konuşuyor. - Եղբայրս հայերեն լավ է խոսում:
Ben mektubuna hemen cevap verdim. - Ես քո նամակին իսկույն պատասխանեցի:

Թուրքերեն նախադասության մեջ բառերի ավանդական շարադասությունը կարող է փոխվել, և նախադասության անդամները կարող են դասավորվել այլ հերթականությամբ՝ կախված տրամաբանական շեշտից: Նախադասության այն անդամը, որի վրա դրվում է շեշտը, նախորդում է ստորոգյալին:

Օր. Aram, dün sinemaya otomobile geldi. - Արամը երեկ կինոթատրոն ավտոմեքենայով եկավ:
Aram, dün otomobile sinemaya geldi. - Արամը երեկ ավտոմեքենայով կինոթատրոն եկավ:
Aram, otomobile sinemaya dün geldi. - Արամն ավտոմեքենայով կինոթատրոն երեկ եկավ:
Dün otomobile sinemaya Aram geldi. - Երեկ ավտոմեքենայով կինոթատրոն Արամը եկավ:

Նախադասության մեջ ստորոգյալի տեղը սովորաբար կայուն է: Սակայն առավել մեծ արտահայտչականության նպատակով ստորոգյալը կարող է դրվել ենթակայից կամ խնդիր լրացումից առաջ:

Օր. Sen işittin mi bu sözleri? - Դու լսեցի՞ր այս խոսքերը:
Ergün telefon etti ona. - Էրգյունը զանգահարեց նրան:

Որոշիչ և որոշյալի շարադասությունը նախադասության մեջ հիմնականում փոփոխության չի ենթարկվում, սակայն բացառություն կարող է կազմել բանաստեղծական խոսքը:

Օր. Fakat nabızları biçarenin nasıl vuruyor (Tevfik Fikret).
Սակայն ինչպես են խփում խեղճի (անձարի) զարկերակները:

Թուրքերենում հաճախ նախադասության մեջ հանդիպում է բառերի շարադասության ընդունված կարգի խախտում, որը հիմնականում կապված է տրամաբանական շեշտի հետ: Շրջուն շարադասություն կիրառվում է նաև բանավոր խոսքում, երբ շեշտակիր բառը ստորոգյալի հետ դրվում է նախադասության սկզբում, իսկ շեշտ չկրող բառն անցնում է հետ:

- Օր. Nasıl yazalım ona? - Նրան ինչպե՞ս գրենք:
 Adı nedir o profesörün? - Այն պրոֆեսորի անունն ի՞նչ է:
 Nerede oturuyor bu memur? - Որտե՞ղ է նստում այս պաշտոնյան:

Բառարան - Sözlük

acıkmak - սովածանալ, քաղցել	hazır - պատրաստ
aç - քաղցած, սոված	hız - արագություն
altın - ոսկի	hızlı - արագ
anlamak - հասկանալ	hokey - հոկեյ
arzu - ցանկություն	ikram etmek - հյուրասիրել
aşığı - ներքև	ilâç (-cı) - դեղ
ayakkabı (-yı) - կոշիկ	inek (-ği) - կով
bakır - պղինձ	istirahat etmek - հանգստանալ
bakkal - նպարավաճառ	kabahat (-ti) - մեղք, հանցանք
bal - մեղր	kabul etmek - ընդունել
banka - բանկ	kaçmak - փախչել
bardak (-ğı) - բաժակ	kahraman - հերոս
bayram - տոն	kahve - սուրճ
belkemiği (-ni) - ողնաշար	kayak (-ğı) (ski) - դահուկ
biçare - անձար, խեղճ, դժբախտ (մարդ)	kemik (-ği) - ոսկոր
bisiklet (-ti) - հեծանիկ	kılıç (-cı) - թուր
boyunbağı (-nı) - վզկապ, փողկապ	konuk (-ğu) (misafir) - հյուր
börek (-ği) - կարկանդակ	kuş - թռչուն
Bükreş - Բուխարեստ	lezzetli - համեղ
camı (-ii, -si) - մզկիթ	Londra - Լոնդոն
can - հոգի, կյանք, սիրտ	maç (-çı) - մրցախաղ
coğrafya - աշխարհագրություն	mobilya - կահույք
çare - ճար	mutlaka - անպայման
çay - 1. թեյ 2. գետ (փոքր)	mühendis - ինժեներ, ճարտարագետ
çıkıntı - ելուստ	mümkün - հնարավոր
çilek (-ği) - ելակ	nabız (-bızı) - զարկերակ
çoktan - վաղուց	nevi - տեսակ
dana - հորթ	olanak (-ğı) - հնարավորություն
dekan - դեկան	orta - 1. կենտրոն, մեջտեղ 2. միջին
dekanlık (-ğı) - դեկանատ	önceki - նախորդ
deniz - ծով	öneri - առաջարկ
diken - փուշ	özellekle (bilhassa) - հատկապես
duymak - 1. լսել 2. զգալ	özür - ներողություն
elbise - հագուստ	özür dilemek - ներողություն խնդրել
eşek (-ği) - ավանակ	paha - գին, արժեք
futbol - ֆուտբոլ	pişirmek - պատրաստել, եփել
genellikle - ընդհանրապես	piyes - պիես
gümüş - արծաթ	plan - ծրագիր
hain - դավաճան	rast gelmek - հանդիպել
halazade - հորաքրոջ որդի	razı - համաձայն
hayvan - կենդանի	razı olmak - համաձայն լինել

sahne - բեմ
 sahnelemek - բեմադրել
 sahnelenmek - բեմադրվել
 satın almak - գնել
 satmak - վաճառել
 satranç (-cı) - շախմատ
 seyretmek - դիտել
 sofra - ճաշասեղան
 sofra başına geçmek - սեղան նստել
 sofra kurmak - սեղան գցել
 stadyum - մարզադաշտ
 süt (-tü) - կաթ
 şapka - գլխարկ
 şaşmak - զարմանալ, ապշել
 şişe - շիշ (ապակե տարա)
 tabak (-ği) - ափսե
 taş - քար
 telefon etmek - զանգահարել

televizyon - հեռուստատեսություն
 traktör - տրակտոր
 tutmak - պահել, բռնել
 uyku - քուն
 uykusuz - անքուն
 üstat (-dı) - վարպետ, մաեստրո
 üvey (-i, -si) - խորթ
 üvey ana - խորթ մայր
 vişne - բալ
 vurmak - խփել, հարվածել
 yastık (-ğı) - բարձ
 yavaş - կանաց, դանդաղ
 yönetmek - ղեկավարել
 yukarı - 1. վերև(ը) 2. վերին, վերևի
 zafer - հաղթանակ
 zarar - վնաս
 zarf - 1. պատյան 2. ծրար
 zeytin - ձիթապտուղ
 ziraat (-ti) - գյուղատնտեսություն

Վարժություններ - Ալիստրմար

1. Կարդալ և թարգմանել հայերեն:

Önceki gün cumaydı. Akşam saat yedide halaoğlu bize geldi.

- Biz, öbür gün ava gideceğiz, - dedi. Bizimle gelmek istiyor musun? Seni özellikle davet etmek istiyorum.

Ben genellikle av meraklısı değilim, fakat bu sefer merak ettim.

- Ne avlayacaksınız?

- Şimdi kuş ve hayvan avı yasak, onun için biz de balık avlayacağız. Sen de gel. Vallahi, bu davetim son davet, sonra söylemedin deme.

- Peki, kabulüm.

Pazar günü erkenden uyandım. Yatağımı topladım, kahvaltı ettim ve giyindim. Saat yediyi yirmi beş geçe evden çıktım. Otobüsle halamın oğluna gittim. Abovyan caddesinde otobüsten indim. Halamla oğlu beş katlı taş bir binanın, üç odalı bir dairesinde oturuyorlar. Halaoğlumun küçük, fakat aydınlık bir odası var. Bu odada mobilya olarak bir dolap, bir televizyon, küçük bir masa ve bir de demir karyola var. Masa odanın ortasında duruyor. Yemek masası ve diğer eşyalar ise öteki (diğer) odadalar.

- Ne o? Hâlâ yatakta mısınız? - dedim.

- Aksi gibi hastalandım, - dedi.

- Geçmiş olsun, - dedim, - demek ki bu iş bugün olmayacak. Doğrusu ben de pek o kadar hazır değilim. Bak, kıyafetim bile bir balıkçıya göre değil.

- Öyle şey yok. Önümüzdeki cumartesi günü mutlaka balığa gideceğiz. Vazgeçmek yok.

Böylece, o günkü planımız suya düştü. Halam bana bir bardak çay ikram etti. Üçümüz biraz daha sohbet ettik, sonra da kalktım ve gittim. Daha sabahın erken saatiydi. Kol saatime baktım, sekize on vardı. Yavaş yavaş yürüdüm. Daha sonra bir arkadaşıma rastladım. Birlikte parka gittik. Arkadaşım iyi bir sporcudur. Ben de sporu çok seviyorum. Arkadaşımınla bütün parkı baştan başa dolaştık.

Nihayet acıktık ve lokantaya gittik, iyi bir öğle yemeği yedik. Arkadaşımı evime davet ettim. Burada üç parti satranç oynadık, sonra arkadaşım gitti. Ben de baktım ki televizyonda iyi bir film oynuyor, açtım televizyonumu, filmi seyrettim. Sonra televizyonu kapattım. Tiyatroda “Namus” piyesi sahneleniyor. Aksi gibi biletim de yok. Üstelik bilet de bulunmuyor. Baktım çare yok, yeni spor sarayına gittim. Spor sarayı evime çok yakın. Bir futbol maçı seyrettim. Dokuzu çeyrek geçe evime döndüm. Bir buçuk saat Türkçe çalıştım.

2. Հետևյալ բառերը գրել գոյականների կապակցման առաջին ձևով:

Öğretmen - palto. _____

Sınıf - pencere. _____

Okul - kapı. _____

Öğrenci - bisiklet. _____

Annemiz - elbise. _____

Yusuf - baba. _____

3. Հետևյալ բառերը գրել գոյականների կապակցման երկրորդ ձևով:

Çilek - reçel. _____

Ortaokul - öğretmen. _____

Üniversite - öğrenci. _____

Yazı - makina. _____

Çiftlik - bal. _____

Bükrüş - uçak. _____

Yatak - oda. _____

Londra - yolcu. _____

4. Նախադասությունները գրել ապառնի ժամանակով:

Tamay çay hazırlıyor. _____

Deniz süpermarkete gidiyor. _____

Aram tıraş oluyor. _____

Aram duş alıyor. _____

Arsen paketi açıyor. _____

Tevan eve geliyor. _____

Aram odada uyuyor. _____

Aram mektup yazıyor. _____

5. Կազմել նախադասություն ապառնի ժամանակով՝ գործածելով հետևյալ բառերը:

Aram - Bükrüş - gelmek. _____

Aram - yarın - Bükrüş - gelmek. _____

Aram - sabah - yarın - Bükrüş - gelmek. _____

Aram - sabah - yarın - tren - Bükrüş - gelmek. _____

Biz - Ermenice - öğrenmek. _____

Biz - Ermenice - Yerevan - öğrenmek. _____

6. Հետևյալ բայերը խոնարհել ներկա շարունակական, անցյալ կատարյալ և ապառնի ժամանակների հաստատական, ժխտական, հարցական և հարցական - ժխտական ձևերով:

Oynamak _____

Söylemek _____

Yardım etmek _____

Bulmak _____

Kaçmak _____

Doğmak _____

Yönetmek _____

Anlamak _____

Konuşmak _____

Bilmek _____

7. Վերլուծել և թարգմանել նախադասությունները:

Az ötede taş bir bina gördük. Baş mühendis nerede? Demir kapıyı çaldım, kimse açmadı. Demirci Suren 1946 yılında doğdu. Halaoğlu, Sundukyan tiyatrosu müdürünün oğlunun can dostudur. Büyük opera binasına yakın oturuyoruz. Erivan'ın en büyük ve güzel parkı “Hağtanak” (Zafer) parkıdır. Hasta annesine bir kadın doktor bakıyor. Odanın ortasında büyük bir tahta masa var. Çevirmen Altun'dan çok ilginç bir mektup aldım. Bu çocuk senin mi? Hayır, kızkardeşimin oğludur. O ağanın kaç baş hayvanı var? Bu sporu hiç sevmiyor musunuz? Lütfen bize birkaç şarap bardağı gösteriniz. Çocuklar biraz dinlendikten sonra yolumuza devam ettik. Gazeteyi gözden geçirdikten sonra kahvaltı etmeğe başladım. Biz dershaneye girdikten beş dakika sonra zil çaldı. Sınavlar bittikten sonra Gümrü kentine gidecek. Derse iki saat kadar çalıştıktan sonra sokağa çıktık. Ablam tiyatrodan döndükten bir saat sonra yatağa girdi. Ağabeyim geldikten çeyrek saat sonra ben yatağa girdim. Dersleriniz bittikten sonra lokantaya mı gidiyorsun? Maro dayısının evinden üniversiteye gidecek.

8. Թարգմանել թուրքերեն:

Իմ քույրիկի փոքրիկ ոսկյա ժամացույցը: Սենյակի փայտե մեծ դուռը: Եղբորս ընկերոջ մորաքույրը: Երևանի ժամացույցի գործարանի բանվոր: Երկաթուղի: Այշեյի քույրիկը: Իմ բարեկամը երկու ժամ առաջ գնաց հացի գործարան: Առաջին կուրսի ուսանողներն այստեղ են: Այստեղ Անկարայի Միջին Արևելքի տեխնիկական համալսարանի ռեկտորի աշխատասենյակն է: Մեր դասախոսն ասում է. «Ես ձեզանից գոհ եմ»: Այս տեսակի մեքենաներ մեր գործարանը չի արտադրում: Խնդրում եմ՝ մեզ համար մի քանի գավաթ թեյ բերեք:

* * *

Անդաստիարակ երիտասարդ, առանց գլխարկի կին, մնալ առանց ջրի, դուրս գալ առանց վերարկուի, անվտանգ մարդ, անկոչ հյուր, առանց կահույքի սենյակ, այսօրվա թերթ, նախորդ օրվա խաղը, առանց ապակու լուսամուտ, անգործ, անհարմար այթռ, ապրել առանց հացի, անսխալ պատասխան, անընդհատ աշխատել:

* * *

Երեկ հանգստյան օր էր: Ես արթնացա ուրիշ տասը պակաս: Թարմ թերթերը նայելուց հետո ես նախաճաշեցի և որդուս հետ դուրս եկա փողոց: Որդիս տասներկու տարեկան է: Նա սովորում է վեցերորդ դասարանում: Հինգ օր առաջ սկսվեց ամառային արձակուրդը: Որդիս

ամեն օր գնում է ֆուտբոլ խաղալու: Մարզադաշտը շատ մոտ է մեր տանը: Բայց այդ օրը մենք նստեցինք ավտոբուս և գնացինք զբոսայգի: Եղանակը շատ լավն էր: Այգում ես հանդիպեցի մեր թարգմանիչներից մեկին: Նա իմ լավ բարեկամն է: Երեքից քսան պակաս մենք դուրս եկանք այգուց և ոտքով գնացինք տուն: Ուղիղ մեկ ժամ հետո մենք հասանք այնտեղ: Ճաշից առաջ մենք որդուս հետ մի քանի պարտիա շախմատ խաղացինք: Որդիս հետագայում կառնա լավ շախմատիստ: Նա հիմա էլ ինձնից լավ է շախմատ խաղում: Նա Երևանի պետական համալսարանի չորրորդ կուրսի ուսանողուհի է: Հինգ օր հետո նա կհանձնի առաջին քննությունը: Նա նվագում է դաշնամուր: Ցավոք, ես չեմ նվագում դաշնամուր: Ժամը յոթին հայրս մեզ հրավիրեց ընթրիքի: Սակայն մենք չգնացինք, քանի որ շատ հոգնած էինք:

9. Փորձենք զրուցել:

9.1. Նախաճաշ ժամանումից հետո:

- Kahvaltı yapacaksın değil mi?
- Hayır, yapmayacağım. Aç değilim. Çok yorgun ve uykusuzum. Şimdi hemen uyuyacağım.
- Çay hazır. Bir duş al. Yorgunluğun çıksın. Kahvaltıda bir şeyler ye, sonra da uyu.
- Kahvaltıda neler var?
- Sen ne istiyorsun? Ben şimdi bakkala gideceğim. Yumurta, bal, zeytin alacağım.
- Şu paketi açın. İçinde börek ve reçel var. Annem koydu.
- Hem de vişne ve çilek reçeli var.
- Börekler de çok güzel.
- Annem güzel börek yapar.
- Haydi, sen duş al.
- Acele etmeyin, duş alacağım.
- Ama kahvaltı hazır, bizi bekletme.
- Armen bakkala gidecek. Bal, yumurta, zeytin alacak.
- Tamam, ben bakkala gidiyorum. Sen de duş al, tıraş ol.
- Ben beş dakikada hazır olacağım.
- Ben de kahvaltı sofrasını hazırlayacağım.
- Bir tabağa vişne reçeli koy.
- Olur. Kahvaltıda süt mü, çay mı içeceksin?
- Siz ne içeceksiniz?
- Biz çay içeceğiz.
- Ben de çay içeceğim. Yorgunluğa iyi gelir.
- İyi bir kahvaltı yorgunluğun en iyi ilâcıdır.
- Bu sözün doğru. Haydi sen kahvaltıyı hazırla. Ben de hemen geleceğim. Bir dakika. Sormayı unuttum. Mektup kâğıdı ve zarf var mı?
- Var, kime yazacaksın?
- Maro'ya yazacağım. Söz verdim.

9.2. Խանութում:

- Buyurun efendim.
- Beyaz peynir var mı?
- Var. Ne kadar istiyorsunuz?
- Kilosu kaç lira?
- Kilosu 22 lira.
- Lütfen yarım kilo beyaz peynir.
- Başka arzunuz?
- Bir yumurta kaç lira?
- Bir yumurta 50 kuruş.
- Lütfen beş yumurta.
- Evet, başka arzunuz?

- Bir şişe bal, üç yüz gram zeytin.
- Bir şişe bal 12 lira. Zeytin kilosu 10 lira. 300 gramı 3 lira.
- Hepsi toplam ne kadar yapıyor?
- 11 lira peynir, 2.5 lira yumurta, 12 lira bal, 3 lira da zeytin, hepsi toplam 28.5 lira yapıyor.
- Teşekkür ederim. Hayırlı işler.
- Biz de teşekkür ederiz. İyi günler.

Atasözleri

Dikensiz gül olmaz.
 Çoğu gitti, azı kaldı.
 Para ile değil, sıra ile.
 Kusursuz güzel olmaz.
 Hem suçlu, hem güçlü.
 Yemek emeksiz olmaz.
 Yükte hafif pahada ağır.
 Bir yastığa baş koymak.
 Özürü kabahatinden büyük.
 Dinsizin hakkında imansız gelir.
 Oynaşına inanan avrat, ersiz kalır.
 Kusursuz dost arayan dostsuz kalır.

Կայուն բառակապակցություններ

1. Halk namına - ժողովրդի անունից
2. Geçmiş olsun - անցած լինի, ցավում եմ
3. Öbür gün - վաղը չէ, մյուս օրը
4. Ne o ? - ի՞նչ է սա, ի՞նչ է պատահել
5. Zaman zaman - երբեմն - երբեմն, ժամանակ առ ժամանակ
6. Baştan başa - սկզբից մինչև վերջ, ծայրից ծայր
7. Hayırlı işler - գործերին հաջողություն
8. Suya düşmek - ջուրն ընկնել, ձախողվել

ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ - DOKUZUNCU DERS

§ 50 Ընդարձակ ներկա ժամանակ - Geniş Zaman

Սահմանական եղանակի ընդարձակ ներկա ժամանակը կազմվում է համապատասխան դերբային ստորոգման ածանցի կցման միջոցով:

Ընդարձակ ներկա դերբայը կազմվում է.

ա) ձայնավոր հնչյունով վերջացող բայահիմքին - r - ածանցի կցմամբ (başlamak - başlar),

բ) բաղաձայն հնչյունով վերջացող բայահիմքերին - ır, ir, ur, ür - ածանցների կցմամբ (sevinmek - sevinir),

գ) բաղաձայն հնչյունով վերջացող միավանկ բայահիմքերին - ar, er - ածանցների կցմամբ (yazmak - yazar),

դ) բաղաձայն հնչյունով վերջացող հետևյալ 16 միավանկ բայահիմքերին - ır, ir, ur, ür - ածանցների կցմամբ:

almak - alır	görmek - görür	sanmak - sanır
bilmek - bilir	kalmak - kalır	varmak - varır
bulmak - bulur	konmak - konur	vermek - verir
denmek - denir	olmak - olur	vurmak - vurur
durmak - durur	ölmek - ölür	yenmek - yenir
gelmek - gelir		

Ստորոգման ածանցները դերբային կցվելիս ունենում են հնչյունական չորս տարբերակ.

Դեմք	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
Առաջին	- ım, im, um, üm	- ız, iz, uz, üz
Երկրորդ	- sın, sin, sun, sün	- sınız, siniz, sunuz, sünüz
Երրորդ	- --	- lar, ler

ա) Երկվանկ և բազմավանկ բայահիմքեր, որոնք վերջանում են բաղաձայն հնչյունով:

(Ben) çalışırım. - (Ես) աշխատում եմ (կաշխատեմ):

(Sen) çalışırsın. - (Դու) աշխատում ես (կաշխատես):

(O) çalışır. - (Նա) աշխատում է (կաշխատի):

(Biz) çalışırız. - (Մենք) աշխատում ենք (կաշխատենք):

(Siz) çalışırsınız. - (Դուք) աշխատում եք (կաշխատեք):

(Onlar) çalışır(lar). - (Նրանք) աշխատում են (կաշխատեն):

(Ben) konuşurum. - (Ես) խոսում եմ (կխոսեմ):

(Sen) konuşursun. - (Դու) խոսում ես (կխոսես):

(O) konuşur. - (Նա) խոսում է (կխոսի):

(Biz) konuşuruz. - (Մենք) խոսում ենք (կխոսենք):
(Siz) konuşursunuz. - (Դուք) խոսում եք (կխոսեք):
(Onlar) konuşur(lar). - (Նրանք) խոսում են (կխոսեն):

բ) Բայափիմքեր, որոնք վերջանում են ձայնավոր հնչյունով:

(Ben) okurum. - (Ես) կարդում եմ (կկարդամ):
(Sen) okursun. - (Դու) կարդում ես (կկարդաս):
(O) okur. - (Նա) կարդում է (կկարդա):

(Biz) okuruz. - (Մենք) կարդում ենք (կկարդանք):
(Siz) okursunuz. - (Դուք) կարդում եք (կկարդաք):
(Onlar) okur(lar). - (Նրանք) կարդում են (կկարդան):

գ) Միավանկ բայափիմքեր, որոնք վերջանում են բաղաձայն հնչյունով:

(Ben) yazarım. - (Ես) գրում եմ (կգրեմ):
(Sen) yazarsın. - (Դու) գրում ես (կգրես):
(O) yazar. - (Նա) գրում է (կգրի):

(Biz) yazarız. - (Մենք) գրում ենք (կգրենք):
(Siz) yazarsınız. - (Դուք) գրում եք (կգրեք):
(Onlar) yazar(lar). - (Նրանք) գրում են (կգրեն):

(Ben) gezerim. - (Ես) զբոսնում եմ (կզբոսնեմ):
(Sen) gezersin. - (Դու) զբոսնում ես (կզբոսնես):
(O) gezer. - (Նա) զբոսնում է (կզբոսնի):

(Biz) güleriz. - (Մենք) ծիծաղում ենք (կծիծաղենք):
(Siz) gülersiniz. - (Դուք) ծիծաղում եք (կծիծաղեք):
(Onlar) güler(ler). - (Նրանք) ծիծաղում են (կծիծաղեն):

դ) 16 միավանկ բայեր, որոնք վերջանում են բաղաձայնով:

(Ben) alırım. - (Ես) վերցնում եմ (կվերցնեմ):
(Sen) alırsın. - (Դու) վերցնում ես (կվերցնես):
(O) alır. - (Նա) վերցնում է (կվերցնի):

(Biz) dururuz. - (Մենք) կանգնում ենք (կկանգնենք):
(Siz) görürsünüz. - (Դուք) տեսնում եք (կտեսնեք):
(Onlar) gelir(ler). - (Նրանք) գալիս են (կգան):

(Ben) veririm. - (Ես) տալիս եմ (կտամ):
(Sen) verirsin. - (Դու) տալիս ես (կտաս):
(O) verir. - (Նա) տալիս է (կտա):

(Biz) vururuz. - (Մենք) խփում ենք (կխփենք):
(Siz) vurursunuz. - (Դուք) խփում եք (կխփեք):
(Onlar) vurur(lar). - (Նրանք) խփում են (կխփեն):

Ընդարձակ ներկա ժամանակաձևն արտահայտում է.

ա) Գործողություն, որ կատարվում է պարբերաբար՝ իբրև օրինաչափություն:

Օր. Kışın kar yağar. - Ձմռանը ձյուն է գալիս (մաղում):
Kuş uçar, balık suda yaşar. - Թռչունը թռչում է, ձուկն ապրում է ջրում:

բ) Գործողություն, որ կատարվում է պարբերաբար՝ ըստ սահմանված կարգի:

Օր. Amele günde sekiz saat çalışır. - Բանվորն օրական աշխատում է ութ ժամ:
Mağazalar saat on sekizde kapanır. - Խանութները ժամը տասնութին են փակվում:

գ) Գործողություն, որ կատարվում է պարբերաբար՝ սովորույթի համաձայն:

Օր. Armen, meyve çok sever. - Արմենը միրգ շատ է սիրում:
O, sabah saat sekizde uyanır. - Նա արթնանում է առավոտյան ժամը ութին:

Ընդարձակ - ներկա ժամանակն արտահայտում է գործողություն նաև ապառնի ժամանակում, երբ խոսքը վերաբերում է այնպիսի գործողության, որը կախված է որևէ այլ գործողությունից:

Օր. Yarın evimize gel, beraber tiyatroya gideriz. - Վաղը ե՛կ մեր տուն, միասին թատրոն կգնանք:

§ 51 Ընդարձակ ներկա ժամանակի ժխտական, հարցական և հարցական ժխտական ձևերը

Ընդարձակ ներկա ժամանակի ժխտական ձևը կազմվում է ընդարձակ ներկա ժամանակի դերբայի ժխտական ձևի և ստորոգման ածանցների օգնությամբ:

Եզակի և հոգնակի թվերի առաջին դեմքում դերբայական - r - ածանցը դուրս է ընկնում: Եզակի թվի առաջին դեմքի ստորոգման ածանցը, կորցնելով իր նեղ ձայնավոր հնչյունը, անմիջականորեն կցվում է - ma, me - ժխտման ածանցին:

Օր. almam - չեմ վերցնում (չեմ վերցնի) bilmem - չգիտեմ (չեմ իմանա)

Հոգնակի թվի առաջին դեմքում ժխտման ածանցի և ստորոգման ածանցի միջև դրվում է - y - հնչյունը:

Օր. almayız - չենք վերցնում (չենք վերցնի) bilmeyiz - չգիտենք (չենք իմանա)

Հոգնակի և եզակի թվերի երրորդ և երկրորդ դեմքերում դերբայական - r - ածանցը փոխվում է - z - ի, և այսպիսով երրորդ դեմքում almar, gelme՛r ձևերի փոխարեն կիրառվում են - almaz, gelmez -, իսկ երկրորդ դեմքի եզակի թվում՝ almazsın, gelmezsin, հոգնակի թվում՝ almazsınız, gelmezsiniz ձևերը: Շեշտն առաջին դեմքում ընկնում է ժխտման ածանցին նախորդող վանկի վրա, երկրորդ դեմքում՝ ժխտման ածանցի, իսկ երրորդ դեմքում՝ վերջին վանկի վրա (հոգնակի թվում՝ հոգնակերտ ածանցի վրա):

Օր. (Ben) yazmam. - (Ես) չեմ գրում (չեմ գրի):
(Sen) yazmazsın. - (Դու) չես գրում (չես գրի):
(O) yazmaz. - (Նա) չի գրում (չի գրի):

(Biz) yazmayız. - (Մենք) չենք գրում (չենք գրի):
(Siz) yazmazsınız. - (Դուք) չեք գրում (չեք գրի):
(Onlar) yazmaz(lar). - (Նրանք) չեն գրում (չեն գրի):

(Ben) okumam. - (Ես) չեմ կարդում (չեմ կարդա):
(Sen) okumazsın. - (Դու) չես կարդում (չես կարդա):
(O) okumaz. - (Նա) չի կարդում (չի կարդա):

(Biz) okumayız. - (Մենք) չենք կարդում (չենք կարդա):
(Siz) okumazsınız. - (Դուք) չեք կարդում (չեք կարդա):
(Onlar) okumaz(lar). - (Նրանք) չեն կարդում (չեն կարդա):

(Ben) gülmem. - (Ես) չեմ ծիծաղում (չեմ ծիծաղի):
(Sen) gülmezsin. - (Դու) չես ծիծաղում (չես ծիծաղի):
(O) gülmez. - (Նա) չի ծիծաղում (չի ծիծաղի):

(Biz) gülmeyiz. - (Մենք) չենք ծիծաղում (չենք ծիծաղի):
(Siz) gülmezsiniz. - (Դուք) չեք ծիծաղում (չեք ծիծաղի):
(Onlar) gülmez(ler). - (Նրանք) չեն ծիծաղում (չեն ծիծաղի):

Ընդարձակ ներկա ժամանակի հարցական ձևը կազմվում է դերբայի, - mi (mi, mu, mü) - հարցական մասնիկի և ստորոգման ածանցի միջոցով: Շեշտն ընկնում է դերբայի վերջին վանկի վրա, իսկ երրորդ դեմքի հոգնակի թվում՝ - lar (ler) - ածանցի վրա:

Օր. (Ben) çalışır mıyım? - (Ես) աշխատո՞ւմ եմ (կաշխատե՞մ):
(Sen) gelir misin? - (Դու) գալի՞ս ես (կգա՞ս):
(O) gider mi? - (Նա) գնո՞ւմ է (կգնա՞):

(Biz) yazar mıyız? - (Մենք) գրո՞ւմ ենք (կգրե՞նք):
(Siz) konuşur musunuz? - (Դուք) խոսո՞ւմ եք (կխոսե՞ք):
(Onlar) yürür(ler) mi? - (Նրանք) քայլո՞ւմ են (կքայլե՞ն):

Հարցական - ժխտական ձևը կազմվում է համապատասխան դերբայի ժխտական ձևի, - mi, mi - հարցական մասնիկների և դրանց կցվող ստորոգման ածանցների միջոցով:

Օր. (Ben) konuşmaz mıyım? - (Ես) չե՞մ խոսում (չե՞մ խոսի):
(Sen) gezmez misin? - (Դու) չե՞ս զբոսնում (չե՞ս զբոսնի):
(O) gelmez mi? - (Նա) չի՞ գալիս (չի՞ գա):

(Biz) gitmez miyiz? - (Մենք) չե՞նք գնում (չե՞նք գնա):
(Siz) sormaz mısınız? - (Դուք) չե՞ք հարցնում (չե՞ք հարցնի):
(Onlar) çalışmaz(lar) mı? - (Նրանք) չե՞ն աշխատում (չե՞ն աշխատի):

§ 52 Ըղծական եղանակ - İstek Kipi

Ըղծական եղանակն արտահայտում է իղծ, ցանկություն, ինչպես նաև երկրնտրանք և կասկած: Ըղծական դերբայը կազմվում է բաղաձայն հնչյունով վերջացող բայահիմքին - a, e - և ձայնավոր հնչյունով վերջացող բայահիմքին - ya, ye - վերջածանցների կցմամբ: Ըղծական եղանակն ունի երկու ժամանակաձև՝ ներկա ապառնի և անցյալ:

Ըղծական ներկա ապառնի ժամանակաձևը կազմվում է համապատասխան դերբայի և ստորոգման ածանցների միջոցով:

Օր. (Ben) alayım - (Ես) վերցնեն
(Sen) gelesin - (Դու) գաս
(O) gide - (Նա) [զնա]
(Biz) konuşalım - (Մենք) խոսենք
(Siz) okuyasınız - (Դուք) կարդաք
(Onlar) rica edeler - (Նրանք) [խնդրեն]

Հարցական ձևը կազմվում է համապատասխան դերբայի, ստորոգման ածանցների և - mi (mi, mu, mü) - հարցական մասնիկի միջոցով:

Օր. Alayım mı? - Վերցնե՞մ:
Gidesin mi? - Գնա՞ս:
Gele mi?- Գա՞:
Okuyalım mı? - Կարդա՞նք:
Yazasınız mı? - Գրե՞ք:
Çalışalar mı? - Աշխատե՞ն:

Այս ժամանակաձևի ժխտականը ժամանակակից թուրքերենում կիրառվում է միայն առաջին և երկրորդ դեմքերում:

Օր. almayayım - almıyayım - չվերցնեն
görmeyeyim - görmiyeyim - չտեսնեն

§ 53 Ենթակայական դերբայ / an ekiyle kurulan ortaçlar

Ենթակայական դերբայը կազմվում է - an, en - ածանցների օգնությամբ (ծագել է gam, gem և kan, ken ձևերից), որը կցվում է բայահիմքին: Երբ բայահիմքը վերջանում է ձայնավոր հնչյունով, ապա նրա և - an, en - ածանցների միջև դրվում է - y - հնչյունը: Շեշտն ընկնում է - an, en - ածանցի վրա:

Օր. çalışan - աշխատող
gelen - եկող
okuyan - կարդացող

Դերբայով արտահայտված գործողության ժամանակը որոշվում է.

ա) ըստ ժամանակի պարագայի.

Her gün size gelen adam nerededir? - Ամեն օր ձեզ մոտ եկող մարդը որտե՞ղ է:

բ) ըստ ստորոգյալի.

Sokakta duran adam sizi çağırıyor. - Փողոցում կանգնած մարդը ձեզ է կանչում:

գ) ըստ նախադասության ընդհանուր իմաստի.

Bu evde oturan adamı görmedim. - Այս տանն ապրող մարդուն չտեսա:

Այս դերբայի ժխտական ձևը կազմվում է բայահիմքի, - ma, me - ժխտման ածանցների և - an, en - դերբայական ածանցների կցման միջոցով: Տվյալ դեպքում ժխտման ածանցի - a, e - լայն ձայնավորները համապատասխանաբար կարող են հնչյունափոխվել - ı, i - նեղ ձայնավորների:

Օր. çalışmayan - çalışmıyan - չաշխատող
gelmeyen - gelmiyen - չեկող

§ 54 Մակբայական դերբայներ - Ulaç, Zarf - Fiil

Թուրքերենում կան մեծ թվով մակբայական դերբայներ և մակբայական դերբայի նշանակություն ունեցող ձևեր: - ip (ip, up, üp) - ածանցը, կցվելով բայահիմքին, կազմում է մակբայական դերբայ և ցույց է տալիս գործողություն կամ վիճակ, որը նախորդում է գլխավոր (բացատրվող) գործողությանը: Եթե բայահիմքը վերջանում է ձայնավորով, ապա նրա և - ip (ip, up, üp) - ի միջև դրվում է - y - հնչյունը (yıp, yip, yup, yüp): Շեշտն ընկնում է մակբայական ածանցի վրա:

Օր. Erdem, bizi bekleyip gitti. - Էրդեմը, մեզ սպասելով, գնաց:
Orhan, eve dönüp parasını aldı. - Օրհանը, տուն վերադառնալով, փողը վերցրեց:
Kadın pencereyi açıp çocuğu çağırdı. - Կինը, պատուհանը բացելով, երեխային կանչեց:

ip - ով կառույցները կարող են ցույց տալ գործողություն բոլոր ժամանակներում: Ժամանակը որոշվում է.

ա) նախադասության ստորոգյալով.

Orhan, telefon edip beni tiyatroya çağırdı. - Օրհանը, ինձ զանգահարելով, կանչեց թատրոն:

բ) ժամանակի պարագայով.

Yarın evde kalıp makaleyi yazacağım. - Վաղը, տանը մնալով, հոդվածն եմ գրելու:

Բայահիմքը և - inca (ince, unca, ünçe) - ածանցը կազմում են մակբայական դերբայ, որը արտահայտում է ժամանակի պարագա: Եթե բայահիմքը վերջանում է ձայնավոր հնչյունով, ապա - inca - ածանցից առաջ դրվում է - y - հնչյունը: Ժամանակահատվածը, որը բաժանում է գլխավոր գործողությունը երկրորդականից, սովորաբար կարճ է:

Օր. Çocuk annesine görünce güldü. - Երեխան մորը տեսնելուն պես ծիծաղեց:

Sabah olunca, yola çıktık. - Հենց որ լուսացավ, ճանապարհ ընկանք:
(Լուսանալուն պես ճանապարհ ընկանք):

İyi haberini alınca, hepimiz çok sevindik. -
Հենց (որ) լսեցինք լավ լուրը, բոլորս շատ ուրախացանք:
(Լավ լուրն առնելուն պես բոլորս շատ ուրախացանք):

Namık, fikrini söyleyince hepimiz itiraz ettik. -
Հենց (որ) Նամըքը հայտնեց իր միտքը, բոլորս առարկեցինք:

inca - ով կառույցները կարող են արտահայտել գործողություն անցյալ, ներկա և ապառնի ժամանակներում: Գործողության ժամանակը որոշվում է ստորոգյալով:

Օր. Harp bitince kardeşim eve döndü. -
Երբ պատերազմը վերջացավ, եղբայրս վերադարձավ տուն:

Zil çalınca öğrenciler dershaneye giriyorlar. -
Ջանգը հնչելուն պես աշակերտները մտնում են դասարան:

mca - ածանցը, կցվելով *gelmek* բայի հիմքին, կարող է նշանակել նաև «ինչ վերաբերում է»:

Օր. *Bana gelince* - Ինչ վերաբերում է ինձ:

§ 55 Թերի օժանդակ բայից կազմված *iken* մակբայական դերբայը

iken (*ken*)-ը, չենթարկվելով ձայնավորների ներդաշնակության օրենքին, կցվում է ոչ թե բայահիմքին, այլ ժամանակային ածանցին՝ կազմելով մակբայական դերբայ: Այս միջոցով կազմված կառույցն արտահայտում է գործողության ժամանակը կամ հակադրում է մեկ գործողությունը մյուսին:

iken-ը կցվում է ժամանակային բոլոր ածանցներին՝ բացառությամբ անցյալ ժամանակաձևի: Ժամանակակից թուրքերենում ավելի հաճախ այն կիրառվում է ընդարձակ ներկա ժամանակաձևի հետ:

Օր. *alıyorken* (*alıyor iken*) - վերցնելիս
alacakken (*alacak iken*) - վերցնելու ժամանակ
alıırken (*alıır iken*) - վերցնելիս
almışken (*almış iken*) - վերցրած ժամանակ

Selim, yerken konuşmuyor. - Սելիմն ուտելիս չի խոսում:

Ahmet, İstanbul'a giderken yanına geldi. - Ահմեդը Ստամբուլ գնալիս եկավ ինձ մոտ:

§ 56 *başka, için* հետադրությունները - *İlgeç / Sontakı*

- *başka* - բառը ածականական կիրառությամբ նշանակում է «ուրիշ, այլ», որպես հետադրություն նշանակում է «բացի»: Հետադրությունից առաջ գոյականներն ու դերանունները (կապի խնդիրները) ստանում են բացառական հոլովի ածանց:

Օր. *Benden başka.* - Ինձնից բացի:
Benden başka kimse gelmedi. - Ինձնից բացի՝ ոչ ոք չեկավ:
Ekmekten başka peynir de alacağım. - Հացից բացի՝ պանիր էլ եմ գնելու:
Bu odada iki masadan başka bir şey yok. - Այս սենյակում, բացի երկու սեղանից, ոչինչ չկա:

Öz kardeşimden başka, iki üvey kardeşim de var. -

Հարազատ եղբորիցս բացի երկու խորթ եղբայր էլ ունեմ:

için հետդիրը արտահայտում է գործողության նպատակի իմաստ և համապատասխանում է հայերենի «համար, հանուն», երբեմն էլ «պատճառով» ձևերին:

Օր. *Kimin için?* - Ո՞ւմ համար:
Kitabınızı iki gün için verir misiniz? - Ձեր գիրքը երկու օրով կտա՞ք:
Süleyman için oyuncak aldım. - Սուլեյմանի համար խաղալիք գնեցի:
Sen de dinle, bunu senin için söylüyorum. - Դու էլ լսիր, սա քեզ համար եմ ասում:

§ 57 ara, uğur, üst, alt, yan, karşı, doğru անունների կապական կիրառությունը

ara գոյական անունը (մեջտեղ) կապական կիրառության դեպքում դրվում է հոգնակերտ ածանց ստացած գոյականներից հետո՝ մատնացույց անելով տարածություն, ժամանակահատված կամ որոշակի միջավայր:

Գոյականը թվական որոշիչ ունենալու դեպքում ara-ից առաջ դրվում է եզակի թվով: ara բառը կապական կիրառության դեպքում ստանում է երրորդ դեմքի եզակի թվի պատկանելիության ածանց և ներգոյական հոլովի ածանց՝ հոլովվելով պատկանելիության ածանց ստացած մյուս գոյականների նման (ara + sı + n + da = arasında):

Օր. İki köy arasında bir koruluk var. - Երկու գյուղի միջև մի պուրակ կա:

Bu köyler arasında beş kilometrelik bir mesafe var. -

Այս գյուղերի միջև հինգկիլոմետրանոց մի տարածություն կա:

Bu büyük olaylar arasında on yıl geçmiştir. -

Այս մեծ իրադարձություններից (իրադարձությունների միջև) անցել է տասը տարի:

Անձնական դերանունը ara-ից առաջ ստանում է սեռական հոլովի ածանց՝ վերածվելով ստացական դերանվան, իսկ ara բառը ստանում է համապատասխան պատկանելիության ածանց: Խոսակցական լեզվում դերանունը կարող է զեղչվել:

Օր. Ali ile onun arasında. - Ալիի և նրա միջև:

Aramızda hasta yok. - Մեր մեջ հիվանդ չկա:

Armen ile benim aramda. - Արմենի և իմ միջև:

Եթե ստացական դերանունը բաց է թողնվում, ara կապական բառը ստանում է հոգնակի թվի ածանց:

Օր. Talebeler bu meseleyi kendi aralarında hallettiler. -

Ուսանողներն այս հարցը իրենք իրենց մեջ լուծեցին:

- uğur (-ğru) - (երջանկություն, բախտ) բառը կապական կիրառության դեպքում ստանում է պատկանելիության ածանց, ներգոյական կամ տրական հոլովի ածանց (uğur + u + n + a = uğruna; uğur + u + n + da = uğrunda) և նշանակում է «հանուն, համար»:

Օր. Onlar memleketin hürriyeti uğrunda savaşıyorlar. -

Նրանք պատերազմում են հանուն երկրի ազատության:

üst (վերև, վերին) բառը կապական կիրառության դեպքում նշանակում է «վրա» կամ «վրայից» (բացառական հոլովի դեպքում): üst բառը կապական կիրառության դեպքում ստանում է հոգնակի թվի երրորդ դեմքի պատկանելիության ածանց և տրական, ներգոյական կամ բացառական հոլովի ածանցներ (üst + ü + n + e = üstüne, üst + ü + n + de = üstünde, üst + ü + n + den = üstünden):

Օր. Masanın üstünde bir şey yok. - Սեղանի վրա ոչինչ չկա:

Lambayı masanın üstüne koy. - Լամպը դի՛ր սեղանի վրա:

Kitabımı masanın üstünden kim aldı? - Գիրքս սեղանի վրայից ո՞վ վերցրեց:

Վերացական գոյական անունը üst բառից առաջ հոլովական ածանց կարող է չստանալ:

Օր. Suç üstünde (suçüstü) yakalamak. - Հանցանքի վրա բռնել:

alt (ներքև, ներքևի, ստորին) բառը կապական կիրառությամբ նշանակում է «ներքևում, տակը»: Գոյական անունները և դերանունները որպես կապի խնդիր ստանում են սեռական հոլովի ածանց: Կապական կիրառության ժամանակ alt բառը ստանում է եզակի թվի երրորդ դեմքի պատկանելիության ածանց և ներգոյական, տրական կամ բացառական հոլովի ածանց:

Օր. Masanın altında bir kutu var. - Սեղանի տակ մի տուփ կա:
Karyolanın altına koyma. - Մահճակալի տակ մի՛ դիր:

Armen'in kitabını dolabın altından çıkarmak istiyorum. -
Արմենի գիրքը պահարանի տակից ուզում եմ հանել:

yan (կողք, կողմ) բառը կապական կիրառության դեպքում նշանակում է «մոտ, կողքին»:
yan բառը կապական կիրառության դեպքում ստանում է եզակի թվի երրորդ դեմքի պատկանելիության ածանց և ներգոյական, տրական, բացառական հոլովների ածանցներ (yan + 1 + n + da = yanında, yan + 1 + n + a = yanına, yan + 1 + n + dan = yanından): Գոյական անունները և դերանունները - yan - բառից առաջ ստանում են սեռական հոլովի ածանց:

Օր. Evin yanında büyük bir mağaza var. - Տան մոտ մի մեծ խանութ կա:
Orhan, yarın babasının yanına gidecek. - Օրհանը վաղը գնալու է հոր մոտ:
İbrahim, annesinin yanından döndü. - Իբրահիմը վերադարձավ իր մայրիկի մոտից:

Անձնական դերանունը yan-ից առաջ ստանում է սեռական հոլովի ածանց՝ վերածվելով ստացական դերանվան, իսկ yan բառը՝ համապատասխան պատկանելիության ածանց:

Օր. (Benim) yanımda - ինձ մոտ (Bizim) yanımızda - մեզ մոտ
(Senin) yanında - քեզ մոտ (Sizin) yanınızda - ձեզ մոտ
(Onun) yanında - նրա մոտ (Onların) yanında (yanlarında) - նրանց մոտ

karşı «դիմացի, հակառակ» բառը կապական կիրառության դեպքում նշանակում է «դեմ, առջևում, ընդդեմ»: Գոյական անունները և դերանունները որպես կապի խնդիր ստանում են սեռական հոլովի ածանց: karşı բառը ստանում է պատկանելիության, ինչպես նաև ներգոյական, տրական, բացառական հոլովի ածանցներ (karşı + s1 + n + da = karşımda, karşı + s1 + n + a = karşıma, karşı + s1 + n + dan = karşımdan):

Օր. Öğretmen öğrencilerin karşısında oturuyor. - Ուսուցիչը նստում է աշակերտների դիմաց:

Անձնական դերանունը կարող է ստանալ սեռական հոլովի ածանց՝ վերածվելով ստացական դերանվան, իսկ karşı բառը՝ համապատասխան պատկանելիության ածանց:

Օր. Benim karşımda - Իմ առջև, իմ դիմաց

karşı բառը «ընդդեմ» իմաստով կիրառվելիս պահանջում է գոյականների և դերանունների տրական հոլովով կիրառություն:

Օր. Sana karşı değilim. - Ես քեզ դեմ չեմ:
Toplantıda teklifime karşı kimse bir şey söylemedi. -
Ժողովում, ընդդեմ իմ առաջարկի, ոչ ոք ոչինչ չասաց:

doğru բառը (ուղիղ, ճիշտ, ճշմարիտ) կապական կիրառությամբ նշանակում է «դեպի, ուղղությամբ»: Գոյական անունը և դերանունը doğru բառից առաջ ստանում են տրական հոլովի ածանց:

- Օր. Biz ormana doğru gittik. - Մենք գնացինք դեպի անտառ:
Görüşmede anlaşmaya doğru bir adım atıldı. -
Հանդիպման ժամանակ համաձայնագրի ուղղությամբ մի քայլ կատարվեց:

§ 58 Որոշիչների շարադասությունը

Թուրքերեն նախադասության մեջ տարբեր խոսքի մասերով արտահայտված մի քանի որոշիչ առկայության դեպքում որոշյալին անմիջապես նախորդում է գոյական անուն - որոշիչը, այնուհետև՝ ածականը, թվականը և դերբայը:

- Օր. Ormanın öte tarafında bulunan iki yeni istirahat evi var. -
Անտառի մյուս կողմում գտնվող երկու նոր հանգստյան տուն կա:

Որոշիչների վերոհիշյալ շարադասությունը խախտվում է, և անմիջականորեն որոշյալից առաջ դրվում են ածականը կամ դերբայը, եթե իրենց վրա են կրում տրամաբանական շեշտը:

Բառարան - Sözlük

acele etmek - շտապել	dolu - I լի, լիքը
âdet (-ti) - սովորույթ, սովորություն	dolu - II կարկուտ
âdeta - 1. գրեթե, հազիվ, համարյա (թե) 2. սովորաբար	düşünmek - մտածել
adım - քայլ	eğri - ծուռ, կոր
akarsu (-yu) - գետ, գետակ, առու	erimek - հալվել
anlaşma (antlaşma) - համաձայնագիր	fış - 1. քարտ, կտրոն 2. մետաղանիշ, ժետոն
aydınlatmak - լուսավորել	gerçek (-ği) - 1. իրական, ճիշտ 2. ճշմարտություն, իսկություն, իրականություն
batmak - 1. խորտակվել, սուզվել (ջրասույզ լինել) 2. մխրձվել	gerçekten - իսկապես, հիրավի, իրոք
belki - գուցե, թերևս	görüşme - բանակցություն, հանդիպում
beslemek - սնուցել, կերակրել, սնունդ տալ	hak (-kkı) - իրավունք
beslenmek - կերակրվել, սնվել	halletmek - որոշել, վճռել, լուծել
beyhude (boşuna, nafîle) - անտեղի, իզուր, անհետևանք, ապարդյուն	hürriyet (-ti) - ազատություն
bluz - վերնաշապիկ (կանացի)	ılık - գոլ
buhran - ճգնաժամ	ısıtmak - 1. տաքացնել 2. ջեռուցել
buz tutmak - սառցակալել	iade etmek - վերադարձնել
derin - խոր	idare etmek - ղեկավարել
dert (-di) - տառապանք, ցավ, վիշտ, դարդ	ihtiraz etmek (sakınmak) - զգուշանալ
dinmek - վերջանալ, դադարել	ileri - առաջ
doğa (tabiat) - բնություն	ilkbahar - գարուն
	ise - իսկ
	işitmek - լսել

iştirak - մասնակցություն
 iştirak etmek - մասնակցել,
 մասնակցություն ունենալ
 itiraz etmek - առարկել
 kadir (-diri) - արժեք (ղաղթ)
 kalp (-bi) (gönül, yürek) - սիրտ
 kardan adam - ձնեմարդ
 kartopu (-nu) - ձնագնդիկ, ձնագունդ
 katlamak - 1. ծալել 2. բազմապատկել
 keman - ջութակ
 kez (kere, defa) - անգամ
 kır - դաշտ, մարգագետին
 kırılmak - կոտրվել
 kıymet (-ti) - արժեք
 koli - փաթեթ
 konmak (konar) - թառել
 konmak (konur) - koymak բայի
 կրավորական սեռը
 kontrol etmek - ստուգել
 koru - պուրակ, անտառակ
 kusur - թերություն
 lamba - լամպ
 makale - հոդված
 mesafe - տարածություն
 mesele (sorun) - հարց, խնդիր
 mevsim - տարվա եղանակ
 meyve (meyva) - միրգ
 müsait (elverişli) - ձեռնտու, հարմար
 okuma salonu - ընթերցասրահ
 olgunlaşmak - հասունանալ
 ortalık (-ğı) - շրջապատ, տեղանք
 oyuncak (-ğı) - խաղալիք
 örtülmek - ծածկվել
 özel - հատուկ

özlemek - կարոտել, նեղվել
 sahiden - իսկապես, իրոք
 sanmak - կարծել
 savaş - պատերազմ
 savaşmak - պատերազմել
 sebze - 1. բանջարեղեն 2. կանաչեղեն
 sebze bahçesi (bostan) - բանջարանոց
 sert (-ti) - պինդ, ամուր, կարծր
 sevinmek - ուրախանալ
 seyrek - ծանծաղ, ցանցառ (նոսր)
 su (-yu) - ջուր
 şiddetli - ուժեղ, սաստիկ
 taahhüt (-dü) - պարտավորություն
 taahhütlü - պատվիրված
 tahrir (-bi) - կործանում, ավերում
 tahrir etmek - քանդել, կործանել
 ոչնչացնել, ջախջախել
 takvim - օրացույց
 tanımak - ճանաչել
 tanınmış - ճանաչված
 teklif - առաջարկություն
 telgraf - հեռագիր
 tür - տեսակ
 ufak tefek - մանր - մունր
 ulak (-ğı) - թղթատար, ցրիչ
 yahut - կամ
 yakalamak - ձերբակալել, բռնել
 yanılmak - սխալվել
 yaratmak - ստեղծել, ստեղծագործել, արարել
 yasak (-ğı) - 1. արգելք 2. արգելված
 yaşamak - ապրել
 yeryüzü (-nü) - երկրագունդ,
 երկրի մակերեկույթ (երկրի երես)
 yetişkin - հասուն, չափահաս, հասունացած

Վարժություններ - Ալիստրմալար

1. Վարդալ և թարգմանել հայերեն:

Bu yıl yaz sanki hiç gelmeyecek gibi. Haziranın yirmisi oldu, hâla yağmur fırtına dinmiyor. Nitekim bu sabah balkon kapısının çarpmasıyla yatağımdan fırladım. Sabaha karşı fırtına çıktı. Karen odama geldi.

- Şu hale bak, - dedi. - Sanki kış geri geldi.

Ermenistan'da yaz genellikle âniden bastırır. İlkbahar mevsimi daha başlamadan biter. Yazlar sıcak ve kurak, kışlar ise soğuk ve yağışlıdır. Kışın her taraf kalın bir kar tabakasıyla örtülür. İlkbahar ve sonbaharda yağın dolu, her yıl ürünün büyük bir kısmını tahrir eder. Ermenistan'ın kayısı, dutu, elması çok tanınmıştır. Herkes dört gözle eylül bekler, çünkü o ay üzüm olgunlaşır.

Kış burada çok soğuk geçer. Kasım o kadar soğuk olur ki, sabahları sokaklar buz tutar. Kış mevsimi yetişkinler için dert yaratır, fakat çocuklar kışı sever. Kartopu oynar ve kardan adam yaparlar.

Bazı insanlar yazı sever, bazıları ise kışı. Ermenistan'da deniz yoktur, bundan dolayı insanlar yüzmek için Sevan gölüne giderler. Sevan'da yüzmek kolay değildir. Soğuk dağ akarsularıyla beslenen bir göl olan Sevan, yılda ancak iki ay boyunca, temmuz ve ağustos aylarında yüzmeye uygundur. Kışları ise gölün büyük bir bölümü buz tutar.

* * *

Okulumuz

Sabahleyin erkenden,
Kahvaltımı yapınca
Koşarım okula ben.

Okul bizim evimiz,
Onu pek çok severiz.

Okumayı, yazmayı,
Düzgün konuşmayı biz
Okulda öğreniriz.

Okul bizim evimiz,
Onu pek çok severiz.

Kardeşlik sevgisini,
Hayatın kendisini,
O öğretir bizlere.

Okul bizim evimiz,
Onu pek çok severiz.

/Göktürk Mehmet Uytun/

2. Պատասխանել հետևյալ հարցերին:

Postaneye kimler gidiyor? _____

Postanede araba park yeri var mı? _____

Kim paket bölümüne gidiyor? _____

Pakette kırılacak bir şey var mı? _____

Armen annesine telgraf çekiyor mu? _____

Kim annesine telefon ediyor? _____

3. Կազմել նախադասություններ:

Kahve - içmek - gelmek. - Kahve içip geleceğim.

Haber - vermek - gelmek. _____

Mektup - yazmak - gitmek. _____

Ders - çalışmak - uyumak. _____

Biraz - dinlenmek - çıkmak. _____

Araba - park etmek - gelmek. _____

Paket - göndermek - gelmek. _____

4. Նախադասության ստորոգյալը գրել ընդարձակ ներկա ժամանակով:

Aram, kitap okuyor. _____

Arsen, Şam'a gidiyor. _____

Arman, annesine telefon etti. _____

Aram, fakülteye gitti. _____

Tren saat onda hareket etti. _____

Bugün Yerevan'da gezeceğim. _____

Otobüs bu akşam geliyor. _____

Hangisini alıyorsunuz? _____

Paketi açıp kontrol edecekler. _____

Eşyalara bakıp verecekler. _____

Arabaya binip eve gidecekler. _____

5. Նախադասությունները վերլուծել և թարգմանել հայերեն:

Ayda bir iki kez tiyatroya giderim. Ahbabım dedi: «Bu akşam bana gel. Bunu da konuşuruz». Ablanız gelir mi? - Kim bilir, belki gelir. Pazar günleri çalışmayız, istirahat ederiz. Lütfen şu kalemi bana verir misiniz? Siz çay sevmez misiniz? - Hiç sevmiyorum. Ben kahve severim. Biraz bekle, ben yarım saat sonra gelirim. Benim de portremi yapar mısınız? - Bizim işimiz bu. Tabii yaparım. Ben piyano çalmam, ama keman çalarım. Bu kitap sana çok lâzımdır. Yarın gider, bulursun. Kardeşin var mı? - Bir kardeşim var. Benden büyük. - Ne iş yapar? - İşçidir, fabrikada çalışır. Ne? Yatmak mı dedin? E, bunu unut, kardeşim. Önce akşam yemeği yeriz, sonra satranç oynarız, eh ondan sonra da yatarız. Sigara içmez misiniz? - Hiç içmem. O adamı beğenirim. Buna ne dersiniz?

6. Հետևյալ բայերը խոնարհել ընդարձակ ներկա ժամանակի հաստատական, հարցական, ժխտական և հարցական ժխտական ձևերով:

Almak, bilmek, bitirmek, bakmak, başlamak, bulunmak, kalmak, beklemek, çıkarmak, satmak, idare etmek, doğmak, ölmek, binmek, dinlemek, devam etmek, gelmek, gitmek, kalkmak.

7. Հետևյալ բայերը գրել ընդարձակ ներկա ժամանակաձևով:

Görüyorsun _____

Görmüyorsun _____

Bakıyorsun _____

Bakıyor musunuz? _____

Bakmıyorum _____

Bakıyor musun? _____

Oynuyor _____

Oynamıyor _____

Oynamıyorlar mı? _____

Oturuyor muyuz? _____

Yanılıyorlar _____

Yanılmıyorlar mı? _____
Öğreniyorsunuz _____
Öğreniyor musunuz? _____
Koşmuyorum _____
Tekrar etmiyoruz _____
Tekrar ediyor muyuz? _____
Tekrar etmiyor muyuz? _____
Karıyorsun _____
Kapamıyor musun? _____
Karıyorum _____
Kapamıyorum _____
Beğenmiyor musunuz? _____
Gülmüyorum _____
İkram etmiyoruz _____
Şaşıyorlar _____
Yürüyorsun _____
İniyor _____
İnmiyor _____
Çekmiyorum _____
Çekiyor musunuz? _____

8. Բացել փակագծերը և նախորդող անունը դնել անհրաժեշտ հոլովով:

Bu (için) ben de gelmedim. _____
Bu (sonra) o (ile) konuşmam. _____
Kalem (ile) ne yaparlar? _____
Dershanede talebeler (başka) kimse yok. _____
Kardeşim (için) bir şey söylemedi mi? _____
Sen (ile) beraber kim vardır? _____
Ne (için) buraya uğradın? _____
Ben (önce) işe başlamayın. _____
Bunu kim (için) yaptınız? _____
Spor (başka) kitap okumayı sever. _____
Üç saat (sonra) sizi bulur, alırım. _____
Bileti hangi film (için) satın aldınız? _____
Ders on üç dakika (önce) başladı. _____
Bütün bunları biz (için) mi yaptınız? _____

9. Նախադասությունները գրել ըստ օրինակի:

Babam yatağa yattı. - Yatağa yatan babam.

Kızım radyoyu açtı. _____

Amcaoğlum her gün jimnastik yapar. _____

Arkadaşımız okuma salonundadır. _____

Oğlum beni kolumdan tutuyor. _____

Küçük Orhan dersine çalışmayı sevmiyor. _____

Anne, kızın elinden çekiyor. _____

Adam bu sabah tıraş olmayı unuttu. _____

Çilingir bu işi yapmaya razı olmadı. _____

10. Հետևյալ նախադասությունները թարգմանել թուրքերեն:

Հավանաբար աշխարհում չկա այնպիսի մի մարդ, որը չսիրի զարուհը: Իհարկե, ոմանք նախընտրում են ամառը, աշունը և նույնիսկ ձմեռը (օրինակ՝ դահուկորդները): Բայց մարդկանց մեծ մասը սիրում է զարուհը: Գարնանը բնությունն արթնանում է ձմռան խորը քնից: Արևը ծագում է շուտ և մայր է մտնում ուշ: Օրերը երկարում և տաքանում են: Օդի ջերմաստիճանը միշտ բարձր է լինում գրոյից: Մարտի վերջին երբեմն ձյուն է տեղում, իսկ ապրիլին կանաչում են դաշտերը, ավելի ուշ՝ ծառերը: Մայիսը անշուշտ գարնան ամիսներից ամենագեղեցիկն է: Շուրջն ամենուր կանաչ և լուսավոր է: Նույնիսկ ամպրոպն ու անձրևը հաճելի են շատերի համար: Հանգստանալու և մաքուր օդ շնչելու նպատակով հաճախ մեկնում ենք քաղաքից դուրս: Գարնանը մենք նշում ենք մի քանի տոներ: Դրանցից է Մայրության և գեղեցկության տոնը, որը նշվում է ապրիլի 7-ին:

11. Փորձենք գրուցել:

11.1 Փոստատանը

- İşte postaneye geldik. Şurada bir yere park edelim.
- Postanenin önünde park yeri yok. Arabayı nereye park edeceksin?
- Yüz metre kadar ileride park yeri var. Sen burada in, ben gelir, seni bulurum.
- Ben paket bölümüne gidiyorum. Oraya gel. Biliyorsun paket bölümü alt katta. Orada işim biraz uzun sürer. Paketi açıp kontrol edeceklersin, sonra tekrar sarıp tartacaklar.
- Pakette kırılacak bir şey yok ya?
- Yok. Anneme bir bluz aldım. Biliyorsun gelecek pazar anneler günü. Sahi sen annene hediye almadın mı?
- Almadım, vaktim yok. Ama bu mektubu ona yazdım, buraya davet ettim.
- Biraz geç kalmadın mı? Mektubu alacak, karar verecek, hazırlanacak, yola çıkacak... pazar günü buraya varır mı?
- Pazara daha dört gün var. Mektup en geç iki gün sonra eline geçer.
- Sen mektubu bana ver. Benim de bir mektubum var. İkisini de postaya veririz. Memurla konuşur, taahhütlü veya özel ulakla gönderirim. O zaman daha erken alır. Ama en iyisi arabayı park edip gel, annene bir telgraf çekelim.
- Hem mektup, hem telgraf mı?
- Telgrafı şöyle çekeriz: “Pazar günü burada ol. Mektup postada. Bülent.”
- Kalpten ölür. En iyisi telefon edeyim. “Ben gelmiyorum, sen gel. Seni çok özledim” derim.
- Haklısın. Telefon et daha iyi.
- Oldu. Ben telefona gidiyorum.
- Ben de paketi koliye vereyim.

11.2 Մայրերի օրը

- Taahhütlü mektup kaç lira?
- Yurt içi mi, yurt dışı mı?
- Yurt içi.
- Yirmi lira.
- İadeli taahhütlü mektup ne kadar?
- Kırk lira.
- Mektup iki günde İstanbul'a varır mı?
- İki günde İstanbul'a yetişir. Ama özel ulak çok daha hızlı. Yirmi dört saat içinde istediğiniz yere varır.
- Öyleyse özel ulak olsun.
- Lütfen şu fişi doldurun. Adınız, adresiniz, gideceği yeri yazın.
- Bir de ufak paketim var.
- Paketle ne yollayacaksınız?
- Anneme bir bluz yollayacağım. Biliyorsunuz, önümüzdeki pazar anneler günü.
- Haklısınız. Paketi lütfen alt kattaki koli servisine götürünüz.
- Teşekkür ederim.

Atasözleri

Çok bilen çok yanılır.
Veren eli herkes öper.
Akan su yosun tutmaz.
Kaçan balık büyük olur.
Sakınılan göze çöp batar.
Bakan göze yasak olmaz.
Rüzgâr eken fırtına biçer.
İşleyen demir pas tutmaz.
Kesilen baş yerine konmaz.
Oynamayan kız yer dardır der.
Gözümüzü açalım yoksa açarlar.
Uyuyan yılanın kuyruğuna basma.

Կայուն բառակապակցություններ

1. Temiz hava almak - մաքուր օդ շնչել
2. Noel ağacı - եղևնի, տոնածառ (ամանորյա)
3. Elinden geleni yapmak - հնարավոր ամեն ինչ անել, ձեռքից եկածն անել
4. Atasözü - առած (հայրերի խոսք)
5. Kimi insanlar (bazı insanlar) - որոշ մարդիկ
6. Üstün tutmak - նախընտրել
7. Gece gündüz - գիշեր - ցերեկ
8. Bundan dolayı - այս պատճառով
9. Dert yaratmak - հոգս ստեղծել
10. Dört gözle - անհամբերությամբ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ - ONUNCU DERS

§ 59 Բայի սեռը - Eylemde Çatı

1. Բայի կրավորական սեռը - Edilgen Çatı / Edilgen Eylem

Կրավորական սեռը ցույց է տալիս, որ տրամաբանական սուբյեկտը ենթարկվում է ստորոգյալով արտահայտված գործողության ազդեցությանը: Բաղաձայն հնչյունով (բացառությամբ - l - հնչյունի) վերջացող բայահիմքերին կցվում է կրավորական սեռի - ıl (il, ul, üil) - ածանցը:

Օր.	birakmak - թողնել	birakılmak - թողնվել
	seçmek - ընտրել	seçilmek - ընտրվել
	ölmek - չափել	ölümek - չափվել
	vermek - տալ	verilmek - տրվել

Երկվանկ բայահիմքերին վերոհիշյալ - ıl (il, ul, üil) - ածանցի կցման դեպքում բայահիմքի երկրորդ ձայնավորն ընկնում է:

Օր.	çağırnak - կանչել	çağırılmak - կանչվել
	kavurmak - տապակել, բովել	kavurulmak - տապակվել, բովվել
	devirmek - շրջել	devrilmek - շրջվել
	süpürmek - ավելել	süpürülmek - ավելվել (նաև` süpürülmek)

- l - բաղաձայնով վերջացող բայահիմքերից կրավորական սեռը կազմվում է - in (in, un, ün) - ածանցների կցմամբ:

Օր.	almak - զնել	alınmak - զնվել
	delmek - ծակել	delinmek - ծակվել
	yolmak - պոկել	yolunmak - պոկվել
	bölmek - բաժանել	bölünmek - բաժանվել

Չայնավոր հնչյունով վերջացող բայահիմքերի դեպքում կրավորական սեռը կազմվում է - n - կամ - nil (nil, nul, nül) - ածանցների միջոցով:

Օր.	boyamak - ներկել	boyanmak - ներկվել
	demek - ասել	denmek - ասվել
	okumak - կարդալ	okunmak - կարդացվել
	yemek - ուտել	yenilmek - ուտվել

Անանցողական (չեզոք) բայերի կրավորական սեռի կազմության դեպքում բայահիմքին նախ կցվում են - d (t) կամ - dir - ածանցը, ապա՝ կրավորական սեռի ածանցը:

Օր.	uyanmak - արթնանալ	kurumak - չորանալ
	uyandırmak - արթնացնել	kurutmak - չորացնել
	uyandırılmak - արթնացվել	kurutulmak - չորացվել

2. Բայի անդրադարձ սեռը - Dönüşlü Çatı

Բայի անդրադարձ սեռը ցույց է տալիս, որ գործողությունն անմիջականորեն ազդում է գործողության սուբյեկտի վրա: Անդրադարձ սեռի գործողության ոլորտը զգալիորեն նեղ է, քան կրավորական սեռինը: Անդրադարձ սեռը չի կարող կրավորական սեռի նման կազմվել ցանկացած բայից:

Անդրադարձ սեռը կազմվում է բայահիմքին - n - ածանցի կցմամբ, եթե բայահիմքը վերջանում է ձայնավորով, և - in (in, un, ün) - ածանցի կցմամբ, եթե բայահիմքը վերջանում է բաղաձայն հնչյունով:

Օր. yıkamak - լվանալ yıkanmak - լվացվել
giymek - հագնել giyinmek - հագնվել

Selin güzel giyinir. - Սելինը գեղեցիկ է հագնվում:

Անդրադարձ սեռի ցուցիչով բայը կարող է մնալ անցողական: Տվյալ դեպքում - in - ցուցիչն ունի «իր վրա, իր համար, իրեն» իմաստները:

Օր. Palto(yu) giyindi - Վերարկու(ն) [իր վրա] հագավ: Կամ ավելի պարզ՝ Paltoyu giydi - Վերարկու(ն) հագավ:

Միևնույն բայահիմքին կարող են կցվել երկու կամ երեք սեռի ածանց, ընդ որում՝ կրավորական սեռի ածանցը միշտ դրվում է վերջում:

Օր. Böyle (giy + in + il + ir) giyiniir mi? - Այսպես հագնվո՞ւմ են:

- nil (n + il) - կապակցության առաջին և երկրորդ բաղադրիչները կարող են ունենալ նույն նշանակությունը (yenmek - ուտվել = yenilmek - ուտվել):

Երբեմն - in - մասնիկի կցմամբ կազմվում է մի նոր, սովորաբար անանցողական բայ:

Օր. sevmek - սիրել sevinmek - ուրախանալ

Կրավորական սեռի ցուցիչով բայերը կարող են ունենալ անդրադարձ իմաստ. katılmak - միանալ, մասնակցել:

3. Բայի պատճառական սեռը - Ettirgen Çatı / Ettirgen Eylem

Թուրքերենում բայի պատճառական սեռը ցույց է տալիս մեկի (մի սուբյեկտի) կողմից մյուսին (այլ սուբյեկտի) պարտադրվող գործողություն: Պատճառական սեռը կազմվում է բայի հաստատական ձևին - t, dir (dir, dur, dür), ır (ır, ur, ür) - ածանցների կցմամբ:

Օր. uyumak - uyutmak - քնեցնել (պարտադրել քնել)
okumak - okutmak - կարդալ տալ (պարտադրել կարդալ)
beklemek - bekletmek - սպասեցնել (պարտադրել սպասել)
yüzmek - yüzdürmek - լողացնել (պարտադրել լողանալ)
konuşmak - konuşturmak - խոսեցնել (պարտադրել խոսել)
kaçmak - kaçırmak - ստիպել փախչել (պարտադրել փախչել), փախցնել
içmek - içirmek - խմեցնել (պարտադրել խմել)
bitmek - bitirmek - վերջացնել, ավարտել

4. Բայի փոխադարձ - համատեղ սեռը - İsteş Çatı / İsteş Eylem

Փոխադարձ - համատեղ սեռը ցույց է տալիս մեկից ավելի սուբյեկտների կողմից կատարվող գործողություն, որը համատեղ կամ փոխադարձաբար տարածվում է նրանցից յուրաքանչյուրի վրա: Փոխադարձ - համատեղ սեռը կազմվում է ձայնավոր հնչյունով վերջացող բայահիմքին - *ş* - ածանցի, իսկ բաղաձայն հնչյունով վերջացող բայահիմքին - *ış* (*iş*, *uş*, *üş*) - ածանցների կցմամբ: Փոխադարձ - համատեղ սեռի ածանցը կարող է կցվել սահմանափակ թվով բայերի:

Օր.	beklemek - սպասել	bekleşmek - իրար սպասել
	bakmak - նայել	bakışmak - իրար նայել
	tanımak - ճանաչել	tanışmak - իրար ճանաչել, ծանոթանալ
	görmek - տեսնել	görüştük - իրար հանդիպել, տեսակցել

- Tanışınız! - Ծանոթացե՛ք (ճանաչե՛ք իրար):
- Tanışıyoruz - Ծանոթ ենք (իրար ճանաչում ենք):

Որոշ բայեր, որոնք կազմվում են - *ış* - ածանցի միջոցով, կորցնում են սեռի իմաստն ամբողջությամբ (*çal + ış + mak = çalışmak* - աշխատել) կամ իմաստներից մեկը (*gör + üş + mek = görüşmek* - 1. տեսակցել 2. քննարկել (ինչ-որ բան):

§ 60 Բայի ըղծական - պայմանական խոնարհում - Dilek - Koşul / Şart Kipi

Թուրքերենում բայի ըղծական-պայմանական խոնարհումն արտահայտում է պայման, ցանկություն, թեականություն և կազմվում է բայահիմքին - *sa* (*se*) - ածանցի և երկրորդ խմբի դիմորդ ածանցների կցմամբ (*yap + sa + m*, *yap + sa + n...*):

Օր.	(Ben) alsam. - Եթե (ես) վերցնեմ:	(Biz) konuşsak. - Եթե (մենք) խոսենք:
	(Sen) gelsen. - Եթե (դու) գաս:	(Siz) okusanız. - Եթե (դուք) կարդաք:
	(O) gitse. - Եթե (նա) գնա:	(Onlar) rica etseler. - Եթե (նրանք) խնդրեն:

İçeri girsem, olur mu? - Կլինի՞ ներս մտնեմ:
Ah, biraz yağmur yağsa. - Ա՛խ, (եթե) մի քիչ անձրև գա:

Ժխտական ձևը կազմվում է - *ma*, *me* - ածանցների միջոցով:

Օր.	(Ben) almasam. - Եթե (ես) չվերցնեմ:	(Biz) konuşmasak. - Եթե (մենք) չխոսենք:
	(Sen) gelmesen. - Եթե (դու) չգաս:	(Siz) okumasanız. - Եթե (դուք) չկարդաք:
	(O) rica etmese. - Եթե (նա) չխնդրի:	(Onlar) gitmeseler. - Եթե (նրանք) չգնան:

Հարցական ձևը կազմվում է - *mı*, *mi* - մասնիկների միջոցով:

Օր.	(Ben) konuşsam mı? - Եթե (ես) խոսե՞մ (Արդյոք խոսե՞մ):
	(Sen) gelsen mi? - Եթե (դու) գա՞ս:
	(O) gelse mi? - Եթե (նա) գա՞:

(Biz) konuşsak mı? - Եթե (մենք) խոսե՞նք:
(Siz) konuşsanız mı? - Եթե (դուք) խոսե՞ք:
(Onlar) gelseler mi? - Եթե (նրանք) գա՞ն:

Ըղծական-պայմանական խոնարհումով բայը բարդ ստորադասական նախադասության կազմում սովորաբար ձևավորում է երկրորդական նախադասություն, սակայն այս խոնարհմամբ հնարավոր է նաև կազմել առանձին նախադասություն:

Օր. Birazcik uyusam, dinlensem. - [Եթե] մի քիչ քնեմ, հանգստանամ:

§ 61 Պայմանական եղանակի ցուցիչով կազմված բաղադրյալ ժամանակաձևեր

Պայմանական-բաղադրյալ ժամանակաձևեր կարող են կազմվել բոլոր պարզ ժամանակաձևերից՝ հետևյալ կերպով՝ բայահիմք + ժամանակային ածանց + sa (se) + երկրորդ խմբի դիմորոշ ածանց:

Օր. Alıyorsam - Եթե վերցնում եմ
Aldıysam (aldımsa) - Եթե վերցրի
Alacaksam - Եթե վերցնելու եմ
Alırsam - Եթե վերցնեմ
Almıssam - Եթե վերցրել եմ

Բաղադրյալ պայմանական խոնարհման ժխտական ձևերը կազմվում են համապատասխան պարզ ժամանակաձևերի ժխտական տարբերակներով:

Օր. Almıyorsan - Եթե չես վերցնում
Almadıysan - Եթե չվերցրիր
Almayacaksan - Եթե չես վերցնելու
Almazsan - Եթե չես վերցնի
Almamıssan - Եթե չես վերցրել

§ 62 beri, dolay, itibaren, fazla հետադրությունները

beri, dolay, itibaren, fazla հետադրությունները կիրառվում են բացառական հոլովով դրված անուններից կամ դերանուններից (կապի խնդիրներից) հետո:

beri-ն կապական կիրառությամբ նշանակում է «սկսած, ի վեր»:

Օր. Üç gündən beri buradayız. - Երեք օր է (օրից ի վեր)՝ այստեղ ենք:
Sabahtan beri sizi beklıyorum. - Առավոտից (ի վեր) ձեզ եմ սպասում:

dolay-ն կապական կիրառությամբ նշանակում է «ելնելով, պատճառով»:

Օր. Bundan dolayı. - Սրանից ելնելով:
Hastalığımdan dolayı evde kaldım. - Իմ հիվանդության պատճառով մնացի տանը:

itibaren բառը նշանակում է «սկսած»:

Օր. O gündən itibaren hər gün geliyor. - Այն օրից սկսած՝ նա ամեն օր գալիս է:
Yarımdan itibaren bu işe başlayacağız. -
Վաղվանից (սկսած) սկսելու ենք այս աշխատանքը:

fazla բառը նշանակում է «ավելի, շատ»:

Օր. Yüzden fazla - Հարյուրից ավելի
On kilometreden fazla yol aldık. - Անցանք տասը կիլոմետրից ավելի ճանապարհ:

§ 63 Բառակազմական վերջածանցներ

- ma, me - ածանցները, կցվելով բայահիմքին, կազմում են այնպիսի բայանուն գոյականներ, որոնք ցույց են տալիս գործողություն կամ իրավիճակ:

Օր. ağlamak - լացել
beklemek - սպասել

ağlama - լաց
bekleme - սպասում

Բայանուն գոյականներն ընդունում են պատկանելիության և հոլովական ածանցներ:

Օր. (Benim) gelmem - իմ գալը (գալս) (Bizim) görüşmemiz - մեր հանդիպումը
(Senin) gitmen - քո գնալը (գնալդ) (Sizin) çalışmanız - ձեր աշխատանքը
(Onun) okuması - նրա կարդալը (Onların) gülmeleri - նրանց ծիծաղը
(gülmesi)

Boş oturmayı sevmem. - Պարապ նստել չեմ սիրում:

- lik (lik, luk, lük) - մասնիկները, կցվելով անուններին, կազմում են գոյական անուններ և ածականներ: Հայերենում այս մասնիկին համապատասխանում են «ություն, ոց, ացու, ոտ, ային» ածանցները:

- lik (lik, luk, lük) - մասնիկները, կցվելով ածական անուններին, կազմում են վերացական իմաստով գոյական անուններ:

Օր. kurnaz - խորամանկ
temiz - մաքուր
büyük - մեծ

kurnazlık - խորամանկություն
temizlik - մաքրություն
büyüklük - մեծություն

- lik - մասնիկը, կցվելով գոյական անուններին, արտահայտում է հետևյալ իմաստները.

ա) վերացական հասկացություն.

Օր. düşman - թշնամի
dost - բարեկամ

düşmanlık - թշնամություն
dostluk - բարեկամություն

բ) ղեկավարման մարմին.

Օր. bakan - նախարար
müdür - տնօրեն

bakanlık - նախարարություն
müdürlük - տնօրինություն

գ) ծառայողական նշանակության իրեր.

Օր. ağız - բերան
göz - աչք

ağızlık - ծխամորձ
gözlük - ակնոց

դ) տեղի իմաստ.

Օր. mezar - գերեզման
çöp - աղբ

mezarlık - գերեզմանոց
çöplük - աղբանոց

- 1ik - մասնիկը, կցվելով որոշ գոյականների, կազմում է ածականներ:

Օր. dağ - լեռ
tohum - սերմ
dağlık mıntaka - լեռնային շրջան
tohumluk arpa - սերմացու գարի

- 1ik - մասնիկը, կցվելով թվական անուններին, կազմում է ածականներ, որոնք արտահայտում են մարդու տարիքը կամ գումարի չափը: Նման արտահայտությունները կարելի է հասկանալ՝ ելնելով նախադասության իմաստից:

Օր. doksanlık - իննսուն տարեկան
yüzlük - հարյուրանոց (դրամ)

Բառարան - Sözlük

ağlamak - լաց լինել
ağrimak - ցավել, ցավ զգալ
aktarmak - տեղափոխել, տեղաշարժել,
փոխադրել, այլ տեղ դնել
Anadolu - Անատոլիա
anormal - անբնական, ոչ նորմալ
arpa - գարի
batı (garp) - արևմուտք
belli - հայտնի
biçmek - 1. կտրել 2. ձևել 3. հնձել, քաղել
boyamak - ներկել
buğday - ցորեն
canlı - 1. կենդանի, շնչավոր 2. աշխույժ
3. արտահայտիչ, վառ
canlı yayın - ուղիղ եթեր
ceket (-ti) - բաձկոն
cephe - ռազմաճակատ
çavdar - աշորա, տարեկան
çizgi - գիծ, գծապատկեր
darı - կորեկ
değişik - 1. փոփոխված
2. տարբեր, զանազան
değişken - փոփոխական
değişmek - փոխվել, փոփոխվել
desen - զարդանախշ, նախշ
devirmek - շրջել, տապալել
diş - ատամ
dişçi - ատամնաբույժ
doğu (şark) - արևելք
eksik (-ği) - պակաս
emek (-ği) - աշխատանք (չարչարանք)
etek (-ği) - փեշ, քղանցք
ezberlemek - անգիր անել

fermuar - ճարմանդ
gayet - շատ, բավականին
giyim - հագուստ
giymek - հագնել
gri - մոխրագույն
grip - գրիպ
güney (cenup) - հարավ
hububat (-tı) - հացահատիկ
imtihan - քննություն
izin (-zini) - թույլտվություն
kare - քառակուսի
katılmak - մասնակցել
kavurmak - 1. տապակել 2. բովել
kazak - սվիտեր, ֆուֆայկա
Kazak - ղազախ
Kazakça - ղազախերեն
kazanmak - 1. վաստակել, շահույթ ստանալ
2. հաղթել, շահել, տանել
3. ստանալ, արժանանալ, ձեռք բերել
kelime (sözcük) - բառ
kesmek - կտրել
kilo almak - գիրանալ
kilo vermek (kaybetmek) - նիհարել
koşul (şart) - պայման
kullanmak - օգտագործել
kurnaz - խորամանկ
kurukahveci - (հատիկավոր, կամ
աղացած) սուրճ վաճառող
kurumak - չորանալ
kuşku - 1. երկյուղ 2. կասկած(անք)
kuzey (şimal) - հյուսիս
lâcivert - կապույտ, լաջվարդ
mezar - գերեզման

maddi - նյութական (իրեղեն, դրամական)
 mezun - շրջանավարտ
 mezun olmak - ավարտել
 (ուսումնական հաստատություն),
 շրջանավարտ դառնալ
 mintaka (mintika) - շրջան, տարածք
 model - տեսակ
 müddet (-ti) - որոշ ժամանակ,
 ժամանակամիջոց
 nezaket (-ti) - քաղաքավարություն
 nezaketli - քաղաքավարի, նրբանկատ
 olanaksız - անհնարին
 oldukça (epeyce) - բավականին
 ölçmek - չափել
 ruble - ռուբլի (ռուսական արժույթ)
 seçmek - ընտրել
 sedir - օթոց, գահավորակ
 setretmek - ծածկել, փակել
 sık - 1. հաճախ 2. նեղ
 sıkı - 1. նեղ 2. պինդ (կպած)
 sıkıntı - 1. նեղություն 2. կարիք

silâh - զենք
 sonuç (-cu) - արդյունք
 susmak - լռել, ձայն չհանել
 süpürmek - ավելել, մաքրել
 süre - ժամանակահատված
 tahsil - կրթություն
 tartışma - 1. քննարկում 2. վեճ
 taşımak - տեղափոխել
 ters - հակառակ, սխալ
 tersine - հակառակը, ընդհակառակը
 tohum - սերմ
 uygun - հարմար, համապատասխան
 üzülme - 1. տխրել, վշտանալ, տանջվել
 2. անհանգստանալ
 vitrin - ցուցափեղկ
 yazılı - գրավոր, գրված
 yorulmak - հոգնել
 yulaf - վարսակ
 yürümek - քայլել
 yüzmek - լողալ
 zeki - խելացի, խելամիտ, ուշիմ

Վարժություններ - Ալիստրմալար

1. Վարդալ և թարգմանել հայերեն:

Yetmişlik büyük babamın çetin bir hayat hikâyesi var. Geçen hafta bana biraz hayatını anlattı. “Bir posta memuru olan babamı pek te hatırlamıyorum. Ben 1935’te doğdum, yedi yıl sonra da askere çağrılan babam ikinci dünya savaşına katılmak için trenle cepheye hareket etti. O günden sonra da babamı bir daha görmedik, ülkemiz için canını verdi. Çok aradık fakat hiç bir sonuç çıkmadı. Ben, bugünkü Bağımsız Devletler Topluluğu’nun güney-batısında bulunan Ermenistan’ın başkenti Yerevan’da doğdum. Çocukluğum da, bu bir buçuk milyonluk nüfusu olan şehirde geçti. Yerevan, zengin bir tarım bölgesinde bulunmasıyla birlikte, aynı zamanda çok önemli bir sanayi ve kültür merkezidir. Yerevan büyük, güzel parkları ve bahçeleri bulunan bol yeşilli bir şehirdir. Şehrin merkezinden ise Hrazdan ve Getar nehirleri geçer. On iki yaşıma dek Yerevan’da kaldık, sonra da Eçmiadzin kentine taşındık. Babam aslen Yerevan’lı, annemse Eçmiadzin’lidir. O zamanlar büyükannem de daha sağdı, fakat geçinmek oldukça zordu, babamız da yoktu bu yüzden de orta okulun sekizinci sınıfından ayrıldım, o zamandan beri elimin emeğiyle yaşıyorum. Eçmiadzin’deki yüksek teknoloji üreten bir fabrikaya girdim, burada değişik görevler aldım, bundan dolayı da askere gitmedim. Daha sonra tahsilimi tamamlamak için mesleki gece kurslarına yazıldım ve tanrının izniyle de mezun oldum. İyi tecrübe kazandım. Bir müddet ustabaşılık yaptım, sonra da yeni açılan bölümde atelye şefi oldum. Yakında emekliye ayrılacağım. Yeterince çalıştım, ben görevimi tamamladım, artık fabrikayı gençlere emanet etmek lâzım”. İşte ana hatlarıyla büyükbabamın hayatı.

* * *

Benim iki candan dostum var. Hrant'la Yervant. Üçümüz de Yerevan devlet üniversitesinde yabancı diller öğreniyoruz. Benim evim okula yakındır, bu yüzden de dersleri birlikte yapmak için arada bir bana uğrarlar. Dün de birlikte geldik. Annem konuklarımı “Hoş geldiniz çocuklar” diyerek karşıladı. Onlar da nezaketle “Hoş bulduk” diye yanıtladılar. Hoşbeşten sonra odama geçip sedire oturduk. Tabii ki hemen çalışmaya başlamadık. Önce biraz sohbet ettik. Masamda bugünün gazetesi vardı. Şöyle bir gözden geçirdim. Dikkate değer bir iki haberi arkadaşlarıma da aktardım. Kaç zamandan beri yakın doğuda durum iyi değil, herkes üzülmüyor buna. Kuşkusuz, durumu bir parça kontrol altına almak, az çok iyileştirmek tamamıyla olanaksız değil, ama herkes durum hemen yarından itibaren iyileşsin istiyor, bu da olmuyor tabii. Ancak biz bu tartışmayı kısa kestik, çünkü asıl isteğimiz Türkçe çalışmaktır.

Önce verilen metni okumaya karar verdik. Ben okumak istedim, fakat Hrant “Aman, önce Yervant okusun - dedi - su gibi okur o, sonra da biz okuruz, haydi oku Yervant”.

Sırayla metni yüksek sesle okuduk, sonra da grameri tekrarlamaya başladık.

Bunu da daha çok Hrant için yaptık. Yervant ile ben gramerde oldukça iyiyiz, Hrant ise tembelliğinden öğrenmiyor. Hiç bir kuralı doğru dürüst bilmiyor, bu yüzden de öğretmenimiz ikide bir kızıyor ona.

Ardından kelimelere geçtik. Yirmiden fazla sözcüğü ezberlemek lâzımdı. Yervant son derece zeki. Beş altı dakika geçmeden yanıtlamaya hazır idi. Sıkı bir kontrolden geçirdik, fakat sözcüklerin hemen - hemen hepsini bildi.

“Sizi bilmiyorum, fakat ben epeyce yorulduğum, - dedim - bir kahve içermisiniz?”

Kahveden sonra “Şimdi de biraz Türkçe konuşalım” dedim. Hrant itiraz etti, “Hayır, gerekmez, herşeyden önce yazılıyı yapalım, gerisi kolay” dedi.

* * *

Ben yürürüm yana yana,
Aşk boyadı beni kana,
Ne akilim, ne divane,
Gel gör beni aşk neyledi.

Gâh eserim yeller gibi,
Gâh tozarım yollar gibi,
Gâh çağlarım seller gibi,
Gel gör beni aşk neyledi.

Ben yürürüm ilden ile,
Dost ararım dilden dile.
Gurbette halim(i) kim bile?
Gel gör beni aşk neyledi.

Ben Yunus-u biçareyim,
Aşk elinden avareyim,
Baştan ayağa yareyim,
Gel gör beni aşk neyledi.

/Yunus Emre/

2. Հետևյալ բայերը գրել կրավորական սեռով:

Tutacaksınız, yürüdük, dolaşmasın, yer, inmem, seviyorsun, düşmez miyim? ölecekler, unutmayız, satıyor, tuttu, veriyor.

3. Նախադասությունները դարձնել ժխտական:

Yemek yersem, kilo alırım. _____

Ders çalışırsam, evde kalırım. _____

Uçağa binersen, bir şey görmezsin. _____

İstanbul'a gidersen, müzeye uğrarsın. _____

Çok uyursan, işe geç kalırsın. _____

Az yersen, kilo verirsin. _____

Adam su içerse, ölmeyecek. _____

4. Տեղադրել համապատասխան ածանցները:

Hava yağmurlu olur..... , sinemaya gitmeyiz. Parası yok..... , borç alsın. Erken yatar..... , erken kalkarsın. O konuşur..... , ben dinlerim. Sen onu görür..... , bana haber ver. Dışın ağırır..... , dışçıye git. Canın ister..... , sinemaya gidelim.

5. Նախադասության մեջ տեղադրել համապատասխան հետադրությունը և թարգմանել:

Bu sebeplerden geri döndük. Bu günden imtihana hazırlansınlar. Yanımda yüz rubleden para var. Sabahtan bir şey yemedim. Çalışkanlığından onu bütün öğretmenler severler. Gardırobunuzda kaç kostüm var? – Beşten Dünden sorunu düşünüyorum. Arkadaşımdan iki kitap okudum.

6. Թարգմանել հետևյալ բառերը:

Analık, babalık, darlık, memurluk, siyahlık, uzunluk, temizlik, yokluk, varlık, beyazlık, fenalık, mavilik, kalınlık, kitapçılık, kardeşlik, kapıcılık, kadınlık, askerlik, dostluk, güzellik, gazetecilik, yükseklik, genişlik, kötülük, sarılık, küçüklük, hastalık, ihtiyarlık, güçlük, ustalık, aylık, sözlük, sözlükçülük, başlık, tembellik, işçilik, taşlık, solculuk, sağlık, emeklilik.

7. Հայերեն թարգմանել հետևյալ բառակապակցություններն ու նախադասությունները:

Çocukluk arkadaşı, beş dakikalık yol, gözlüklü adam, hastalıklı genç, öğretmenlik yapmak, askerlik yapmak, odanın büyüklüğü, salonun genişliği, şu kâğıdın beyazlığı, grip hastalığı, bir hastalık geçirmek, fenalık geçirmek, haftalık gazete, bir aylık iş, mühendisin aylığı, babamın yıllığı, dostluğun yokluğu, sözlüğün eksikliği, şu ağaçlığın (kumaşın) yeşilliğine bak, şu yeşilliğin güzelliğine bak, sözlüksüz çevirmeğe bak.

* * *

Selami, Ramazan ve Orhan üç candan arkadaşlardır. Selami Bursa'lıdır, Ramazan Mersin'li, Orhan ise İzmir'li. Bursa, Türkiye'nin kuzeybatısında, ülkenin en tanınmış kayak merkezi olan Uludağ'ın eteklerindedir. Mersin ise Anadolu'nun Akdeniz kıyılarının doğu bölümündedir. Üç arkadaş da duvarcı ustalarıdır. Kurtuluş'ta bir inşaatta çalışıyorlar. Dün, üçü birlikte Adana'ya gittiler. Gerçi ben de onlarla gitmek istedim, fakat daha sonra vazgeçtim. Biraz maddi sıkıntım var. Kazandığım para geçinmeme yetmiyor. Babam da bana yardım edecek durumda değil. Önceleri bir dokuma fabrikasında amele idi, fakat rahatsızlığından dolayı işini bırakmaya mecbur oldu. Önümüzdeki haftadan itibaren bir kurukahvecide çalışacak.

8. Հետևյալ նախադասությունները թարգմանել թուրքերեն:

Տո՛ր ձեռքդ: Դու ինձ դա ասել ես: Այս երեխան մայր չունի: Նրա հա՞յրը այստեղ եկավ, թե՞ մորեղբայրը: Ինձ նույնպես երկու տեսորակ տվեք: Իսկ ձեր եղբոր ընտանիքը որտե՞ղ է: Բե՛ր այստեղ այդ մրգերը: Ինչու՞ է նա գնացել այդքան հեռու տեղեր:

* * *

Քանի՞ տոն է նշվում ձեր երկրում: «Հինգից ավելի», - պատասխանեցի ես: Կեցցե՛ք: Բարի գալուստ: Ուրախ եմ ձեզ տեսնելու համար: Ի՞նչ նորություն կա: Ամեն ինչ հիանալի է: Փոխադարձ ողջույնից հետո մենք նստեցինք շախմատ խաղալու: Դու ճիշտ ես: Իրոք, այստեղ ավելի լավ եմ աշխատում:

Ես նախընտրում եմ խմել քաղցր սուրճ: Սիրելի՛ս, այս ի՞նչ է: Դուք ինչ է, կրթություն չե՞ք ստացել: Հսկի՛չ, նայի՛ր երկու մեքենան այստեղ չի բավարարում: Ընդմիջենք, ես շատ եմ հոգնել: Ես այցելում եմ այս ակումբ, սակայն հավաքույթներին չեմ մասնակցում: Դուք հիանալի գիտեք այս քաղաքը: Ո՛չ, սա շատ մեծ քաղաք է: Այս քաղաքի հյուսիսային մասերում ես չեմ եղել: Ի՞նչ լավ (հիանալի) անձնավորություն է: Իրո՞ք: Իսկ ես երբեմն այլ կերպ եմ մտածում: Ես նույնպես առաջին շարքում տեղ կգբաղեցնեն: Ժամը քանի՞սն է: Մեկն անց կես է:

Atasözleri

Ne yer ne yedirir.
Her işin başı sağlık.
Bekârlık sultanlıktır.
Akıl para ile satılmaz.
İyilik eden iyilik bulur.
Para adama akıl öğretir.
Aşık ağlatır dert söyler.
Bir günlük beylik beyliktir.
Dost ağlatır düşman güldürür.
Bugünkü işini yarına bırakma.
Gönül kimi severse güzel odur.
Sağlık, hastalık hepimiz için (dir).
Bakarsan bağ, bakmazsan dağ olur.
Hasta olmayan, sağlığın kadrini bilmez.

Կայուն բառակապակցություններ

1. Bu yüzden - այս (այդ) պատճառով
2. Elinin emeğiyle yaşamak. - սեփական քրտինքով ապրել
3. O sırada - այդ միջոցին, այդ պահին
4. Hoşbeşten sonra - միմյանց ողջունելուց հետո
5. Su gibi okur - ջրի նման կարդում է
6. İkide bir - 1. մեկ երկրորդը 2. անընդհատ, մշտապես, շարունակ
7. Olur mu? - հնարավո՞ր է (կլինի՞)
8. Hep birden - բոլորը միասին
9. Müsaadenizle - Ձեր թույլտվությամբ
10. Can vermek - զոհվել, կյանքը տալ
11. Güzellik sağlık! (hayırlar!) - ամենայն բարիք

ՏԱՍՆՍԵԿԵՐՈՐԴ ԴԱՍ - ON BİRİNCİ DERS

§ 64 miş - ով անվանական ստորոգյալը

Կազմվում է անվան, օժանդակ բայի - i - հիմքի, - miş (miş, muş, müş) - ածանցի և ստորոգման ածանցի միջոցով: - miş - ով անվանական ստորոգյալը կարող է արտահայտել վիճակ, դրություն ինչպես անցյալ, այնպես էլ ներկա ժամանակում: Այս ձևը կիրառվում է այն դեպքերում, երբ խոսողը անձամբ ականատես չի եղել, վստահ չէ, կասկածում է և երևույթի մասին խոսում է՝ տեղեկություն ստանալով ուրիշից, կամ եթե տվյալ երևույթը խոսողի համար անսպասելի է կամ կապված նրա ենթադրության, վարկածի հետ:

Օժանդակ բայի - i - հիմքը և նրան կցվող ածանցները ստորոգյալի անվանական մասի հետ կարող են գրվել և արտաբերվել թե՛ առանձին և թե՛ միասին: Առանձին գրության դեպքում շեշտն ընկնում է - miş - ածանցի, իսկ երրորդ դեմքի հոգնակի թվում՝ - lar - ածանցի վրա: Միասին գրության դեպքում բաղաձայն հնչյունով վերջացող անվան դեպքում օժանդակ բայի - i - հիմքը սղվում է, իսկ երբ անունը վերջանում է ձայնավոր հնչյունով, թերի օժանդակ բայի - i - հիմքը հնչյունափոխվում է - y - ի:

Հայերեն թարգմանելիս կիրառվում են «լինել» բայի վաղակատար ներկա ժամանակաձևը (եղել են, եղել ես ...) և եղանակավորող ձևեր (ասում են թե, կարծես թե ...):

- Օր. (Ben) hasta imişim (hastaymışım). - (Ես) հիվանդ եմ եղել:
(Sen) yorgun imişsin (yorgunmuşsun). - (Դու) հոգնած ես եղել:
(O) çalışkan imiş (çalışkanmış). - (Նա) աշխատասեր է եղել:

(Biz) yabancı imişsiz (yabancıymışız). - (Մենք) օտար ենք եղել:
(Siz) davacı imişsiniz (davacıymışsınız). - (Դուք) հայցվոր եք եղել:
(Onlar) öğretmen imiş(ler) (öğretmenmişler). - (Նրանք) ուսուցիչ են եղել:

miş - ով անվանական ստորոգյալի ժխտական ձևը կազմվում է անվան, - değil - բառի, - miş - ածանցի և ստորոգման ածանցների միջոցով:

- Օր. (Ben) hasta değilmişim. - (Ես) հիվանդ չեմ եղել:
(Sen) hâkim değilmişsin. - (Դու) դատավոր չես եղել:
(O) talebe değilmiş. - (Նա) ուսանող չի եղել:

(Biz) yorgun değilmişiz. - (Մենք) հոգնած չենք եղել:
(Siz) öğretmen değilmişsiniz. - (Դուք) ուսուցիչ չեք եղել:
(Onlar) memur değilmiş(ler). - (Նրանք) ծառայող չեն եղել:

Հարցական ձևը կազմվում է անվան, - mı (mi, mu, mü) - հարցական մասնիկի, թերի օժանդակ բայի - i - հիմքի և ստորոգման ածանցների միջոցով: Առաջին և երկրորդ դեմքերում այս ձևը կիրառվում է հազվադեպ:

- Օր. (Ben) hasta mıymışım? - (Ես) հիվանդ եմ եղել:
(Sen) talebe miymişsin? - (Դու) ուսանող ես եղել:
(O) evde miymiş? - (Նա) տա՞նն է եղել:

(Biz) yorgun muymuşuz? - (Մենք) հոգնա՞ծ ենք եղել:
(Siz) müdür müymüşsünüz? - (Դուք) տնօրե՞ն եք եղել:
(Onlar) trende miymiş(ler)? - (Նրանք) գնացքո՞ւմ են եղել:

miş - ով անվանական ստորոգյալ կազմվում է նաև var և yok անունների միջոցով:

Օր. Bu sokakta çok ağaç varmış. - Այս փողոցում շատ ծառ է եղել:
Tiyatroda kimse yokmuş. - Թատրոնում ոչ ոք չի եղել:

Ժամանակը որոշվում է.

ա) ըստ ժամանակի պարագայի.

Օր. Dün akşam hava çok soğukmuş. - Երեկ երեկոյան եղանակը շատ ցուրտ է եղել:

բ) ըստ իմաստի.

Օր. Ali niye derslerine devam etmiyor? - Hastaymış.
Ինչու՞ Ալին չի շարունակում դասերը: - Հիվանդ է եղել (ասում են՝ հիվանդացել է):

§ 65 Անորոշ անցյալ ժամանակ - Belirsiz Geçmiş Zaman

Թուրքերենի սահմանական եղանակի անորոշ անցյալ ժամանակը կազմվում է բայահիմքին - miş - ածանցի կցմամբ կազմվող դերբայի (eylemsi) և առաջին խմբի ստորոգման ածանցների միջոցով: Հայերեն է թարգմանվում ներկա վաղակատար ժամանակաձևի միջոցով:

Օր. (Ben) almışım. - (Ես) վերցրել եմ (ասում են): (Biz) beklemişiz. - (Մենք) սպասել ենք:
(Sen) gelmişsin. - (Դու) եկել ես: (Siz) okumuşsunuz. - (Դուք) կարդացել եք:
(O) bulmuş. - (Նա) գտել է: (Onlar) görmüş(ler). - (Նրանք) տեսել են:

Ժխտականը կազմվում է դերբայի ժխտական ձևին ստորոգման ածանցի կցմամբ: Շեշտն ընկնում է - ma, me - ժխտման ածանցին նախորդող վանկի վրա, իսկ երրորդ դեմքի հոգնակի թվում՝ նաև - lar, ler - հոգնակերտ ածանցի վրա:

Օր. (Ben) ka'lmamışım. - (Ես) չեմ մնացել: (Biz) ka'lmamışız. - (Մենք) չենք մնացել:
(Sen) gelmemişsin. - (Դու) չես եկել: (Siz) gelmemişsiniz. - (Դուք) չեք եկել:
(O) görmemiş. - (Նա) չի տեսել: (Onlar) görmemiş(ler). - (Նրանք) չեն տեսել:

Հարցական ձևը կազմվում է դերբայի, - mı (mi, mu, mü) - հարցական մասնիկի և ստորոգման ածանցների միջոցով:

Օր. (Ben) almış mıyım? - (Ես) վերցրե՞լ եմ: (Biz) bulmuş muyuz? - (Մենք) գտե՞լ ենք:
(Sen) gelmiş misin? - (Դու) եկե՞լ ես: (Siz) görmüş müsünüz? - (Դուք) տեսե՞լ եք:
(O) okumuş mu? - (Նա) կարդացե՞լ է: (Onlar) beklemiş(ler) mi? - (Նրանք) սպասե՞լ են:

Հարցական - ժխտականը կազմվում է դերբայի ժխտական ձևի, հարցական մասնիկի և ստորոգման ածանցների միջոցով:

Օր. (Ben) kalmamış mıyım? - (Ես) չե՞մ մնացել: (Biz) gezmemiş miyiz? - (Մենք) չե՞նք զբոսնել:
(Sen) okumamış mısın? - (Դու) չե՞ս կարդացել: (Siz) gitmemiş misiniz? - (Դուք) չե՞ք գնացել:
(O) gelmemiş mi? - (Նա) չի՞ եկել: (Onlar) almamış(lar) mı? - (Նրանք) չե՞ն վերցրել:

Եթե գործողության կատարումը գրանցել հնարավոր չէ, սակայն խոսողը ենթադրում կամ նույնիսկ համոզված է, որ այդ գործողությունը կատարվել է, ապա նման երանգները արտահայտվում են հաստատականության իմաստ կրող - *dir* - ածանցի (*mişimdir, mişındır, miştir*) և *her halde* (ամեն դեպքում), *mutlaka* (անպայման), *belki* (հնարավոր է, գուցե, թերևս) եղանակավորող բառերի միջոցով (*Çok kızdım. Belki sertçe konuşmuşumdur.* - Խիստ բարկացա: Թերևս կոպիտ խոսեցի (կոպիտ եմ խոսել):

§ 66 - *al, at, iyet, ca, lan, laş* - բառակազմական ածանցները

- *al* - ածանցը, կցվելով հիմնականում ածականներին, կազմում է անանցողական բայեր:

Օր. *çok* - շատ *çoğalmak* - շատանալ
boş - դատարկ *boşalmak* - դատարկվել

- *at, et, iyet* - արաբական ծագում ունեցող ածանցները, կցվելով արաբական ծագում ունեցող գոյականներին և ածականներին, կազմում են գոյական անուններ:

Օր. *hüküm* - օրինականություն (օրինական) ուժ, իշխանություն, վճիռ, որոշում
hükümet - կառավարություն

memnun - գոհ
memnuniyet - գոհունակություն

Ժամանակակից թուրքերենում ավելի գործածական է - *luk* - թուրքական ածանցով կազմված - *memnurluk* - (գոհունակություն) բառը:

- *ca, ce* (*ça, çe*) - ածանցները, կցվելով ածականներին, թուլացնում կամ ուժեղացնում են նրանց որակական հատկանիշը: Երբեմն միանալով ածականներին՝ նրանք կարող են կազմել որակական մակբայներ:

Օր. *uzun* - երկար *uzunca* - բավական երկար
güzel - գեղեցիկ *güzelce* - բավական գեղեցիկ

O güzelce yazdı. - Նա բավական լավ գրեց:
Açıkça söyledi. - (Նա) անկեղծորեն (բացեփբաց, պարզորոշ կերպով) ասաց:

- *ca* - ածանցը, կցվելով դերանունների և որոշ գոյականների, արտահայտում է մակբայի իմաստ:

Օր. *bence* - ըստ իս, իմ կարծիքով
hükümetçe - կառավարության կողմից (կառավարության տեսակետի համաձայն)

- *lan* (*la + n*) - ածանցը, կցվելով անունների, կազմում է բայեր՝ կրավորական կամ անդրադարձ իմաստով:

Օր. *hazır* - պատրաստ *baş* - գլուխ, սկիզբ
hazırlamak - պատրաստել *başlamak* - սկսել
hazırlanmak - պատրաստվել *başlanmak* - սկսվել

- laş (leş) - ածանցը, կցվելով անունների, կազմում է անանցողական իմաստով բայախիմքեր:

Օր. bir - մեկ
yakın - մոտ(իկ)

birleşmek - միանալ, միավորվել
yakın + laş + mak - մոտենալ (իրար), մերձենալ

§ 67 Բաշխական թվականներ - Üleştirme / Dağıtma Sayısı

Բաշխական թվականները կազմվում են բաղաձայն հնչյունով վերջացող քանակական թվականներին - ar, er - և ձայնավորով վերջացող թվականներին՝ - şar, şer - ածանցների կցմամբ:

Օր. bir - մեկ	birer - մեկական
iki - երկու	ikişer - երկուական
üç - երեք	üçer - երեքական
dört - չորս	dörder - չորսական
beş - հինգ	beşer - հինգական
altı - վեց	altışar - վեցական
yedi - յոթ	yedişer - յոթական
sekiz - ութ	sekizer - ութական
dokuz - ինը	dokuzar - իննական
on - տասը	onar - տասական
yirmi - քսան	yirmişer - քսանական
otuz - երեսուն	otuzar - երեսնական
kırk - քառասուն	kırkar - քառասնական
elli - հիսուն	ellişer - հիսունական
altmış - վաթսուն	altmışar - վաթսունական
yetmiş - յոթանասուն	yetmişer - յոթանասունական
seksen - ութսուն	seksener - ութսունական
doksan - իննսուն	doksanar - իննսունական
yüz - հարյուր	yüzer - հարյուրական
bin - հազար	biner - հազարական

Եթե թվականների վերջին բաղադրիչը նշում է ամբողջ 100-ական, 1000-ական, ապա բաշխական թվականի ածանցը կցվում է թվականի առաջին բաղադրիչին:

Օր. üçer yüz - երեք հարյուրական
yedişer bin - յոթ հազարական

Բաշխական թվականները կրկնակի կիրառությամբ արտահայտում են գործողության կատարման ձև:

Օր. Birer birer eve geçin. - Մեկական (մեկ-մեկ) անցե՛ք տուն:

§ 68 Կոտորակային թվականներ - Kesir Sayı / Kesir Sayı Önadı

Կոտորակային թվականներն արտահայտվում են երկու թվականներից կազմված այնպիսի կազմությամբ, որտեղ առաջին թվականը (դրված ներգոյական հոլովով) կոտորակի հայտարարն է, իսկ երկրորդը, որը հոլովական վերջավորություն չի ստանում, համարիչն է: Երբ հարյուր թվականը կիրառվում է հայտարարի հետ, համարիչը ցույց է տալիս տոկոսի չափը:

Օր. ikide bir - մեկ երկրորդ
beşte üç - երեք հինգերորդ
yüzde beş - հինգ հարյուրերորդ կամ հինգ տոկոս

Ermenistan nüfusunun yüzde doksan beşi Ermenidir. -
Հայաստանի բնակչության իննսունհինգ տոկոսը հայ է:

Տասնորդական կոտորակներն արտահայտվում են virgül (ստորակետ) բառի միջոցով (5,8 կարդացվում է beş virgül sekiz, կամ էլ հետևյալ կերպ՝ “beş onda sekiz”):

§ 69 ön, arka, iç, dış, hak անունների կապական կիրառությունը

ön գոյականը (առջև) կատարում է կապական բառի գործառույթ՝ ունենալով «առաջ, առջևում, մոտ» իմաստները: Գոյականները ön կապական բառից առաջ ստանում են սեռական հոլովի ածանց, անձնական դերանունները վերածվում են ստացականի, իսկ ön-ը կարող է ստանալ երրորդ դեմքի պատկանելիության, ինչպես նաև ներգոյական, տրական, բացառական հոլովի ածանցներ:

Օր. Dün sizi tiyatronun önünde yarım saat bekledik. -
Երեկ ձեզ թատրոնի առաջ կես ժամ սպասեցինք:

Bu sabah evinizin önünden geçtim. - Այս առավոտ անցա ձեր տան առջևից:

(Benim) önümde - իմ առջևում, առջևումս
(Senin) önünden - քո առջևից, առջևումդ
(Bizim) önümüzde - մեր առջևում

arka բառը (մեջք, հետև) կապական կիրառությամբ նշանակում է «հետևում»:
Գոյականներն arka-ից առաջ ստանում են -ın (ının) - սեռական հոլովի ածանցներ, անձնական դերանունները վերածվում են ստացականի, իսկ arka-ն ստանում է երրորդ դեմքի պատկանելիության ածանց, ինչպես նաև ներգոյական, տրական, բացառական հոլովի ածանցներ:

Օր. Evin arkasında büyük bir bahçe var. - Տան հետևում մի մեծ այգի կա:
Arkamda kimse yok. - Իմ հետևում ոչ ոք չկա:

Çocuk ağacın arkasına saklanan annesini arıyor. -
Երեխան ծառի հետևում թաքնված մորն է փնտրում:

iç (ներս) բառը կապական կիրառության դեպքում նշանակում է «ներսում, միջև, ընթացքում, մեջ»: Այն ստանում է երրորդ դեմքի պատկանելիության ածանց և ներգոյական, տրական, բացառական հոլովի ածանցներ:

Օր. Çantanın içinden kalemimi çıkardım. - Պայուսակի միջից մատիտս հանեցի:
Düğmeler çekmecenin içindedir. - Կոճակները դարակի մեջ են:

Öğrenciler içinde çok akıllı çocuklar var. -
Աշակերտների մեջ շատ խելացի երեխաներ կան:

Ստացական դերանունների հետ կիրառվելիս iç-ը ստանում է համապատասխան դեմքի պատկանելիության ածանց:

- Օր. (Benim) içimde - իմ մեջ (Bizim) içimizde - մեր մեջ
 (Senin) içinde - քո մեջ (Sizin) içinizde - ձեր մեջ
 (Onun) içinde - նրա մեջ (Onların) içinde (içlerinde) - նրանց մեջ

dış (դուրս, արտաքին) բառը կապական կիրառության դեպքում նշանակում է «դրսում, դեպի դուրս»: dış բառը ստանում է պատկանելիության, ինչպես նաև ներգոյական, բացառական, տրական հոլովի ածանցներ:

- Օր. Dairenin dışında çok insan vardı. - Հիմնարկից դուրս շատ մարդիկ կային:

Memleketin dışında mühim hadiseler oldu. -
 Երկրից դուրս կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել:

hak (-kkı) (իրավունք) բառը, ստանալով պատկանելիության և ներգոյական հոլովի ածանցներ (hakkında), նշանակում է «մասին, վերաբերյալ»: hakkında-ից առաջ գոյականը հոլովական ածանց չի ստանում, իսկ անձնական դերանունները վերածվում են ստացականի: kim դերանունը, hak բառի հետ կիրառվելիս ստանում է սեռական հոլովի ածանց, իսկ ne-ն հոլովական ածանց չի ստանում:

- Օր. Ben bu problemler hakkında bir şey sormadım. -
 Ես այս խնդիրների վերաբերյալ ոչինչ չհարցրի:

Senin hakkında bilmiyorlar. - Քո մասին չգիտեն:
 Ne hakkında konuşuyorsun? - Ինչի՞ մասին ես խոսում:
 Kimin hakkında konuşuyorsun? - Ո՞ւմ մասին ես խոսում:
 Benim hakkımda haberi var. - Նա իմ մասին տեղեկություն ունի:

§ 70 Վերջաձայններում ձայնավորների փափկացումը

Արաբական մի շարք փոխառություններում, երբ բառը վերջանում է - l, p, t - բաղաձայններով, բառավերջում կցվող ածանցների - a, ı, u - ձայնավորները փափկանալով կարող են հնչյունափոխվել - e, i, ü - ձայնավորների:

- Օր. istikbâl - ապագա istikbâli - նրա ապագան
 mahsul - բերք mahsulün - բերքի
 harp - պատերազմ harpten sonra - պատերազմից հետո
 saat - ժամ saati - ժամը

§ 71 Բառավերջի կրկնակի բաղաձայնների վերականգնումը

Մի շարք արաբական փոխառություններում կարող է վերականգնվել թուրքերենում անհետացած բառավերջի կրկնվող բաղաձայնը, եթե բառին կցվում է ձայնավոր հնչյունով սկսվող ածանց: Նման բառերը բառարաններում ներկայացվում են հետևյալ կերպ.

- Օր. hak (-kkı) - իրավունք
 hat (-ttı) - գիծ
 üs (-ssü) - բազա, ռազմակայան, հենակետ

Բառարան - Sözlük

ABD (Amerika Birleşik Devletleri) -
- ԱՄՆ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)
acı - 1. ցավ 2. տառապանք, կսկիծ
3. դառը 4. կծու
ada - կղզի
akıllı - խելացի
alet (-ti) - գործիք
antik - անտիկ, հին
araştırma - ուսումնասիրություն
armut (-du) - տանձ
art düşünce - հետին միտք
asmak - 1. կախել 2. կախաղան հանել
asrî (çağdaş, modern) - ժամանակակից
atıştırmak - բերանը մի բան զցել,
հապտապ մի բան ծամել
կամ խմել (ոտքի վրա)
Avrupa - Եվրոպա
ayırmak - բաժանել
batakılık (-ğî) - 1. ճահիճ 2. ճահճուտ
boğa - ցուլ
bol - լայն, ազատ, լի
cehennem - դժոխք
cennet (-ti) - դրախտ
çayır - մարգագետին
çekmece - դարակ
çeşit (-di) - տեսակ
çoban - հովիվ
çorba - ապուր
dağıtmak - բաժանել տարածել, ցրել
deprem - երկրաշարժ
dergi - ամսագիր, հանդես
doymak - կշտանալ
durak (-ğî) - կանգառ
düğme - կոճակ
esas - հիմք
et (eti) - միս
gelişmek - զարգանալ
gömülmek - թաղվել
hakim - իմաստուն
hâkim - 1. իշխանավոր 2. դատավոր
hal (-li) - վիճակ
hat (-ttî) - գիծ
hesap (-bî) - հաշիվ
hüküm (-kmü) - 1. օրինականություն,
(օրինական) ուժ 2. վճիռ, որոշում
3. իշխանություն, տիրապետություն
içki - խմիչք

iklim - կլիմա
inanmak - հավատալ
istatistik (-ğî) - վիճակագրություն
istikbâl (-li) - ապագա, զալիք
kaba - կոպիտ, պրիմիտիվ
kale - ամրոց
kanun - օրենք
Karadeniz - Սև ծով
karanfil - մեխակ
karın (-rını) - փոր, որովայն
karpuz - ձմերուկ
kasap (-bî) - մսավաճառ
kaza - վթար
kısım (-smı) - մաս, հատված
kit olmak - չբավարարել, չհերիքել
kilise - եկեղեցի
koku - հոտ
konservatuvar - կոնսերվատորիա
kural (-lı) - կանոն
kural olarak - որպես կանոն
kurtulmak - ազատվել, փրկվել
lahit (-hti) - դամբարան, գերեզման
mahsul (-lü) - բերք
mal - ապրանք
malum - հայտնի (հմտ. belli)
manav - բանջարավաճառ
memnuniyet (-ti) - գոհունակություն
meşgul olmak - զբաղված լինել
Mısır - Եգիպտոս
mısır - եգիպտացորեն
miktar - քանակ
muhtaç (-cî) - կարիքավոր
muz - բանան
mühim - կարևոր
nebat (-ti) - բուսականություն
nergis - նարգես, նարգիզ
nitekim - այսպես օրինակ
niyet (-ti) - նպատակ, մտադրություն
nüfus - բնակչություն
öküz - եզ
pahalı - թանկ
pastırma - բաստուրմա
problem - խնդիր, պրոբլեմ
rol (-lü) - դեր
sağlam - 1. առողջ 2. ամուր
3. անվնաս (ամբողջական)
sahil - ափ

sahip (-bi) - տեր, տանուտեր
 salata - սալաթ, աղցան
 sanayi (-ii) - արդյունաբերություն
 seher - արշալույս, լուսաբաց
 sır (-rı) - գաղտնիք
 sırf - զուտ, մաքուր
 sual (-li) - հարց (հմմտ. soru)
 sualtı (-nı) - ստորջրյա
 tahmin - կարծիք, ենթադրություն
 tarım - գյուղատնտեսություն
 tekne - նավ
 teknik (-ği) - տեխնիկա
 teşkil etmek - 1. կազմել, կազմավորել, ձևավորել
 2. զբաղեցնել (տարածք)
 tok - կուշտ
 trafik (-ği) - երթևեկություն

ucuz - էժան
 uç (ucu) - ծայր
 uzman - մասնագետ
 ürün - 1. արտադրանք 2. բերք
 üs (-ssü) - բազա, հենակետ
 vatandaş - հայրենակից
 virgül - ստորակետ
 yarımada - թերակղզի
 yasemin - հասմիկ
 yeğlemek - գերադասել
 yemek listesi (menü) - ճաշացուցակ
 yetiştirmek - աճեցնել, պահել
 yoksul - աղքատ
 yoksun (mahrum) - զուրկ, զրկված
 yumurta - ձու
 zambak (-ğı) - շուշան
 ziyaret etmek - այցելել

Վարժություններ - Ալիստրմալ

1. Կարդալ և թարգմանել հայերեն:

İstatistiklere göre Türkiye nüfusunun yüzde 82'si köyde, yüzde 18'i ise kentlerde yaşıyor. Ülke nüfusunun yüzde 80 kadarı tarımdan geçinir. Ülkenin doğusunda genellikle hayvan yetiştirilir. Nitekim ülke topraklarının yüzde 50,2'sini çayırlar teşkil eder, bununla birlikte büyük hayvan sahipleri azdır. Köylülerin önemli bir bölümü çoban olarak çalışır. Türk köylüsünün çoğu toprak işleriyle uğraşır. Sürülen veya ekilen topraklar, memleket topraklarının ancak yüzde 16,6'sını teşkil eder, toprakların geri kalan kısmı ise ormanlar (yüzde 15,3), mahsul getirmeyen topraklar (yüzde 14,8), sebze ve meyve bahçeleri, bağlar (yüzde 1,8) ve göller, bataklıklardır (yüzde 1,3). Ekilen toprakların yüzde 70'i büyük toprak sahiplerinin elinde bulunur. Bugün Türkiye tarımında modern teknolojiler kullanılmaktadır. Uzmanların açıklamalarına göre ülkede en çok ekilen bitkilerin başında buğday, arpa ve mısır gelir. Karadeniz sahillerinde yetiştirilen tütünler dünyaca meşhurdur.

Bir kısım köylüler bağıcılıkla uğraşır. Türkiye'nin iklimi ve toprağı çok elverişlidir (müsaittir). Bundan dolayı bağıcılık gibi meyvecilik de hayli yayılmıştır.

* * *

- Biliyor musunuz, Kaptan Cousteau, Kekova'ya gelmiş ve burada uzun süren araştırmalar yapmış.
- Biliyoruz, Kaptan Cousteau'yu duymayan kaldı mı? Televizyonda daima onun sualtı araştırmalarını izliyoruz.
- Kekova'nın özelliğı nedir?
- Şu çaylarınızı için, az sonra sizleri gezdireceğim. Kekova, dünyanın cenneti olarak kabul edilir. Mavi Yolculuğun en güzel durak noktasıdır.
- Hem güzel, hem de çok enteresan bir yer.
- Neresi enteresan?
- Bu teknenin altında bir kent var.
- Bizim teknenin altında mı?

- Evet, bizim teknenin altında ve Kekova'nın her yerinde batık bir kent var. Az sonra göreceksiniz, birçok ev duvarlarının bir kısmı denizin dışında, bir kısmı denizin içinde. Bilim adamlarının tahminlerine göre eskiden bir deprem olmuş. Her şey sulara gömülmüş.
- Burada bir kale varmış.
- Kale olduğu gibi sağlam duruyor. İçinde bir de küçük antik tiyatro var. Bu kaleye çıkacağız. Fotoğraf makinelerinizi şimdiden hazırlayın. Tepeden inanılması güç bir güzellik göreceksiniz.
- Burada deprem ne zaman olmuş ve kimler yaşamış?
- Hiç kimse bir şey bilmiyor. Şimdilik her şey tahminden ibaret. Yalnız denizin içinde ve karada pek çok Likya tipi lahitler var. Demek ki bir zamanlar burada Likyalılar yaşamışlar. Ama burada hangi kent vardır? Ne zaman sulara gömüldü? Kale köyünün halkı buraya ne zaman geldi? Hiç kimse bilmiyor. Burası şimdilik bir sırdır. Sır olarak ta kalacağına benziyor.
- Ben çok merak ettim. Çaylarınızı içtiyseniz bir an önce Kekova'yı gezelim.
- Kahvaltıyı ne zaman yapacağız?
- Tamam bu adamın akli fikri hep yemekte. Kardeşim sen yolda kahvaltını yapmadın mı? Ben seni bir şeyler atıştırırken gördüm.
- Siz kahvaltıyı burada yapacağınızı söylemediniz mi? Ben de çok az yedim. Şimdi karnım zil çalıyor.
- Biz henüz hiç bir şey yemedik. Çaylarımız bitti. Kekova Restorana gidelim. Orada güzel bir kahvaltı yapalım. Sonra da Kekova'yı gezelim.
- Kekova'da ne kadar kalacağız?
- Ne kadar isterseniz. Ama buraya en az iki gün ayırmak gerek.
- Kekova'dan sonra nereye gideceğiz?
- Demre'de St. Nikolas Kilisesine gidip Noel Baba'yı ziyaret edeceğiz.

* * *

Serenad

Yeşil pencereden bir gül at bana
Işıklarla dolsun kalbimin içi.
Geldim işte mevsim gibi kapına,
Gözlerimde bulut, saçlarımda çiğ.

Açılan bir gülsün sen yaprak yaprak
Ben aşkımla bahar getirdim sana.
Tozlu yollarından geçtiğim uzak
İklimden şarkılar getirdim sana.

Şeffaf damlalarla titreyen ağır
Goncanın altında bükülmüş her sak;
Senin için dallardan süzülen ıtır,
Senin için yasemin, karanfil, zambak...

Bir kuş sesi gelir dudaklarından
Gözlerin gönlümde açar nergisler,
Düşen bir öpüştür yanaklarından
Mor akasyalarla ürperen seher.

Pencereden bir gül attığın zaman
Işıklarla dolacak kalbimin içi.
Geçiyorum mevsim gibi kapından
Gözlerimde bulut, saçlarımda çiğ.

/Ahmet Muhip Dranas/

2. Նախադասությունը գրել անորոշ անցյալ ժամանակաձևով:

Sezai dün okula gelmedi. Öğrenci bakkala gitti. Aram bakkala borcunu sordu. Selin pastırma aldı. Manavda muz iki milyon lira oldu. Kasap kaba konuştu. Pazarda meyve daha ucuz. Manavda meyve daha pahalı. Pazarda sebze daha bol. Süpermarket eve daha yakın. Vakit geç oldu. Esen Hanım'ın işi geç bitti. Esen Hanım çok çalıştı. Aram dün okuldaydı. Babam geçen yıl Ankara'daydı. Kitap dolabın içindeydi.

3. Նախադասությունը դարձնել հարցական:

Dört yaşında konuşmuş. _____

Geçen yıl İngiltere'ye gitmiş. _____

Uçak kazasından kurtulmuş. _____

Kasaptan et almış. _____

Eve vaktinde gelmiş. _____

Trene zamanında yetişmiş. _____

İzmir'de iki gün kalmış. _____

Tatilde yüzme öğrenmiş. _____

Ona yardım etmiş. _____

Bursa'ya gitmiş. _____

Herkesi haber vermiş. _____

Acı haberi duymuş. _____

Bu habere sevinmiş. _____

4. Կազմել նախադասություն անորոշ անցյալ ժամանակաձևով:

Okul - dün - öğretmen - gelmek. _____

Meyve - manav - sebze - ve - daha - ucuz - pazar. _____

Tatil - Marmaris - öğrenmek - Maro - yüzme. _____

Eşyalar - ev - çalmak - hırsız - bütün. _____

Dün - bir - gece - kaza - trafik - olmak - Edirne. _____

Dün - gece - Aram - ders - sabaha kadar - çalışmak. _____

5. Վերլուծել և թարգմանել հետևյալ նախադասությունները:

Harutyun bana dün birkaç defa uğramış. Kevork çok yakın bir dostumdur, bana çok yardım etmiştir. Paraya ihtiyacım olursa ondan hep borç alırım. İnsanlar genellikle kendilerine benzemeyenleri sevmezler. Ben onlara kötü bir şey söylemedim ki bana darılsınlar. Çocuk muyum ki beni kandırsınlar? Sebepsiz yere gülene deli derler. Baktım ki işi çok, rahatsız etmedim. Ne yazık ki arkadaşımız Ermenice bilmiyor. Sizce ahbabınız haklı mıydı? Yarın ailece bir kır gezintisine gideceğiz. Çocukca sualler soruyorsunuz. O benden yaşça büyüktür. Bu gerçek herkesçe malumdur. Size açıkça söylüyorum. Bence bu yeni dergi bu konuda önemli bir rol oynayacaktır. Türkiye topraklarının bir kısmı Avrupa'da, bir kısmı ise Asya'dadır. Aslında, onun sözünde bir art düşünce yok. O adanın yüzölçümü üç kilometre karedir.

6. Թարգմանել թուրքերեն:

4/7 _____
5/18 _____
4/5 _____
9/10 _____
67% _____
382,33 _____
0,008 _____
17,1 _____

* * *

Այս հողի մեկ հինգերորդը: Թուրքիայի բնակչության տասնհինգ տոկոսը: Բանվորներից ամեն մեկը մի քանի ժամվա ընթացքում տեղափոխեց հարյուրական քար: Ամեն երեկո նա խմում է երկու - երեք բաժակ թեյ: Նրանցից ամեն մեկը ստացել է երկուական ավտոմեքենա: Նա ամեն օր լվանում է հարյուրական վերնաշապիկ, գուլպա և անդրավարտիք: Մեր համույթի մեկ երրորդը կոնսերվատորիան ավարտել է անցած տարի:

* * *

Մենք հանդիպեցինք քաղաքի կենտրոնում, և իմ ընկերն ինձ ծանոթացրեց Արմենի հետ: Փողոցում խոսելը իհարկե հարմար չէր: Ես ընկերներիս հրավիրեցի Աբովյան փողոցում գտնվող «Մոսկվա» ռեստորան: Կեսօրին այստեղ շատ մարդ չի լինում: Մենք նստեցինք այն սեղանի շուրջ, որը գտնվում էր սրահի վերջում: Քիչ անց մեզ մոտեցավ մատուցողը և տվեց ճաշացուցակը: Այնտեղ ամեն ինչ կար՝ տարբեր ապուրներ, ձկներ, կարկանդակներ, աղցաններ և խմիչքներ: Մենք պատվիրեցինք և մատուցողին խնդրեցինք անմիջապես բերել խնձորի սառը հյութ, քանի որ շատ շոգ էր: Երբ Արմենը վերջացրեց իր պատմությունը, ես վճարեցի հաշիվը, և մենք դուրս եկանք ռեստորանից:

Atasözleri

Utananın oğlu, kızı olmamış.
Kırk hırsız bir çıplağı soyamamış.
Baba oğluna bağ bağışlamış,
oğul babaya bir salkım üzüm vermemiş.
Yalancının evi yanmış kimse inanmamış.
Yılan sokan uyumuş, aç kalan uyumamış.
Eşeğe “cılve yap” demişler, tekme atmış.
Kartala bir ok deęmiş, yine kendi yeleęinden.
Kardeş kardeşi bıçaklamış, dönmüş yine kucaklamış.
Sabahtan karnını doyuran, küçükken evlenen aldanmamış.
Karga yavrusuna bakmış: “Benim ak pak evladım” demiş.

Կայուն բառակապակցություններ

1. Bununla beraber - սրանով հանդերձ, այսուհանդերձ
2. (benim için) hepsi bir - (ինձ համար) միևնույն է
3. Yerine getirmek - կատարել, իրագործել, իրականացնել
1. Yola koyulmak - ճանապարհ ընկնել
2. Çok hallerde - շատ դեպքերում, հաճախ
3. Her zamanki gibi - ինչպես միշտ
4. İki gözüm - սիրելիս, թանկագինս
5. Ne yazık - ափսոս
6. Akli fikri - խելքն ու միտքը

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԴԱՍ - ON İKİNCİ DERS

§ 72 Անկատար - անցյալ ժամանակաձև - Şimdiki Zaman Kipiyle Yapılan Hikâye Bileşik Zamanı

Թուրքերենի սահմանական եղանակի անկատար - անցյալ բաղադրյալ ժամանակաձևը ծագել է -i(yor)- ածանցի և -i(mek)- թերի օժանդակ բայի անցյալ ժամանակաձևի (-i + di) միավորման արդյունքում: Խոնարհումը կատարվում է երկրորդ խմբի դիմորոշ ածանցների միջոցով (բայափիմք +(i) yor+du+ դիմորոշ ածանց):

- Օր. (Ben) çalışıyordum. - (Ես) աշխատում էի: (Biz) yazıyorduk. - (Մենք) գրում էինք:
(Sen) geliyordun. - (Դու) գալիս էիր: (Siz) okuyordunuz. - (Դուք) կարդում էիք:
(O) konuşuyordu. - (Նա) խոսում էր: (Onlar) gülüyorlardı. - (Նրանք) ծիծաղում էին:

Dün lokantada yemek yiyordum. - Երեկ ճաշում էի ռեստորանում:

Vapurumuz Kıbrıs adasına yaklaşıyordu. - Մեր շոգեճանաչը մոտենում էր Կիպրոս կղզուն:

Անցյալ անկատարի հարցականը կազմվում է բայափիմքին - (i)yor - ածանցի, - mu - հարցական մասնիկի, - i (mek) - թերի օժանդակ բայի անցյալ ժամանակաձևի - (- i di) - և դիմորոշ ածանցների կցման միջոցով: Հարցական մասնիկի հետ արտաբերվելով և գրվելով՝ թերի օժանդակ բայի անցյալ ժամանակաձևի - i - հիմքը փոխվում է - y -ի, իսկ - di - ածանցի «i» ձայնավորը, ենթարկվելով ձայնավորների ներդաշնակության օրենքին, հնչյունափոխվում է «u» ձայնավորի (mu+y(du)+m, mu+y(du)+n, mu+y(du), mu+y(du)+k, mu+y(du)+nuz, mu+y(du)+lar)։

- Օր. (Ben) okuyor muydum? - (Ես) կարդո՞ւմ էի: (Biz) gidiyor muyduk? - (Մենք) գնո՞ւմ էինք:
(Sen) uyuyor muydun? - (Դու) քնո՞ւմ էիր: (Siz) yaklaşıyor muydunuz? - (Դուք) մոտենո՞ւմ էիք:
(O) yazıyor muydu? - (Նա) գրո՞ւմ էր: (Onlar) uyanıyor muydu(lar)? - (Նրանք) արթնանո՞ւմ էին:

Անցյալ անկատար ժամանակի ժխտականը կազմվում է հետևյալ կաղապարով՝ բայափիմք + ժխտման ածանց +yor+du+ երկրորդ խմբի դիմորոշ ածանց (al+mı+yor+du(m)):

- Օր. (Ben) almıyordum. - (Ես) չէի վերցնում: (Biz) almıyorduk. - (Մենք) չէինք վերցնում:
(Sen) almıyordun. - (Դու) չէիր վերցնում: (Siz) almıyordunuz. - (Դուք) չէիք վերցնում:
(O) almıyordu. - (Նա) չէր վերցնում: (Onlar) almıyorlardı. - (Նրանք) չէին վերցնում:

Հարցական - ժխտական ձևը կազմվում է բայահիմքին ժխտման և - yor - ածանցների կցման, - mu - հարցական մասնիկի, նրան կցվող թերի օժանդակ բայի հնչյունափոխված հիմքի, - di - ածանցի և երկրորդ խմբի դիմորոշ ածանցների միջոցով (al+mu+yor+/mu+y+du+m?):

- Օր. (Ben) gelmiyor muydum? - (Ես) չէի՞ գալիս: (Biz) gelmiyor muyduk? - (Մենք) չէի՞նք գալիս:
(Sen) gelmiyor muydun? - (Դու) չէի՞ր գալիս: (Siz) gelmiyor muydunuz? - (Դուք) չէի՞ք գալիս:
(O) gelmiyor muydu? - (Նա) չէ՞ր գալիս: (Onlar) gelmiyor(lar) muydu? - (Նրանք) չէի՞ն գալիս:

§ 73 - ki - վերջաձայն

- ki - ածանցը, կցվելով ներգոյական հոլովով դրված անուններին, կապական կիրառություն ունեցող բառերին, տեղի մակբայներին, կազմում է հիմնականում նախադասության որոշիչ անդամ հանդիսացող կառույցներ, որոնք նշում են որոշյալի գտնվելու տեղը: - ki - ածանցը չի ենթարկվում ձայնավորների ներդաշնակության օրենքին և իր վրա է կրում շեշտը:

- Օր. Bahçedeki çocuklar kitap okuyorlar. - Այգում գտնվող երեխաները գիրք են կարդում:
Buradaki masaları kim getirdi? - Այստեղի սեղանները ո՞վ բերեց:

Սակայն «անուն + daki (deki)» կառույցը կարող է առարկայանալ (գոյականանալ) և գտնվել շարահյուսական անկախ դիրքում (մասնավորապես դառնալ ենթակա):

- Օր. Evdekiler Armen'e darılmadı mı? - Տնեցիները Արմենից չնեղացա՞ն:

- ki - ածանցն անմիջականորեն (առանց ներգոյական հոլովի ածանցի) կցվում է գոյական անունների, որոնք ցույց են տալիս ժամանակ և կազմում ածական անուններ: Այս դեպքում էլ - ki - ածանցը չի ենթարկվում ձայնավորների ներդաշնակության օրենքին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կցվում է - dün, gün - բառերին:

- Օր. o zamanki - այն ժամանակվա dünkü - երեկվա bugünkü - այսօրվա

- ki - ածանցը, կցվելով ստացական դերանունների, նրանց վրա է տեղափոխում գոյականի առարկայական իմաստը: - ki - ածանց ստացած գոյականը նախադասության մեջ միաժամանակ մատնացույց է անում և՛ առարկան, և՛ այն դեմքը, որին այդ առարկան պատկանում է:

- Օր. Benim bisikletim eskidir, onunki yenidir. - Իմ հեծանիվը հին է, նրանը՝ նոր:

Benim kitaplarım burada, sizinkiler dershanededir. -
Իմ գրքերն այստեղ են, (իսկ) ձերը՝ դասարանում (են):

Benim saatim çok güzel çalışıyor. - Benimki de güzel çalışıyor. -
Իմ ժամացույցը շատ լավ է աշխատում: - Իմն էլ է լավ աշխատում:

benimki, bizimki, seninki, sizinki ձևերը կարող են կիրառվել «իմ կինը, իմ երեխան, իմ ամուսինը, քո կինը, քո ամուսինը, մերոնք, ձերոնք» և այլ իմաստներով:

- ki - ածանցը, կցվելով սեռական հոլովի ածանց ստացած գոյականի (գոյական + (n) in + ki...), մեկ բառով ցույց է տալիս թե՛ ենթատեքստից ընկալվող առարկան և թե՛ այդ առարկայի տիրոջը:

Օր. Armen'in kitabı bendedir, Arseninki masanın üstünde kaldı. -
Արմենի գիրքն ինձ մոտ է, իսկ Արսենինը մնաց սեղանի վրա:

Otomobilim tamirdedir, müdürünkü tamirden çıktı. -
Իմ ավտոմեքենան վերանորոգվում է, իսկ տնօրենինը վերնորոգումից դուրս եկավ:

Պատկանելիության ածանց ստացած գոյականներին կարող են կցվել սեռական հոլովի ածանց, - ki - ածանց և այլ հոլովական ածանց (այս դեպքում - ki - ածանցի և երկրորդ հոլովական ածանցի միջև հայտնվում է - n - հնչյունը):

Օր. Sizin görgünüz profesörümüzünkünden (profesör + ümüz + ün + ki + n + den) az(dır).
Ձեր փորձը մեր պրոֆեսորինից (մեր պրոֆեսորի փորձից) ավելի քիչ է:

§ 74 - arak (erek) -ով մակբայական դերբայներ

- arak (erek) - ածանցը, կցվելով բայահիմքին, կազմում է մակբայական դերբայներ (atmak - զգել, նետել, at + arak - զցելով, նետելով, gülmek - ծիծաղել, gül + erek - ծիծաղելով): Եթե բայահիմքը վերջանում է ձայնավորով, ապա նրա և - arak (erek) - ածանցի միջև առաջանում է - y - հնչյունը (okumak - կարդալ, oku + (y) arak - կարդալով, կարդալիս): Շեշտն ընկնում է - arak (erek) - ածանցի վրա: arak (erek)-ով կազմվող մակբայական դերբայները ցույց են տալիս երկրորդական գործողություն, որը կարող է նախորդել կամ համընթաց լինել գլխավոր գործողությանը՝ ծավալվելով անցյալում, ներկայում և ապագայում:

Օր. Doktor hastayı muayene ederek reçete yazdı. -
Բժիշկը, հիվանդին զննելով, դեղատոմս գրեց:

Osman buraya her gün sabah saat 11'de gelerek akşama kadar çalışır. -
Օսմանը, ամեն օր՝ առավոտյան ժամը 11-ին, գալով այստեղ, աշխատում է մինչ երեկո:

Ağacın altında uzanarak iki üç saat uyur. -
Շառի տակ մեկնվելով (նա) քնում է երկու - երեք ժամ:

Ժխտական ձևը, որ կազմվում է ժխտման ածանցի և (y) arak - (y) erek ածանցների կցմամբ, ավելի քիչ գործածական է: Շեշտն ընկնում է ժխտական ածանցին նախորդող վանկի վրա:

Օր. Sözlerini anlamayarak (anla + ma + y (arak) yüzüne baktım. -
Խոսքերը չհասկանալով (նրա) դեմքին նայեցի:

Համապատասխան լրացումը և լրացման լրացումը նախորդում են մակբայական դերբային:

Օր. Aşot bu kitapları getirerek burada bıraktı. - Աշոտը, այս գրքերը բերելով, այստեղ թողեց:

- arak -ով ձևին կարող է կցվել բացառական հոլովի ածանց. Bunu iste + (y) erek + ten yaptı.
- Սա ուզելով (իր կամքով) արեց:

- olmak - (լինել, հանդիսանալ) բայի հիմքից - arak -ով կազմված ձևը կարող է օգտագործվել «որպես» իմաստով (Müdür olarak - որպես տնօրեն, Buraya şef olarak değil, konuk olarak geldim. - Այստեղ եկա ոչ որպես պետ, այլ որպես հյուր):

§ 75 Ընդարձակ ներկա ժամանակի հաստատական և ժխտական ձևերի համատեղ կիրառումը

Ընդարձակ - ներկա ժամանակի հաստատական և ժխտական ձևերի համատեղ կիրառումը ցույց է տալիս գործողություն, որն անմիջականորեն նախորդում է ստորոգյալով արտահայտված գործողությանը: Այն իմաստով մոտ է - *ınca* -ով մակբայական դերբայի միջոցով կազմված ձևերին:

Օր. Arsen beni görür görmez nereye tayin edildiğimi sordu. -
Արսենն ինձ տեսնելուն պես (տեսած - չտեսած) հարցրեց, թե ուր եմ նշանակվել:
(Կամ Arsen beni görünce nereye tayin edildiğimi sordu):

Yağmur kesilir kesilmez çocuklar yeniden oynamaya başladılar. -
Անձրևը դեռ չկտրված՝ երեխաները սկսեցին նորից խաղալ:

§ 76 Ուղղակի խոսք - Araçsız Söz

Թուրքերենում ուղղակի խոսքը կազմվում է *demek* (ասել) բայի կամ նրա հիմքից կազմված *diye* (ասելով) մակբայական դերբայի և *sormak* (հարցնել), *cevap vermek* (պատասխան տալ) բայերի համատեղ կիրառության միջոցով:

Օր. Dostum dedi: “Cafer, gel parka gidelim”. -
Ընկերս ասաց. «Ջաֆեր, ե՛կ գնանք պարտեզ»:

Dostum: “Cafer, dedi, gel parka gidelim”. -
«Ջաֆեր, - ասաց ընկերս, - ե՛կ գնանք պարտեզ»:

Dostum: “Cafer, gel parka gidelim”, - dedi. -
Ընկերս. « Ջաֆեր, ե՛կ գնանք պարտեզ»,- ասաց:

Dostum sordu: “Cafer, benimle gelir misin?”. -
Ընկերս հարցրեց. «Ջաֆեր, դու կգա՞ս ինձ հետ»:

Cafer: “Ben gelmem” diye cevap verdi. -
Ջաֆերը պատասխանեց. «Ես չեմ գա»:

§ 77 Թվական անունների առարկայացում - գոյականացումը պատկանելիության ածանցների միջոցով

Թվական անունները, ստանալով առաջին և երկրորդ դեմքի հոգնակի թվի, երրորդ դեմքի եզակի թվի պատկանելիության ածանցներ և առարկայանալով-նյութականանալով, արտահայտում են որևէ ընդհանրության որոշակի մաս (խումբ, հատված) կամ էլ ամբողջություն, ընդհանրություն:

Օր. Gruptan üçümüz ayrıldık. - Խմբից երեքս առանձնացանք:

Թվականը, ստանալով պատկանելիության ածանց և գործածելով - *da, de* - շաղկապների (*bağlaç*) հետ, արտահայտում է ընդհանրություն, ամբողջություն:

Օր. Dördümüz de geldik. - Չորսս էլ եկանք: Beşi de odadadır. - Հինգն էլ սենյակում են:

hep, çok, az մակբայները, ստանալով պատկանելիության ածանց, նույնպես առարկայանում, նյութականանում են:

Օր. Çoğu gitti, azı kaldı. - Շատը գնաց, քիչը մնաց:

§ 78 kendi բառը

kendi բառը նախադասության մեջ կատարում է անձնական, ստացական և անդրադարձ դերանվան գործառույթ:

Պատկանելիության ածանց ստացած գոյական անունների հետ կիրառվելիս kendi բառը կատարում է ստացական դերանվան գործառույթ:

Օր. Kendi çantam - իմ (անձնական, սեփական) պայուսակը, պայուսակս
Kendi kitabın - քո (անձնական, սեփական) գիրքը, գիրքդ
Kendi paltosu - նրա (անձնական, սեփական) վերարկուն
Kendi kitabımız - մեր (անձնական, սեփական) գիրքը
Kendi çakınız - ձեր (անձնական, սեփական) դանակը
Kendi bisikletleri - նրանց (անձնական, ...) հեծանիվը
(կամ հեծանիվները)

Պատկանելիության ածանց ստացած գոյական անունները kendi բառի հետ կիրառվելիս կարող են դրվել նաև հոգնակի թվով:

Օր. Kendi kitaplarım - իմ (անձնական, սեփական) գրքերը
Kendi görüşleri - նրանց (սեփական) հայացքները

kendi բառը, ստանալով պատկանելիության ածանց, կատարում է անձնական դերանվան գործառույթ:

Օր. kendim - (ես) ինքս
kendin - (դու) ինքդ
kendi - (նա) ինքը
kendimiz - (մենք) ինքներս
kendiniz - (դուք) ինքներդ
kendileri - նրանք (իրենք)

- kendi -ն, ստանալով պատկանելիության և հոլովական ածանցներ, կատարում է անդրադարձ դերանվան գործառույթ:

Օր. Sen kendini üzme. - Դու մի՛ վշտացրու ինքդ քեզ:
O yalnız kendini seviyor. - Նա միայն իրեն է սիրում
Onlar kendilerinden emindirler. - Նրանք վստահ են իրենց վրա:

§ 79 madan (meden) -ով մակբայական դերբայը

madan (meden) ածանցով կազմված մակբայական դերբայն արտահայտում է «առանց» իմաստը: madan (meden) ածանցը շեշտ չի կրում:

Օր. almak - almadan (al + madan) - առանց վերցնելու
okumak - okumadan (oku + madan) - առանց կարդալու
Ben paltomu almadan gittim. - Ես առանց վերարկուս վերցնելու գնացի:

O, kitabı okumadan geri verdi. - Նա առանց գիրքը կարդալու վերադարձրեց:

Ծանոթագրություն. madan (meden) ածանցը evvel, önce (առաջ) բառերի հետ կիրառվելիս արտահայտում է «մինչև» իմաստը:

Օր. Ben para almaktan evvel (önce) babama sordum. - Ես մինչև փող վերցնելը հարցրի հայրիկիս:
Karen, bize gelmeden önce (evvel) telefon etti. - Կարենը մինչև մեզ մոտ գալը զանգահարեց:

Բառարան - Sözlük

adres - հասցե	görüş - հայացք
alıcı - գնորդ	güverte - տախտակամած
aşık (-ğı) - 1. սիրահար 2. աշուղ	hoşlanmak - դուր գալ
atmak - 1. գցել, նետել 2. կրակել	ısrar - պնդում, համառ պահանջ
avrat (-dı) - կնիկ /գրհ./	ısrar etmek - պնդել, համառել
ayakkabı (iskarpin) - կոշիկ	ışık (-ğı) - լույս
bağırmaq - բղավել	kalabalık - բազմություն
bakla - փոճով (լոբազգի)	kamara - նավախցիկ
banyo almak (yapmak) - լոգանք ընդունել	kanarya - դեղձանիկ
banyo - 1. լոգարան 2. լոգանք	kap kakak - խոհանոցի սպասք, ամանեղեն
banyo odası - լոգասենյակ	kaptan - կապիտան
bari - առնվազն, զոնե	keyif (-yfi) (heves) - տրամադրություն
birdenbire - հանկարծ	kıyı - ափ
bit (-ti) - ոջիլ	kızmaq - բարկանալ
bozmak - փչացնել	koltuk (-ğu) - 1. անութ, թևատակ
bozulmak - փչանալ	2. բազկաթոռ
bulvar - ծառուղի	köpük (-gü) - փրփուր
buzdolabı - սառնարան	kör - կույր
çakı - դանակ /գրպանի/	köşe - անկյուն
çakmak - 1. հրահան 2. ներգամել	küre - գունդ
çamaşır - սպիտակեղեն, լվացք	maalesef - ցավոք
çamaşır makinesi (makinası) - լվացքի մեքենա	macun - մածուկ
çevre - շրջակայք, միջավայր	maksat (-dı) - նպատակ, մտադրություն
dalmak - սուզվել	manzara - տեսարան
darılmak - նեղանալ /ինչ-որ մեկից/	muhakkak - անկասկած
demir atmak - խարիսխ գցել	musluk (-ğu) - ծորակ
durgun - հանդարտ	mutfak (-ğı) - խոհանոց
ecinni (cin) - չար ոգի, դև	münasebet (-ti) - կապ, հարաբերություն
emin olmak - վստահ լինել	neşe - ուրախություն
emir (emri) - հրաման	oğuşturmak - շփել, մերսել
emretmek - հրամայել	oksamak - շոյել
engin - լայնարձակ	olta - կարթ /ծկան/
er - 1. տղամարդ 2. զինվոր	oynaş - սիրեկան
ertesi - հաջորդ	öksürmek - հազալ
gaz - գազ	pantolon - տաբատ
gaz ocağı - գազօջախ	paralel - զուգահեռ
gömlük (-ği) - վերնաշապիկ	pırıl pırıl - վառ, պայծառ

rüya - 1. երազ 2. երազանք
 sabun - օձառ
 sanki - կարծես
 servis - սպասարկում
 sıkmak - սեղմել
 sohbet (-ti) - զրույց, խոսակցություն
 suvare - 1. երեկո
 2. երեկույթ (ներկայացման)
 şef - ղեկավար
 takip etmek - հետևել
 tamir - վերանորոգում
 taşınmak - տեղափոխվել

tayin - նշանակում
 tayin edilmek - նշանակվել
 tayin etmek - նշանակել
 terbiyeli - դաստիարակված
 üstelemek - պնդել, համառել
 üzme - վշտացնել
 yaklaşmak - մոտենալ
 yarış - մրցամարտ
 yeter - բավական (է)
 yıkanmak - լվացվել
 yunus (balığı) - դելֆին
 zaten (zati) - արդեն, առանց այդ էլ, այն էլ

Վարժություններ - Ալիստրմալ

1. Կարդալ և թարգմանել հայերէն:

Mavi Yolculuk

Sabahın erken saatiydi. Güneş yeni doğuyordu. Teknedeki herkes uyuyordu. Yalnız Esen Hanım uyanmış, çevredeki doyumsuz güzelliği seyrediyordu. Güneş, denizde yıkanıp çıkan altın bir küre gibiydi. Pırıl pırıl ışıklarıyla gecenin karanlığını yok etmişti. Altın bir gün başlıyordu. Sular masmaviydi. Tekne, arkasında bembeyaz köpükler bırakarak ilerliyordu. Tatlı bir rüzgâr Esen Hanımın saçlarını okşuyordu. Balıklar da güneşin ilk ışıklarıyla uyanmış, tekneyle yarış yapıyordu. Bu sırada Esen Hanım teknenin sağ yanında iki büyük yunus balığı gördü. Gözlerine inanmadı. Yunuslar teknenin peşine takılmış, suya bir dalıp bir çıkararak onları takip ediyorlardı. Esen Hanım manzaranın güzelliğinden sanki büyülenmiş, kendini tatlı bir rüyada sanıyordu. Yunuslar az sonra teknenin peşini bıraktılar. Engin, uçsuz bucaksız sularda kayboldular.

Teknede Esen Hanımdan sonra ilk uyanan Emin Bey oldu. Daha sonra Kemal Bey, Rail Hanım, Tekin Bey ve Gülay Hanım uyandılar. Tekin Bey uyanır uyanmaz “Çay hazır mı?” diye sordu. Emin Bey ona kızdı. “Yahu yemekten içmekten başka bir şey düşünmüyorsun. Hele gel de şu manzaranın güzelliğine bir bak.” dedi. Tekin Bey uykulu uykulu gözlerini oğuşturdu. Çevresine bir bakındı, sonra hemen kahvaltı hazırlamaya koyuldu. Kemal Bey teknenin çevresinde dolaşan balıkları gördü. Balıkları yakalamak için hemen oltalarını hazırladı.

Güneş iyice yükselmişti. Tekne açık denizde hızla yol alıyordu. Herkes uyandığı için kaptan motor gürültüsüne bakmadan tam yol ilerliyordu. Kemal Bey kaptanın hızlı gitmesinden hoşlanmadı. Teknenin kıyıya paralel, yavaş yavaş hareket etmesini istiyordu. Kaptana niçin hızlı gittiğini sordu. Kaptan “Deniz insanlara benzer. Genellikle geceleri uyur, sabahları durgun olur. Ama biraz sonra uyanırsa dalga çıkar. Açık denizde perişan oluruz. Bir an önce Kekova’ya varmak istiyorum.” dedi. Kemal Bey, kaptana hak verdi.

Esen Hanım ile Gülay Hanım kahvaltı hazırlamakta Tekin Beye yardımcı olmak istediler. Kemal Bey “Kahvaltıyı Kekova’da yapacağız. Siz şimdilik sıcak bir çay hazırlayın yeter.” dedi. Esen Hanım ve Gülay Hanım aşağıdaki kamaraya indiler. Mutfakta çay pişirdiler. Sonra güverteye servis yaptılar. Bu sırada tekne de Kekova’ya gelmişti. Kaptan sahile demir attı. Hepsi neşe içinde çaylarını içerken Kekova’da gezecekleri yerler üzerine sohbe başladılar.

* * *

Arkadaşım Sarkis bu günlerde yeni bir apartıman dairesine taşındı. Eski dairesi de pek fena değildi, fakat dört kişi iki odada biraz darlık çekiyorlardı. Taşındıktan sonra arkadaşım bu münasebetle bir parti vermek istedi. Babası bu gibi şeylerden pek hoşlanmaz, fakat Sarkis üstelemiş.

Geçen gün evde oturuyordum. Birden telefon çaldı. Açtım. Uzaklardan gelen gür bir ses “Harutyun, sen misin? - diye sordu, - Nasılsın bakalım?”. “Eh, şöyle böyle... Ne iyi ne de fena. İkinin ortası. Sizde ne var ne yok?”. “Dün sabah yeni eve taşındık, sana da onun için telefon ediyorum. Hem bu haberi sana vermek, hem de seni davet etmek için”. “Nereye?”. “Nereye olacak, yarın akşamki partiye”. O gün keyfim pek yerinde değildi, gelmeyeceğimi bildirdim, fakat Sarkis itirazımı dinlemedi. “Muhakkak geleceksin, yoksa darılırım, - dedi”. “Peki, - dedim, - mademki bu kadar ısrar ediyorsun, fakat çok kalmam, çünkü gerçekten rahatsızım”. Arkadaşım bana yeni adresini bildirdi ve ben de dün akşam trolleybüse binerek gittim ve evi elimle koymuş gibi buldum. İkinci kata çıkıp kapıyı vurdum (kapının üzerindeki zil nedense işlemedi). Sarkis kapıyı açıp elimi sıktı. “Tam vaktinde geldin, - diye beni selâmladı. - Henüz başka konuk yok, gel sana dairemizi göstereyim”.

Geniş bir holde bulunuyorduk. Paltomu çıkarıp astım. Sağ taraftaki kapıdan mutfığa girdik. Mutfakta buzdolabı, fırın, gazocağı, masa ve mutfak dolapları vardı. Mutfaktan banyoya geçtik. Orada çamaşır makinesinden başka hemen - hemen hiç bir şey yok gibi. Aynalı küçük dolapta ise sabun, diş macunu ve diş fırçaları gibi ufak - tefek şeyler bulunuyordu.

Dört odadan ibaret olan dairenin iki odasını gezdim. Yatak odasındaki elbise dolabını açıp şöyle bir baktım. Sarkis genellikle güzel giyinir, üstü başı daima düzgündür. Nitekim gardırobu yeni model pantolonlar, ceketler, gömlekler, çoraplar ve ayakkabılarla doluydu.

Oradan da yemek odasına geçip koltuklardan birine oturarak elime bir dergi aldım. Diğer misafirler gelene kadar canım biraz okumak istedi.

* * *

Çocuk Duası

Her sabah erken
Uyanırım ben,
Derin gönülden
Elhamdülillah.

Bülbüller sazda,
Güller niyazda,
Derim namazda,
Elhamdülillah.

Şimdi gün doğar,
Der hep insanlar,
Vazifemiz var:
Elhamdülillah.

Buyurur hünkâr,
Altun anahtar,
Mektebi açar,
Elhamdülillah.

Her sabah erken,
Düdük ötmeden
Sınıftayım ben;
Elhamdülillah.

/Ziya Gökalp/

2. Բազմակետերի փոխարեն տեղադրել ածանցներ և թարգմանել:

Her sabah erken kalkı... _____
bu sabah yine saatin sesiyle erken kalk... _____
balkona çık ... _____
derin derin nefes al ... _____
bahçedeki kuşlar ötüyor... _____
karısı uyan... _____
gözlüğünü arı... _____

3. Վերլուծել ու թարգմանել հետևյալ նախադասությունները:

Oğlanın boyu babasınınkini geçti. Şu odadakileri de çağırırlar. Sizinkilere söyle: bizi rahat bıraksınlar. Ben evliyim, İzmir'deki ablam ise hâla bekârdır. Ben bunu tercih ettim, itirazın yoksa alayım. Sense öbür masanın üstündekini al da birbirimize darılmayalım. Köyümüzün nüfusu onlarınki kadardır. Gerçi mıntakamızdaki hastanelerden birkaçı fena bir haldedir. Bir ev hanımının hizmetçisiyle böyle konuşmaya hakkı yoktur, çünkü nihayet hizmetçi de bir insan. Aram bu yerdekilerin hepsini de ayrı ayrı pek iyi tanıyor.

4. Կազմել նախադասություններ՝ հետևելով օրինակին:

4.1 Çocuk ağlıyor. - Çocuk bana bakıyor. - Çocuk ağlayarak bana bakıyor.

Ağzını kapa. - Öksür. _____

Planlı çalıştı. - İyi not aldı. _____

Koştı. - Gitti. _____

Yazınız. - Çalışınız. _____

Bağırды. - İçeri girdi. _____

Güldü. - Geçti. _____

4.2 Berna Hanım uyanır uyanmaz hemen kahvaltıyı hazırladı. -
Berna Hanım uyanınca hemen kahvaltıyı hazırladı.

Esen Hanım mektubu yazar yazmaz hemen postaya attı.

Lütfi Bey araba bozulur bozulmaz hemen aşağı indi.

Araba yapılır yapılmaz hemen yola koyuldular.

Benzin biter bitmez araba hemen durdu.

Çocuklar yatağa girer girmez hemen uyudular.

4.3 Çantasını almadı. - Okula gitti. - Çantasını almadan okula gitti.

Arabaya binmedim. - Çarşıya gittim. _____
Kahvaltımı yapmadım. - Evden çıktım. _____
Ahmed'i görmedim. - Yanına gittim. _____
Sormam. - Öğrenirim. _____
Ahmet bize haber vermedi. - Gitti. _____
Baban bu evi görmedi. - Aldı. _____
Hiç durmuyor. - Ders çalışıyor. _____
Oğlum banyo yapmadı. - Kahvaltı yaptı. _____

5. Նախադասությունները գրել ուրիշի ուղղակի խոսքով:

Benimle gelir misin? - Hayır gelmem.

“Benimle gelir misin?” diye sordum. - “Hayır, gelmem” diye cevap verdi.

Ne yapıyorsun? - Eve gidiyorum. _____
O okula gidecek mi? - Evet gidecek. _____
Ne istiyorsunuz? - Kahve istiyoruz. _____
Beni çok beklediniz mi? - Bir saat kadar. _____
Armen ile gelir misin? - Hayır gelmem. _____
Postaneye kimler gidiyor? - Postaneye biz gidiyoruz. _____
Kim paket bölümüne gidiyor? - Ben paket bölümüne gidiyorum. _____

6. Նախադասությունը գրել անցյալ անկատար ժամանակաձևով:

Teknedeki herkes uyuyor. _____
Lusine güneşi seyrediyor. _____
Tatlı bir rüzgâr esiyor. _____
Tekne hızlı ilerliyor. _____
Aram hâlâ uyuyor. _____
Karine çay pişiriyor. _____
Nerses, balık yakalıyor. _____
Maro güneşleniyor. _____

7. Նախադասությունները դարձնել հարցական:

Selin Hanım geliyordu. _____
Tekne Antalya'ya doğru gidiyordu. _____
Kemal Bey balık tutuyordu. _____
Emin Bey erken kalkardı. _____
Tekne hızlı gidiyordu. _____

Ergün Bey İzmir'e gidecek. _____

Biz Mavi Yolculuğa çıkmamışız. _____

Kaptan sualtı şehrinin görmüş. _____

Emin Bey kaleye çıkacak. _____

Gülay Hanım güneşlenmiş. _____

8. Հետևյալ նախադասությունները թարգմանել թուրքերեն:

Արձակուրդներին ի՞նչ էիր անում: Հանգստանում էի, թենիս էի խաղում և գրքեր կարդում: Վերջին օրերին սկսել եմ գիրք գրել: Արմենն այն ժամանակ ապրում էր այս փոքրիկ տանը: Հիմա որտե՞ղ է նա ապրում: Ես թակեցի դուռը և մտա ներս: Ինչ-որ տարեց մարդ կանգնել էր սենյակի մոտ և գիրք էր կարդում: Նա, շեղվելով ընթերցանությունից, նայեց ինձ և հարցրեց. «Ի՞նչ եք ուզում»: Մի՞թե դուք երեկ սահնակ չէիք քշում: Ո՛չ, չէինք քշում: Երեկ շատ ցուրտ էր: Նա 1954 թվականին ապրում էր Երևան քաղաքում: Մեկ տարի հետո ես նույնպես եկա այնտեղ, սակայն նա արդեն գնացել էր: Ես ոմանց հարցրի նրա մասին, սակայն ոչ ոք ոչինչ չգիտեր: Նա ինչ-որ բան ասաց, սակայն նրա խոսքերը հասկանալ հնարավոր չէր, քանի որ խոսում էր ցածրաձայն: Ձեզնից ո՞վ էր ավելի լավ սովորում: Ես ավելի աշխատասեր էի, քան նա: Երեկ առավոտյան մենք գնացինք գրախանութ և անձամբ մեզ ու մեր ընկերների համար գնեցինք անհրաժեշտ գրքեր: Ժամը չորսին մենք վերջացրինք այդ գործը և գնացինք կինո:

* * *

Թուրքիան նախկինում գյուղատնտեսական երկիր էր: Այստեղ ավելի քան 26 միլիոն մարդ զբաղվում էր հողագործությամբ և անասնապահությամբ:

Հողագործների հիմնական մասը քիչ հող ունեցող կամ ընդհանրապես հող չունեցող գյուղացիներն էին: Աղքատ գյուղացիները մեքենաներ չունեին: Թուրքիայում լավ են աճում գարին, ցորենը, եգիպտացորենը և այլ հացահատիկային կուլտուրաներ: Այգիներում աճեցվում են խաղող, խնձոր, տանձ և այլ մրգեր:

Atasözleri

Bana göre hava hoş.
Çok gülen çok ağlar.
Para veren altın bulsun.
Ali için Veli'yi asmazlar.
Armut ağacı elma vermez.
Her çiçeğin bir kokusu var.
Arslan yatağından belli olur.
Bitli baklanın kör alıcısı olur.
Armut, ağacından uzak düşmez.
Dinini pula satan, dinden de olur, puldan da.
Yemeğini komşudan bekleyen çok vakit aç kalır.

Կայուն բառակապակցություններ

1. Hiç değilse (olmazsa) - ծայրահեղ դեպքում, գոնե
2. Şöyle böyle - հենց այնպես, այսպես-այնպես
3. Ufak tefek - մանրմունր
4. Üst baş - արտաքին տեսք, հագուկապ
5. Yedisinden yetmişine kadar - մեծից փոքր
6. Dolup boşalmak - լցվել (անընդհատ), լցվել դատարկվել
7. Kimin nesi? - ո՞վ է սա
8. İster gelir, ister gider - կուզի՝ կգա, կուզի՝ կգնա
9. Uçsuz bucaksız - անծայրածիր
10. Mademki - կարծում եմ, որ..., քանի որ
11. Peş peşe - իրար հետևից
12. Peşinden gitmek - (մեկի) հետևից գնալ
13. Peşine düşmek - (մեկին) շարունակ հետևել, պոկ չգալ
14. Peşini bırakmamak - մեկին կրնկակոխ հետևել (փեշը բաց չթողնել)

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԴԱՍ - ՕՆ ՄՇՄՆԸ DERS

§ 80 dık և acak - ով գործողության անունները

- dık և acak - ածանցներով կազմվող գործողության անունները ունեն սահմանական եղանակի ժամանակային հատկություններ: - dık (dık, duk, dük) - ով կազմվող ձևն արտահայտում է գործողություն, որը տեղի է ունեցել անցյալում կամ տեղի է ունենում ներկայում: - acak - ով կազմվող ձևն արտահայտում է գործողություն, որը պետք է տեղի ունենա ապագայում: - dık և acak - ով կազմվող գործողության անուններով ձևավորվող կառույցները հայերեն են թարգմանվում դերբայական դարձվածների կամ բարդ ստորադասական նախադասության միջոցով:

- dık և acak - ով գործողության անուններին կցվում են պատկանելիության ածանցներ (al + dık + ım = aldıđım - վերցրած): - dık և acak - ածանցներով կազմված և պատկանելիության ածանցներ ստացած գործողության անուններին կարող են կցվել նաև հոլովական ածանցներ (al + dık + ım + ı = aldıđımı, al + dık + ım + a = aldıđına, al + dık + ı + n + dan = aldıđından...):

Գործողության կատարողն արտահայտվում է դերանվան կամ սեռական հոլովով դրված գոյականի միջոցով:

Եթե բայահիմքը վերջանում է խուլ բաղաձայնով, - dık - ածանցի - d - հնչյունը փոխվում է - t -ի. (yaptıđım, yaptıđın, yaptıđı, yaptıđımız, yaptıđınız, yaptıkları):

Եթե բայահիմքը վերջանում է - e, i, ö, ü - հնչյուններով, ձայնավորների ներդաշնակության օրենքի համաձայն, - acak - ածանցի - a - ձայնավորը հնչյունափոխվում է - e -ի (acak → ecek):

Օր.	(benim) geldiđim	gelmediđim	geleceđim	gelmeyeceđim
	(senin) geldiđin	gelmediđin	geleceđin	gelmeyeceđin
	(onun) geldiđi	gelmediđi	geleceđi	gelmeyeceđi

(bizim) geldiğimiz	gelmediğimiz	geleceğimiz	gelmeyeceğimiz
(sizin) geldiğiniz	gelmediğiniz	geleceğiniz	gelmeyeceğiniz
(onların) geldikleri	gelmedikleri	gelecekleri	gelmeyecekleri

(Benim) aldığım kitap - իմ վերցրած գիրքը (վերցրածս գիրքը)
 (Senin) almadığın defter - քո չվերցրած տետրը (չվերցրածդ տետրը)
 (Onun) alacağı defter - նրա գնելու տետրը

(Bizim) almayacağımız ev - մեր չգնելու տունը (տունը, որ մենք չենք գնելու)
 (Sizin) almadığınız saati - ձեր չվերցրած ժամացույցը
 (Onların) alacakları parayı - նրանց վերցնելու փողը (հայց. հոլ.)

Aldığım mektubu okudum. - Ստացած նամակը կարդացի:
 Ali benim kalacağımı söyledi. - Ալին ասաց, որ ես մնալու եմ:
 Andranik kaldığımı söyledi. - Անդրանիկն ասաց, որ ես մնում եմ (մնացել եմ):

Oğlunuzun devam ettiği okulda bir zamanlar ben de okudum. -
 Ձեր որդու դպրոցում (ուր այժմ շարունակում է հաճախել ձեր որդին),
 ժամանակին ես նույնպես սովորել եմ:

Եթե նախադասության ծավալուն որոշիչ անդամի կազմում գտնվող դերբայը ցույց է տալիս ապագայում տեղի ունեցող գործողություն, գործածվում է ապառնի դերբայը: Դերբայի - k - խուլ բաղաձայնը ձայնեղանում է բացառությամբ հոգնակի թվի երրորդ դեմքի:

Նման կառույցները, ըստ նպատակահարմարության, կարող են հայերեն թարգմանվել ինչպես դերբայական դարձվածների, այնպես էլ երկրորդական նախադասությունների միջոցով: Շեշտն ընկնում է պատկանելիության մասնիկի վրա:

Օր. Öğretmen talebelerin okuyacakları kitapların listesini hazırladı. -
 Ուսուցիչը պատրաստեց այն գրքերի ցուցակը, որոնք կարդալու են աշակերտները:

Heyetin gideceği uçak hazırdır. -
 Ինքնաթիռը, որով մեկնելու է պատվիրակությունը, պատրաստ է:

Benim okuyacağım kitap. - Գիրքը, որ ես կարդալու եմ: (իմ կարդալու(իք) գիրքը):
 Senin okuyacağın kitap. - Գիրքը, որ դու կարդալու ես: (քո կարդալու գիրքը):
 Onun okuyacağı kitap. - Գիրքը, որ նա կարդալու է: (նրա կարդալու գիրքը):

Bizim okuyacağımız kitap. - Գիրքը, որ մենք կարդալու ենք: (մեր կարդալու գիրքը):
 Sizin okuyacağınız kitap. - Գիրքը, որ դուք կարդալու եք: (ձեր կարդալու գիրքը):
 Onların okuyacakları kitap. - Գիրքը, որ նրանք կարդալու են: (նրանց կարդալու գիրքը):

- dik (dik, duk, dük / tık, tik, tuk, tük) - ածանց և համապատասխան պատկանելիության ածանց ստացած բայահիմքի և ներգոյական հոլովով դրված - hal (վիճակ) - բառի միջոցով կազմվում է ընդարձակ գիջման պարագայով նախադասություն: Նախադասության ընդարձակ գիջման պարագան դրվում է նախադասության սկզբում:

Օր. Çok çalıştığım halde yorulmadım. - Թեև շատ աշխատեցի, (բայց) չհոգնեցի:

Ben üşüdüğüm halde içeri girmiyorum. -
 Չնայած ես մրսում եմ, այնուամենայնիվ ներս չեմ մտնում:

- *dık* և *acak* -ով գործողության անունները *zaman* (ժամանակ) բառի հետ կիրառվելիս նախադասության մեջ ժամանակային առումով մտցնում են հստակություն: Ժամանակային առումով հստակություն է մտցվում, երբ - *dık* - ածանցին կցվում է ներգոյական հոլովի ածանց (*gel + dık + im + de = geldiğimde...*):

Օր. *Öğretmen geleceği zaman - ուսուցչի գալու ժամանակ*
Armen geleceği zaman - Արմենի գալու ժամանակ
Dün okula geldiğimde, sen yoktun. - Երեկ, երբ ես եկա դպրոց, դու չկայիր:

Dün akşam odaya girdiğim zaman sen uyuyordun. -
Երեկ երեկոյան, երբ ես սենյակ մտա, դու քնած էիր:

Ders çalıştığı zaman iyi not alıyor. -
Դասը սովորած ժամանակ լավ գնահատական է ստանում:

- *dık / acak* - ածանցներով կազմված գործողության անունները *için* հետադրության հետ նախադասությանը հաղորդում են պատճառային իմաստ:

Օր. *Ben kaldığım için - այն պատճառով, որ ես մնացել եմ (մնալուս պատճառով)*
Sen kalacağın için - այն պատճառով, որ դու մնալու ես

Babam dün geldiği için ben evden çıkmadım. -
Քանի որ երեկ հայրս եկավ, ես տնից դուրս չեկա (Երեկ հորս գալու պատճառով ես տնից դուրս չեկա):

- *dık* -ով գործողության անունը *göre* և *gibi* հետադրությունների հետ կազմում է ընդարձակ միջանկյալ նախադասություն: Նման նախադասությունները հիմնականում կազմվում են *bildirmek, haber vermek, söylemek, zannetmek, düşünmek, işitmek, hissetmek, duymak* բայերի միջոցով:

- *dık* -ով գործողության անունը *göre* ձևի հետ կիրառվելիս ստանում է տրական հոլովի ածանց, իսկ *gibi* հետադրության հետ կիրառվելիս հոլովական ածանց չի ստանում:

Օր. *Benim söylediğime göre - ինչպես ես ասացի (ասածիս համաձայն)*
Senin dediğin gibi - ինչպես դու ասացիր (ասածիդ պես)

- *dık* - ածանցով գործողության անունը *olmak* (լինել) և *bulunmak* (գտնվել) բայերի հետ կիրառվելիս կազմում է նախադասության ծավալուն լրացում:

Օր. *Ben onun bulunduğu yeri bilmiyorum. - Ես չգիտեմ, թե նա որտեղ է գտնվում:*

Dershane de altı masa olduğunu bilmiyor musun? -
Դու չգիտե՞ս, որ դասարանում կա վեց սեղան:

Biz Nerses'in iki kardeşi olduğunu işitmemişiz. -
Մենք չենք լսել, որ Ներսեսն ունի երկու եղբայր:

§ 81 Կարելիության և անկարելիության ձևերը - Yeterlik Bildiren Bileşik Eylemler

Կարելիության ասպեկտը, որն արտահայտում է գործողության կատարման հնարավորություն, կազմվում է բայահիմքին - a, e (ya, ye) - ածանցների և bilmek (իմանալ) բայի կցման միջոցով:

Օր.	almak	al - a - bilmek	alabilmek - կարողանալ վերցնել
	gelmek	gel - e - bilmek	gelebilmek - կարողանալ գալ
	okumak	oku - ya - bilmek	okuyabilmek - կարողանալ կարդալ

Բաղադրյալ բայերի դեպքում կարելիության ձևը կազմվում է օժանդակ բայի հիմքի հետ:

Օր.	hasta olmak	hasta ol - a - bilmek	hasta olabilmek - կարողանալ հիվանդանալ
	rica etmek	rica ed - e - bilmek	rica edebilmek - կարողանալ խնդրել

Կարելիության ձևը կարող է կազմվել ոչ միայն հաստատական, այլ նաև ժխտական ձևում:

Օր.	almak - almamak - almayabilmek - կարողանալ չվերցնել
	gelmek - gelmemek - gelmeyebilmek - կարողանալ չգալ

Անկարելիությունը, որն արտահայտում է գործողության կատարման հնարավորության բացակայությունը, կազմվում է բայահիմքին - ama, eme (yama, yeme (ծայնավորներից հետո)) մասնիկների կցման միջոցով:

Օր.	almak	al - ama - mak	alamamak - չկարողանալ վերցնել
	gelmek	gel - eme - mek	gelememek - չկարողանալ գալ
	okumak	oku - yama - mak	okuyamamak - չկարողանալ կարդալ

Բաղադրյալ բայերի դեպքում անկարելիության ձևը կազմվում է օժանդակ բայի հիմքից:

Օր.	hasta olmak - hasta olamamak - չկարողանալ հիվանդանալ
	rica etmek - rica edememek - չկարողանալ խնդրել

Ըստ էության, կարելիություն արտահայտող բաղադրյալ բայերը կարող են խոնարհվել տարբեր եղանակներով և ժամանակներով:

Օր.	(Ben) bu kitabı okuyabilirim. - (Ես) այս գիրքը կարող եմ կարդալ:
	Sevebileceğim kadın yok (S.K. Aksal). - Չկա կին, որին կարողանալու եմ սիրել:
	Gelebilsen önceden telefon ederim. - Եթե կարողանամ գալ, նախօրոք կզանգահարեմ:

§ 82 rağmen, doğru, göre, karşı հետադրությունները

- rağmen (karşın) - հակառակ, չնայած, doğru - դեպի, göre - ըստ, համաձայն, karşı - դեմ, դիմաց, ընդդեմ հետադրություններից առաջ գոյականներն ու դերանունները ստանում են տրական հոլովի ածանց:

Օր.	Verdiği söze rağmen gelmedi. - Չնայած խոստացել էր, այնուամենայնիվ չեկավ:
	(Հակառակ տված խոստմանը՝ չեկավ):

Eve doğru gidiyoruz. - Մենք գնում ենք դեպի տուն:

Saat beşe doğru hava açıldı. - Ժամը հինգի մոտ եղանակը բացվեց:

Onun söylediğine göre her şey iyi olacak. - Նրա ասածի համաձայն՝ ամեն ինչ լավ է լինելու:

Size karşı konuştu. - Նա խոսեց ձեր դեմ:

Bahçeye karşı oturuyoruz. - Մենք ապրում ենք այգու դիմաց:

§ 83 zarf, üzer(i) բառերի կապական կիրառությունը

zarf (ծրար, տուփ) գոյական անունը կապական կիրառության դեպքում, զուգակցելով այնպիսի գոյականների հետ, որոնք արտահայտում են ժամանակային իմաստ, նշանակում է «ընթացքում, ժամանակում»:

Օր. Ben bu işi iki saat zarfında yaptım. - Ես այս գործը կատարեցի երկու ժամվա ընթացքում:

üzer(i) (վրա, մակերես) բառը գոյականների և դերանունների հետ կիրառվելիս կատարում է կապական դեր և նշանակում է «վրա»: üzeri բառի - i - հնչյունը երրորդ դեմքի եզակի թվի ածանց է: Լինելով üst բառի հոմանիշը՝ կիրառվում է այն դեպքում, երբ կապն անմիջականորեն չի բխում երկու առարկայի շփումից: üzeri-ն ստանում է հոլովական ածանց (üzeri + n + de = üzerinde, üzeri + n + den = üzerinden...):

Օր. Uçak şehrin üzerinde yarım saat dolaştı. - Ինքնաթիռը կես ժամ պտտվեց քաղաքի վրա:
Üzerinize düşen mesuliyet büyüktür. - Չեզ վրա ընկած պատասխանատվությունը մեծ է:
Bu hadisenin üzerinden çok zaman geçti. -
Այդ իրադարձությունից հետո անցել է բավական շատ ժամանակ:

§ 84 ken մակբայական դերբայի ածանցը

ken մակբայական դերբայի ածանցը կարող է կցվել թերի օժանդակ բայի - i - հիմքին և գոյական կամ ածական անունների հետ արտահայտել ժամանակի պարագա:

iken-ով մակբայական դերբայի արտահայտած գործողության ժամանակը համաժամանակյա է ստորոգյալով արտահայտված գործողությանը: Ներգոյական հոլովով դրված գոյականների հետ կիրառվելիս միասին գրության և արտաբերության դեպքում թերի օժանդակ բայի - i - հիմքը հնչյունափոխվում է - y -ի:

Օր. Ben hasta iken (hastayken) arkadaşım evimize geldi. -
Երբ ես հիվանդ էի, ընկերս եկավ մեր տուն:
Sen daha sokaktayken, Mehmet telefon etti. -
Երբ դու դեռ փողոցում էիր, Մեհմեդը զանգահարեց:
Biz yoldayken şiddetli bir yağmur başladı.
Երբ մենք ճանապարհին էինք, հորդ անձրև սկսվեց:

iken մակբայական դերբայով կազմվում են զիջական իմաստով կառույցներ, որևէ երևույթ կամ վիճակ մեկ այլ երևույթի կամ վիճակի հետ համադրելու, ինչպես նաև հակադրելու նպատակով:

Օր. Samsun bundan kırk yıl evvel küçük kasabayken, şimdi Türkiye'nin büyük ve güzel şehirlerden biri olmuştur. -
Թեև սրանից քառասուն տարի առաջ Սամսունը փոքրիկ մի գյուղաքաղաք էր, սակայն այժմ դարձել է Թուրքիայի մեծ և գեղեցիկ քաղաքներից մեկը:

ken ածանցը կարող է կցվել նաև տարբեր բայերի խոնարհված ձևերին (yapar + ken = yaparken, veriyor + ken = veriyorken, gitmiş + ken = gitmişken, konuşacak + ken = konuşacakken):

§ 85 Անցյալ ժամանակի դերբայ - Geçmiş Zaman Ortacı

Անցյալ ժամանակի դերբայը, պահպանելով իր բայական հատկանիշները, իբրև համառոտ որոշիչ սովորաբար արտահայտում է անփոփոխ մշտական հատկանիշ:

- Օր. ağarmak - ճերմակել
eskimek - հնանալ
çürümek - նեխել
- ağarmış saçlar - ճերմակած մազեր
eskimiş palto - հնացած վերարկու
çürümüş meyva - նեխած միրգ

